

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Խ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱԿԱՐԺԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԿՐՏՉՅԱՆ ՏԱԹԵՎԻԿ ԶՈՎԻԿԻ

ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆԱԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ՉԱՐԳԱՑՄԱՆ
ՄԻՋՈՑՆԵՐԸ ԱՎԱԳ ԴՊՐՈՑԻ ԲՆԱԳԻՏԱՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ՀՈՍՔՈՒՄ

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

ԺԳ.00.01. «Մանկավարժություն ան տեսություն և պատմություն»

մասնագիտություն

մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական

աստիճանի հայցման

Գիտական ղեկավար՝

Մանկավարժական գիտությունների
թեկնածու ,

դոցենտ Մ.Ս. ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԵՐԵՎԱՆ – 2016

ԲՈՎԱՆՐԱԴՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱՃՈՒԹՅՈՒՆ 3

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ. ԱՆՃԻ ԱՉԳԱՅԻՆ ԻՆՔՆԱԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ՉԱՐԳԱՑՄԱՆ ԳԻՏԱՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ..... 14

1.1. «Ազգ», «Էթնոս» հասկացողությունների փիլիսոփայական, սոցիալ-մշակութային և հոգեբանական մեկնաբանումը 14

1.2. «Ազգային ինքնագիտակցություն» հասկացության վերլուծությունը 28

1.3. Հայ ազգային-հոգևոր նկարագիրը պատմաբանական, ազգագրական, հոգեբանական և սոցիալ-մշակութային տեսանկյուններից 41

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ. ԱՎԱԳ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԱՉԳԱՅԻՆ ԻՆՔՆԱԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ՉԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԵՂԻՐԸ ԱՉԳԱՅԻՆ ԴԱՍԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ..... 54

2.1. Անձի ազգային ինքնագիտակցության զարգացման գործընթացի առանձնահատկությունները, բովանդակային բաղադրատարրերը 54

2.2. Ուսումնական առարկաների և դասղեկի ժամերի հնարավորություններն ավագ դպրոցականների ազգային ինքնագիտակցության զարգացման գործընթացում 67

2.3. Գրականությունը՝ որպես անձի ազգային ինքնագիտակցության զարգացման առավել արդյունավետ միջոց 80

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ. ԱՎԱԳ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԱՉԳԱՅԻՆ ԻՆՔՆԱԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ՉԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂԿԱՑ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԵՎ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՓՈՐՁԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ..... 94

3.1. Ավագ դպրոցի բնագիտամաթեմատիկական հոսքում սովորողների ազգային ինքնագիտակցության զարգացվածության առկա մակարդակների վերլուծությունը 94

3.2. Ավագ դպրոցականների ազգային ինքնագիտակցության զարգացման մեթոդները և միջոցները 112

3.3. Ավագ դպրոցականների ազգային ինքնագիտակցության զարգացմանն ուղղված փորձարարական աշխատանքների վերլուծությունը 125

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ 139

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 141

ՀԱՎԵԼՎԱՃԵՐ

Ն Ե Ր Ա Շ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Չետագոտության արդիականությունը: Քաղաքական, տնտեսական, սոցիալ-մշակույթային և ժողովրդագրական տեղաշարժերի արդի ժամանակաշրջանում առանձնահատուկ նշանակություն են ստանում ազգային կյանքին, ազգային-մշակույթային արժեքներին և ազգային ինքնությունը վերաբերող հիմնահարցերը: Կյանքի բոլոր ոլորտներում իրականանում են գլոբալացման անշրջելի գործընթացներ, որոնք աստիճանաբար հանգեցնում են համամարդկային գլոբալ ինքնության ձևավորման: Այս պարագայում տարբեր ազգերի համար կարևոր խնդիր են աճող սերնդի կողմից ազգային ինքնության գիտակցումը, ազգային դիմագծի պահպանումը, ազգային-հոգևոր արժեքների ճանաչումը, յուրացումն ու իմաստավորումը: Ազգային ոգու, բնավորության, ինքնության գիտակցումը, ազգային նկարագրի և խորհրդանիշների իմացությունն անհրաժեշտ են նաև այլ ազգերի ներկայացուցիչների նկատմամբ հարգանքի ու հանդուրժողականության, միջմշակույթային երկխոսության, բազմամշակույթային աշխարհում ապրելու համար:

«Ովքե՞ր ենք մենք», «որտե՞ղից ենք գալիս», «ո՞րն է մեր՝ որպես ինքնուրույն էթնիկ հանրության առաքելությունը», «որո՞նք են մեր տեղն ու դերը համամարդկային քաղաքակրթության մեջ» հարցադրումները, անտարակույս, հետաքրքրում են յուրաքանչյուր անհատի. այս հարցերի պատասխանները տրվում են փիլիսոփայության, սոցիոլոգիայի, էթնիկական հոգեբանության, սոցիալական հոգեբանության, սոցիալական մարդաբանության և այլ գիտությունների շրջանակներում:

Այնուհանդերձ ազգային պատկանելության գիտակցման, իր ազգի պատմության և մշակույթի նկատմամբ արժեքային վերաբերմունքի, հարգանքի ու պատասխանատվության զգացման, ազգային ինքնագիտակցության զարգացման խնդիրները հիմնականում լուծվում են հանրակրթության բնագավառում:

Չասարակական-քաղաքական փոփոխությունների և պատմաքաղաքական իրադարձությունների հորձանուտում նոր

խնդիրներն են դրվում ազգային դպրոցի առջև, որը գտնվում է կրթական բարեփոխումների փուլում: Կրթական համակարգի առա-

ջանցիկ զարգացումն ապահովող խնդիրներն են ոչ միայն ազգային գաղափա-

րախոսության գերակամիտումներից բխող ռազմավարությունների իրագործումը, ազգային վերածնունդը խորհրդանշող արժեքների վերագնահատումը, ազգային դիմագծի ձևավորումը, այլև կրթության այնպիսի մակարդակի ապահովումը, որը ենթադրում է միջազգային չափանիշներին համապատասխան կրթության որակ, բովանդակություն, կառավարման և ուսուցման նորագույն տեխնոլոգիաների կիրառում: Նշված գործոններն արդիական են դարձնում աճող սերնդի ազգային ինքնագիտակցության զարգացումը համաշխարհայնացման, աշխարհաքաղաքական տեղաշարժերի և միջազգային հանրությանն ինտեգրման համատեքստում:

Միաժամանակ տեղեկատվական և հեռահաղորդակցական տեխնոլոգիաների հարածուն զարգացման, համաշխարհայնացման հետ կապված՝ նվազում է աճող սերնդի հետաքրքրությունն ազգային ակունքների, պատմության, լեզվի, մշակութային արժեքների, ազգային ավանդույթների, սովորույթների նկատմամբ:

Ժամանակակից մանկավարժության կարևորագույն խնդիրն է սովորող երիտասարդության մեջ արժեքային վերաբերմունք ձևավորել ազգի, նրա մշակույթի նկատմամբ, նպաստել ազգային ինքնագիտակցության զարգացմանը համամարդկային արժեքներին հաղորդակցման գործընթացի, միջմշակութային երկխոսության հմտությունների, այլ մշակույթների նկատմամբ հարգանքի, ազգամիջյան հարաբերությունների մշակույթի զարգացման գույակցմամբ: Չպետք է անտեսել նաև այն հանգամանքը, որ ազգային գաղափարախոսության արժարժումը, ազգային արժեքների գերակայության ըմբռնումը հաճախ են ընթանում ոչ դրական միտումներով. հատկապես դեռահասության և պատանեկության շրջանում հուզազգայական ընկալումների և տրամաբանական-վերլուծական կարողությունների ոչ բավարար չափով ձևավորվածության պատճառով ազգային գաղափարների

գերագնահատումը հանգեցնում է ազգայնամոլության, այլ ազգերի ներկայացուցիչների նկատմամբ մերժողական վերաբերմունքի, անհանդուրժողականության, բախումնային իրավիճակների: Սա շեշտադրում է այն հանգամանքը, որ կրթական համակարգում, հասկապես ավագ դպրոցում աշակերտների մեջ մի կողմից ազգային գործոնների դերի ուժեղացման,

ազգային ինքնագիտակցության զարգացման և մյուս կողմից՝ միջազգային երկխոս-

ություն ու հանդուրժողականության կարողությունների ձևավորման միմյանց փոխկապված գործընթացները պետք է լինեն կառավարելի, կազմեն կրթական ծրագրերի առանցքը և իրագործվեն համապատասխան մեթոդական համակարգի կիրառմամբ:

Նշված խնդիրների լուծման համար ի հայտ է գալիս հանրակրթության բնագավառում դպրոցականների ազգային ինքնագիտակցության զարգացման մեթոդաբանական մոտեցումների հստակեցման անհրաժեշտությունը:

Ազգային ինքնագիտակցության էությունը հետազոտվել է դեռևս անտիկ ժամանակներից: Այդ խնդիրն ուսումնասիրվել է Արիստոտելի, Յիպոկրատի, Յերոդոտոսի աշխատություններում: Էթնիկ հանրության, ազգային ոգու, հոգևոր էության մասին կարևոր մտքեր են արտահայտել փիլիսոփայական մտքի ականավոր ներկայացուցիչները: Անձի ինքնագիտակցության ձևավորման տարբեր կողմեր հետազոտվել են Բ.Գ. Անանևի, Լ.Ս. Վիգոտսկու, Ն.Ա. Բերդյևի, Է. Էրիքսոնի կողմից:

Ազգային ինքնագիտակցության ձևավորման հոգեբանական տեսանկյունները հետազոտվել են Ա.Վ. Ախմերովայի, Ս.Լ. Ռուբինշտեյնի, Ա.Ա. Նալչաջյանի կողմից: Ազգային ինքնագիտակցության կառուցվածքային բաղադրատարրերի քննությամբ են զբաղվել Յ.Վ. Յարությունյանը, Ա.Ա. Նալչաջյանը: Նրանց հետազոտություններում ազգային ինքնագիտակցության կառուցվածքը դիտարկվում է ըստ տարբեր մոտեցումների, համապատասխանաբար առաջարկվում են կառուցվածքային տարբերակներ, կատարվել է բաղադրատարրերի բովանդակային

վերլուծություն: Ազգային ինքնագիտակցության ձևավորման առանձնահատկություններին հետազոտություններ են նվիրել նաև Տ.Ս. Բուտորինան, Բ.Ա. Վյատկինը:

Ազգային դաստիարակության հիմնախնդիրներն արծարծվել են հայ մշակույթի նշանավոր գործիչների, գրողների, պատմաբանների, մանկավարժների՝ Ստ. Նազարյանի, Մ. Նալբանդյանի, Րաֆֆու, Խ. Աբովյանի, Լ.Ա. Խուրշուդյանի, Յ.Ա. Գևորգյանի, Ռ.Ա. Նահապետյանի, Ս.Ա. Արզումանյանի հայացքներում:

Վերոնշյալ հետազոտությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ չնայած հետազոտության հիմնախնդրի տարբեր տեսանկյուններ խորությամբ հետազոտված են, այնուհանդերձ հիմնավորապես դիտարկված չեն դպրոցականների ազգային ինքնագիտակցության զարգացման հարցերն ուսումնական և արտաուսումնական գործընթացում:

Կրթական բարեփոխումների համատեքստում կրթության բովանդակությունը կառուցվում է՝ հաշվի առնելով անհատի բարոյական կերպարի և արժեքային համակարգի, ազգային նկարագրի ձևավորման անհրաժեշտությունը:

Տեսական և գործնական հետազոտությունները բացահայտեցին հակասություն մի կողմից ուսումնական տարբեր դասընթացների՝ որպես անձի ազգային ինքնագիտակցության զարգացման կարևոր միջոցի գիտակցման, մյուս կողմից՝ վերոնշյալ հոսքում դպրոցականների ազգային ինքնագիտակցության զարգացման գործընթացում այդ դասընթացների ներուժի ոչ բավականաչափ հաշվառման, բովանդակային և տեխնոլոգիական կողմերի ոչ լիարժեք մշակվածություն միջև:

Նշված հակասությունը պայմանավորեց հետազոտության թեմայի ընտրությունը՝ **«Սովորողների ազգային ինքնագիտակցության զարգացման միջոցները ավագ դպրոցի բնագիտամաթեմատիկական հոսքում»:**

Չհետազոտության նպատակն է առաջարկել ավագ դպրոցի բնագիտամաթեմատիկական հոսքում սովորողների ազգային ինքնագիտակցության զարգացման միջոցներ և հիմնավորել դրանց կիրառման մանկավարժական արդյունավետությունը:

Յետազոտության օբյեկտը ավագ դպրոցականների ազգային ինքնագիտակցության զարգացման գործընթացն է:

Յետազոտության առարկան ավագ դպրոցի բնագիտամաթեմատիկական հոսքում սովորողների ազգային ինքնագիտակցության զարգացման մանկավարժական միջոց-ներն են:

Յետազոտության վարկածն այն է, որ ուսուցման գործընթացում ավագ դպրոցականների ազգային ինքնագիտակցության զարգացումն արդյունավետ կիրականանա, եթե`

- բացահայտվեն, վերլուծվեն և հիմնավորվեն ավագ դպրոցի բնագիտամաթեմատիկական հոսքում դասավանդվող առարկաների բովանդակային հնարավորու-

թյունները սովորողների ազգային ինքնագիտակցության զարգացման տեսանկյունից,

- որոշվեն ավագ դպրոցականների ազգային ինքնագիտակցության զարգաց-վածության մակարդակները բնութագրող չափանիշները,
- ուսումնական գործընթացը հիմնվի ազգային ու համամարդկային հոգևոր արժեք-

ների յուրացման, հասարակական-սոցիալական փորձի, ավագ դպրոցականների տարիքային և անհատական առանձնահատկությունների հաշվառման, գիտելիքների յուրացման գործնական ուղղվածության վրա,

- ավագ դպրոցի բնագիտամաթեմատիկական հոսքում ներդրվեն փորձարարական այլընտրանքային կրթական ծրագրեր` ուղղված դպրոցականների ազգային ինքնագիտակցության զարգացմանը,
- ուսումնական և արտաուսումնական գործունեության ընթացքում կիրառվեն դպրոցականների ազգային ինքնագիտակցության զարգացման` մանկավարժորեն նպատակահարմար միջոցներ:

Յետազոտության խնդիրները.

1. Փիլիսոփայական, հոգեբանական, ազգագրական, սոցիալ-մշակութաբանական հետազոտությունների և պատմագրական սկզբնաղբյուրների հիման վրա ուսումնասիրել «ազգ», «էթնոս», «ազգային ինքնագիտակցություն» հասկացությունների էությունը:

2. Վերլուծել հանրակրթական ավագ դպրոցի բնագիտամաթեմատիկական հոսքում սովորողների ազգային ինքնագիտակցության զարգացման առկա վիճակը, բացահայտել ազգային ինքնագիտակցության զարգացվածության մակարդակները, մշակել այդ մակարդակները բնութագրող չափանիշները:

3. Բացահայտել ուսումնական դասընթացների կրթադաստիարակչական ներուժը ավագ դպրոցականների ազգային ինքնագիտակցության զարգացման գործում:

4. Մշակել «Հայ գրականություն և ազգագրություն» փորձարարական այլընտրանքային կրթական ծրագրի թեմատիկա և հիմնավորել դրա ուսումնասիրման մանկավարժական արդյունավետությունը դպրոցականների ազգային ինքնագիտակցության զարգացման գործում:

5. Առաջադրել ավագ դպրոցի բնագիտամաթեմատիկական հոսքում սովորողների ազգային ինքնագիտակցության զարգացման միջոցների համալիրը և փորձարարությունը ստուգել դրա արդյունավետությունը:

Հետազոտության տեսական-մեթոդաբանական հիմք են հանդիսացել՝

- «ազգ», «Էթնոս», «ազգային ինքնագիտակցություն» հասկացությունների վերլուծությանը նվիրված փիլիսոփայական, հոգեբանական, սոցիոլոգիական տեսությունները, պատմագրական և ազգագրական նյութերը,
- անձի ազգային ինքնագիտակցության ձևավորման վերաբերյալ փիլիսոփայական և հոգեբանամանկավարժական հայեցակարգերը,
- Էթնիկ խմբերի ինքնագիտակցության ուսումնասիրությունը նվիրված տեսությունները (Ա. Լ. Անդրեև, Ի. Ն. Աֆանասև, Յ. Վ. Բրոմլեյ, Կ. Լևի-Սթրոս, Վ. Վոլնդտ, Կ. Յունգ և այլք),
- ազգային հատկանիշներին ու դրանց ձևավորման գործոններին նվիրված Էթնո-սոցիոլոգիական, Էթնոհոգեբանական, Էթնոմանկավարժական հայեցակարգերը (Լ.Մ. Դրոբիժևա, Գ.Ն. Վոլկով, Լ.Ն. Գումիլյով, Գ.Ու. Սոլդատովա, Յ.Ս. Տյուննիկով, Ա.Ա. Նալչաջյան, Գ.Պ. Յովակիմյան և այլք),
- կրթական գործընթացում դպրոցականների ազգային ինքնագիտակցության զարգացման առանձնահատկությունների

վերլուծությանը նվիրված ուսումնասիրությունները, ազգային և համաարդյակային արժեքներին նվիրված հայեցակարգերը (Ն.Գ. Այվարովա, Ա.Վ. Ախմերովա, Ա.Վ. Իվանով, Ի.Վ. Իլյինա, Դ.Վ. Եֆիմովա, Ա.Բ. Պանկին, Ս.Ա. Ռետենգեր, Է.Վ. Սուսլովա, Լ.Ա. Գարանին, Գ.Ա. Գելլեր, Ռ.Ա. Մարդոյան),

- տարիքային առանձնահատկություններին, անձնակենտրոն կրթությանը և ուսուցման նորագույն տեխնոլոգիաների կիրառմանը նվիրված տեսությունները (Վ.Ս. Մուխինա, Գ.Կ. Սելևկո, Ն.Լ. Սելիվանովա, Ս.Ն. Սմիռնով, Է. Էրիքսոն, Մ.Գ. Աստվածատրյան, Յ.Յ. Պետրոսյան),

- կրթության բովանդակության մեջ ազգային բաղադրատարրերի նշանակության գիտակցմանը նվիրված հայեցակարգերը (Բ.Ս. Գերշոնսկի, Օ.Կ. Գոժևա, Վ.Բ. Նովիչկով, Է.Վ. Սուսլովա, Վ.Յ. Խոտինեց):

Առաջադրված խնդիրների լուծման համար օգտագործվել են **տեսական և էմպիրիկ հետազոտության հեռույալ մեթոդները՝**

- հետազոտության հիմնախնդրին նվիրված փիլիսոփայական, հոգեբանամանկա-

վարժական, ազգագրական, սոցիոլոգիական և մասնագիտական գրականության, կրթության բովանդակությունը կանոնակարգող նորմատիվային փաստաթղթերի վերլուծություն, համադրում,

- կրթության բովանդակությունն արտահայտող փաստաթղթերի՝ առարկայական չափորոշիչների, ծրագրերի, դասագրքերի վերլուծություն,

- էմպիրիկ հետազոտության մեթոդներ՝ դիտում, զրույց, անկետավորում, մանկա-վարժական փորձարարություն:

Հետազոտության բազան են հանդիսացել Արարատի մարզի Ոսկետափի, Վեդիի, Երևանի Ավ. Իսահակյանի անվան թիվ 16, Բենիամին Ժամկոչյանի անվան թիվ 119 ալագ դպրոցները:

Հետազոտությունն իրականացել է 3 փուլով.

Առաջին փուլում (2009-2010թթ.) ուսումնասիրվել է հետազոտության հիմնախնդրին նվիրված փիլիսոփայական, հոգեբանամանկավարժական, ազգագրական, մասնագիտական գրականություն, որոշվել են հետազոտության մեթոդաբանական

հիմքերը, ճշգրտվել են հետազոտության հիմնական ուղղությունները, առաջադրվել է օբյեկտը, որոշվել են հետազոտության առարկան, նպատակը, ձևակերպվել է հետազոտության վարկածը:

Երկրորդ փուլում (2010-2011թթ.) մշակվել են հարցաթերթիկներ, փորձարարական հետազոտության բազա հանդիսացած դպրոցներում ձևավորվել են ստուգողական և փորձարարական խմբեր, անցկացվել է հաստատող փորձարարությունը, վերլուծվել և համակարգվել են ստացված տվյալները:

Երրորդ փուլում (2011-2012թթ.) իրականացել են ավագ դպրոցականների ազգային

ինքնագիտակցության զարգացմանն ուղղված աշխատանքներ, վերլուծվել և ընդհանրացվել են հետազոտության արդյունքները, ձևակերպվել են եզրակացությունները, հիմնավորվել է կիրառված միջոցների մանկավարժական արդյունավետությանը, հետազոտության արդյունքներն արտացոլվել են համապատասխան աղյուսակներում և գծապատկերներում:

Յետազոտության գիտական նորույթը.

- Փիլիսոփայական, հոգեբանամանկավարժական, սոցիալ-մշակութաբանական և ազգագրական տեսանկյուններից դիտարկվել և հետազոտության հիմնախնդրի շրջանակներում տրվել է «ազգային ինքնագիտակցություն» հասկացության ընդհան-րացված բնութագիրը, ըստ որի՝ ազգային ինքնագիտակցությունը ազգի կենսագործունեության էթնոտարբերակիչ և էթնոմիավորիչ հատկանիշների, գիտակցված պատկերացումների ու գնահատումների համեմատաբար կայուն համակարգ է:

- Բացահայտվել և հիմնավորվել է ավագ դպրոցի բնագիտամաթեմատիկական հոսքում դասավանդվող ուսումնական առարկաների կրթադաստիարակչական ներուժը ավագ դպրոցականների ազգային ինքնագիտակցության զարգացման գործում:

- Որոշվել են ավագ դպրոցականների ազգային ինքնագիտակցության զարգացման գործընթացի կառուցվածքային բաղադրատարրերը, ազգային ինքնագիտակցության զարգացվածության մակարդակներն ու դրանք բնութագրող չափանիշները:

• Ներկայացվել են ավագ դպրոցի բնագիտամաթեմատիկական հոսքում սովորող-ների ազգային ինքնագիտակցության զարգացման միջոցները, որոնք ներառում են մեր կողմից մշակված «Հայ գրականություն և ազգագրություն» այլընտրանքային կրթական ծրագրի և դասղեկի ժամերի համար հանձնարարելի թեմատիկաները, էքսկուրսիաները, այցելությունները մշակութային օջախներ, պատմաճարտարապետական հուշարձաններ ունեցող վայրեր, տարաբնույթ դաստիարակչական միջոց-ցառումները, բանավեճերը, իմացական և դերային խաղերը, հանդիպումները մշակույթի գործիչների, գրողների, հերոս գիևվորների և ռազմական գործիչների հետ:

Հետազոտության տեսական նշանակությունը.

1. Հետազոտվող հիմնախնդրի շրջանակներում համակարգվել են ազգային ինքնագիտակցության զարգացման գործընթացի վերաբերյալ տեսական հայեցակարգերը, ճշգրտվել են այդ գործընթացի բովանդակության իմացական, գնահատողական, վարքային-գործունային բաղադրատարրերը և դրանք բնութագրող չափանիշները:
2. Տեսականորեն հիմնավորվել են ավագ դպրոցի բնագիտամաթեմատիկական հոսքում ուսումնական առարկաների հնարավորությունները սովորողների ազգային ինքնագիտակցության զարգացման գործում:
3. Տեսականորեն հիմնավորվել են ուսումնական և արտաուսումնական գործընթացում ավագ դպրոցականների ազգային ինքնագիտակցության զարգացման նպատակահարմար միջոցները և դրանց իրացման մանկավարժական պայմանները:

Հետազոտության գործնական նշանակությունը.

1. Տեսական և գործնական հետազոտության արդյունքները կարող են կիրառվել հանրակրթական դպրոցի տարբեր աստիճաններում, նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում՝ սովորողների ազգային ինքնագիտակցության զարգացման, մանկավարժների մասնագիտական կոմպետենցիաների ձևավորման ուղղությամբ:

2. Հետազոտությունը կարող է օգտակար լինել ուսուցիչների վերապատրաստման, առարկայական չափորոշիչների, դասղեկի ժամերի թեմատիկայի մշակման, ինչպես նաև՝ սոցիալ-մշակութային բովանդակություն ունեցող գործընթացների վերլուծության, ավտորոշման և գնահատման համար:

Պաշտպանությանն են ներկայացվում հետևյալ դրույթները.

1. Ավագ դպրոցականների ազգային ինքնագիտակցության զարգացումը ոչ միայն ազգային, այլև համամարդկային հիմնախնդիր է, որի լուծումը հատկապես արդիական է աշխարհաքաղաքական տեղաշարժերի և գլոբալացման արդի ժամանակաշրջանում:

2. Ավագ դպրոցականների ազգային ինքնագիտակցությունն արդյունավետ է իրա-

կանանում մանկավարժական համակարգված, նպատակաուղղված ներգործության պայմաններում՝ կրթության բովանդակության մեջ ազգային բաղադրատարրի շեշտադրմամբ:

3. Ազգային ինքնագիտակցության զարգացման գործընթացի բովանդակային բաղադրատարրերը բնութագրում են անձի իմացական, գնահատողական, վարքային-գործունային ոլորտները. ազգի պատմական ակունքների, խորհրդանիշների,

նյութական և հոգևոր մշակույթի, ազգային նկարագրի, ոգու և բնավորության

իմացությունը հուզական ընկալումների հիման վրավերածվում է հայացքների, համոզմունքների, գնահատողական վերաբերմունքի, իր ազգային ինքնության գիտակցման և համարժեք վարքի դրսևորման:

4. Ավագ դպրոցականների ազգային ինքնագիտակցությունն արդյունավետ է զարգանում ուսումնական և արտաուսումնական գործունեության ընթացքում նրանց տարիքային առանձնահատկությունների հաշվառման, նպատակահարմար մեթոդների, միջոցների ընտրության և մանկավարժական ներգործության ճկուն ձևերի կիրառման պայմաններում:

5. Ավագ դպրոցի բնագիտամաթեմատիկական հոսքում սովորողների ազգային ինքնագիտակցության զարգացման համար առաջարկվող

միջոցների մանկավարժական արդյունավետությանը ունենալսահովվում է մանկավարժների մասնագիտական կոմպետենտությանը, կրթական զարգացնող միջավայրի ձևավորումը, ուսումնական և արտաուսումնական գործընթացում սուբյեկտ-սուբյեկտ փոխներգործությունը:

Յետազոտության արդյունքների արժանահավաստությանը ունենալսահովված են մեթոդաբանական հիմքերի ու տեսական հայեցակարգերի համալիր վերլուծությունը, հետազոտության տրամաբանությունը, օբյեկտին, առարկային, նպատակին, խնդիրներին համարժեք օգտագործված տեսական և էմպիրիկ մեթոդներով, մանկավարժական փորձարարության համակարգված բնույթով, ստացված արդյունքների վերլուծությունը, մեկնաբանումը, եզրակացությունների հիմնավորվածությունը:

Յետազոտության փորձաքննություն իրականացել է Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի

ընդհանուր մանկավարժության ամբիոնի նիստերում, փորձարարության բազա հանդիսացած դպրոցներում, ատենախոսության թեման արտացոլող գիտական հոդվածներում:

Ատենախոսության կառուցվածքը: Ատենախոսությունը կառուցված է ներածական, երեք գլուխներից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից: Ատենախոսության ծավալը կազմում է համակարգչային 157 էջ, այն ներառում է 11 աղյուսակ, 7 գծապատկեր, 4 հավելված:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ
ԱՆՁԻ ԱՉԳԱՅԻՆ ԻՆՔՆԱԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ՉԱՐԳԱՑՄԱՆ
ԳԻՏԱՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

1.1. «Ազգ», «Էթնոս» հասկացությունների փոխհարաբերակցություն, սոցիալ-մշակութային և հոգեբանական մեկնաբանումը

Ազգային ինքնագիտակցությունը ձևավորվում է ժողովրդի հոգեբանության խորագույն շերտերում: Այդ հասկացության հանգամանակից ուսումնասիրության համար հարկ է վերլուծել պատմամշակութային մեծ ժառանգությունը և մի շարք հասկացություններ՝ ազգ, էթնոս, ազգային ոգի, գիտակցություն և ինքնագիտակցություն, ազգային հոգեկերտվածք, սոցիալական հիշողություն և այլն:

Հասարակական և սոցիալ-քաղաքական տեղաշարժերը, ժողովրդագրական փոփոխությունները, միջազգային հարաբերությունների բնույթը, շուկայական ազատ տնտեսության անցումը և ուսումնադաստիարակչական հաստատություններին նոր պահանջների առաջադրումը արդիական են դարձնում սովորողների

ազգային ինքնագիտակցության զարգացման հիմնախնդրի ուսումնասիրման անհրաժեշտությունը միջմշակութային հաղորդակցման համատեքստում:

Վ.Ն. Ավերկինը գրում է, որ հասարակության զարգացման արդի փուլը բնութագրվում է ժողովուրդների ազգային ինքնագիտակցության արթնացմամբ և այն ճշմարտության իմաստավորմամբ, որ առանց ազգային մշակույթի հարուստ ժառանգության տիրապետման, էթնիկ ակունքների ճանաչման անհնար է հասարակության հոգևոր զարգացումն ընդհանրապես և յուրաքանչյուր անհատինը մասնավորապես (48, էջ 32-35):

Մարդը պատկանում է որոշակի ազգի, հասարակական և սոցիալական շերտի. նա մշակութային ավանդույթների կրող է և էթնոսոցիոմի արդյունք: Ուսուցման և դաստիարակության տեսության ու պրակտիկայի խնդիրն է զարգացնել սովորողների ազգային ինքնագիտակցությունը՝ ազգային և համամարդկային արժեքների հա-

մադրմամբ ու միջազգային հարաբերությունների մշակույթի առավելագույն պահպանմամբ: Դաստիարակային հարաբերությունների նուրբ ու բարդ ոլորտ է, որը ենթակա է կենսական բազմաթիվ գործոնների ազդեցության (69):

Ազգային ինքնագիտակցության էությունն ըմռնելու համար դիտարկենք «ազգ», «էթնոս», «ազգային ինքնագիտակցություն» հասկացությունները:

«Փիլիսոփայական բառարանում» ազգը բնութագրվում է որպես «մարդկանց հանրույթի պատմականորեն կազմավորված ձև, որին հատուկ է ամենից առաջ կյանքի նյութական պայմանների՝ տերիտորիայի և տնտեսական կյանքի, լեզվի, ազգային բնավորության որոշ գծերի ընդհանրությունը, որոնք դրսևորվում են նրակուլտուրայի ազգային յուրահատկության մեջ» (47, էջ 4):

Է. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանում» «ազգ» հասկացությունը մեկնաբանվում է որպես «մարդկանց պատմականորեն առաջացած հանրություն, որը բնորոշվում է լեզվի, տերիտորիայի, տնտեսական կյանքի և մշակույթի մեջ դրսևորվող հոգեկան կերտվածքի ընդհանրությամբ» (2, էջ 8):

Ազգը մարդկանց սոցիալ-էթնիկական ընդհանրության պատմական զարգացման բարձրագույն ձևն է, որն ունի լեզվի, տերիտորիայի, տնտեսական կյանքի, հոգեբանության և մշակույթի որոշակի ընդհանրություն և ազգային ինքնագիտակցություն (27, էջ 101):

Էթնոսի ընդհանուր բնութագրին, տեսակներին, դրանց պատմական զարգացման փուլերին, հոգեբանությանը բազմաթիվ հետազոտություններ են վիրել հոգեբան Ալբերտ Նալչաջյանը: Նա ազգի էթնոգենեզի ծննդյան ու պատմական զարգացման ժամանակաշրջանում դիտարկում է ընտանիք-տոհմ-ցեղ-ազգ-ժողովուրդ-պետություն հանգրվանային շղթան:

Ըստ Ա. Նալչաջյանի՝ «Էթնոս» տերմինն օգտագործվում է որպես ընդհանրական անուն՝ ըստ էթնիկական հատկանիշների մարդկային այլ հանրույթներից տարբերվող խմբերի նշանակման համար: Էթնոսներին հատուկ են ընդհանուր ծագման մասին պատկերացումը, լեզուն, մշակույթը, ինքնագիտակցությունը և այլն (35, էջ 507):

Ազգերն ունեն էթնոսների բոլոր հիմնական գծերը՝ ինքնանվանումը (էթնոնիմ), էթնիկական ինքնագիտակցությունը, տարածքային ընդհանրությունը, մարդաբանական (ռասայական) ընդհանուր գծերը, մշակույթի ընդհանրությունը, ընդհանուր ծագման մասին պատկերացումը, ընդհանուր հոգեկան գծերի առկայությունը, հարաբերական կայունությունը, ընդհանուր պետական կառուցվածքը: Ժողովուրդը, ըստ Ա. Նալչաջյանի, այնպիսի հանրույթ է, որը կարող է կազմված լինել տարբեր էթնիկական խմբերից (35, էջ 18-19):

Բազմաթիվ աղբյուրներում և հետազոտություններում (54, 64, 117) «ազգ», «ազգույթ», «ժողովուրդ», «էթնոս», հասկացությունները նույնացվում են, ընդամին «ժողովուրդ» հասկացությունը դիտարկվում է որպես համայնական հարաբերությունների քայքայման պայմաններում կազմավորված մարդկանց կայուն ամբողջություն՝ տերիտորիայի և տնտեսական ու մշակութային երևույթների զարգացող ընդհանրության վրա, դեռևս ազգ չդարձած մարդկանց հանրություն, էթնոս (2, էջ 481):

Էթնոլոգ Յ. Բրոմլեյը, նույնացնելով «Էթնոս» և «Ժողովուրդ» հասկացությունները, գրում է, որ Էթնոսը որոշակի տարածքում պատմականորեն ձևավորված այն մարդկանց կայուն ամբողջությունն է, որն ունի լեզվի, մշակույթի, հոգեբանության ընդհանուր, համեմատաբար կայուն առանձնահատկություններ: Էթնիկ հատկանիշները՝ լեզուն, մշակույթը, գիտակցությունը, ձևավորվում են միայն համապատասխան պայմաններում՝ տարածքային, բնական, սոցիալ-տնտեսական, պետարավական և այլն (60): Յ. Բրոմլեյը Էթնիկ ինքնագիտակցությունը դիտարկում է որպես Էթնոսի անքակտելի բաղադրատարր:

Պ.Մ. Գուրևիչը նշում է, որ «Էթնոս» հասկացությունն առաջին հերթին արտացոլում է սոցիոմշակութային խմբային առանձնահատկությունը, ինչպես նաև ֆիզիկական տարբերանշանների պատկերացումը: Էթնոսներին հատուկ է տարբերակ-վող խորհրդանիշների, էմբլեմների, նշանների, հատկանիշների մի ողջ համակարգ, որն անհրաժեշտ է ինչպես իրենց՝ Էթնիկական խմբի անդամների, այնպես էլ օտարների համար: Այդ իսկ պատճառով տարածքային և լեզվական ընդհանրության սիմվոլիկ կողմերը հաճախ իրականից ավելի կարևոր են դառնում (9, էջ 71):

Պատմաբան Յ. Գևորգյանը գրում է. «Չասարակության մասին դասական տեսություններում ազգը ներկայացվում էր որպես մարդկանց մի խիստ որոշակի հանրություն, որն առանձնացվում էր մի քանի բնորոշ էական հատկանիշներով՝ ընդհանուր ծագում, ընդհանուր լեզու, ընդհանուր ազգային բնավորություն և հոգեկերտվածք»: Այնուհանդերձ, այդ հատկանիշներից յուրաքանչյուրը միանշանակ կերպով չի առանձնացնում ազգը մարդկանց հանրությունների թվից, ուրեմն՝ հնարավոր է այդ հատկանիշներով սահմանել «ազգ» հասկացությունը: Յ. Գևորգյանը վկայակոչում է Դ. Միլլերի տեսակետը՝ շարադրված «Ազգության մասին» գրքում. ըստ այդ տեսակետի՝ ազգի սահմանման մեջ պետք է գուգակցվեն և՛ օբյեկտիվ, և՛ սուբյեկտիվ տեսանկյուններ: «Ազգ և ազգայնականություն» հոդվածում Դ. Միլլերը գրում է. «Ազգը գոյություն ունի, երբ նրա

անդամները համարում են, որ իրենք պատկանում են միևնույն հանրությանը և հատուկ պարտականություններ ունեն մեկը մյուսին կատմաբ, բայց դահնարավոր է դառնում շնորհիվ այն բանի, որ կան առանձնահատկություններ, որոնք վերաբերում են նրանց բոլորին՝ ընդհանուր պատմություն ունենալը, կապը մի որոշակի աշխարհագրական վայրի հետ և հանրային մշակույթը, որը նրանց տարբերում է իրենց հարևաններից» (10, էջ 506-508):

Յ. Գուլակյանը մեջբերում է Ս. Շիրոկոգորովի սահմանումը. «Եթևոսն այնպիսի մարդկանց խումբ է, որը խոսում է մի լեզվով, ընդունում է իր ծագման ընդհանրությունը, ունի սովորությունների ամբողջություն, կյանքի դրվածք, պահպանվող և սրբացված ավանդույթներ և տարբերում է այն (խումբը) նմանատիպ խմբերից» (8, էջ 79): Իսկ ազգը մարդկանց խումբ է, որը, ունենալով որոշակի էթնոմշակութային հատկանիշներ, միավորված է իր հայրենիքում՝ քաղաքական ինքնակազմակերպման նպատակի շուրջ: Այսինքն՝ ի տարբերություն մարդկային մնացած հանրությունների՝ ազգը կարող է ստեղծել սեփական պետություն և ապահովել դրագործառնությունը (8, էջ 79):

Յ. Գուլակյանի նույն աշխատության մեջ հիշատակվում է քաղաքագետ Ա. Խաչատրյանի տեսակետը. ազգի ինքնության բաղադրիչ տարրերն են էթնիկա-կանությունը և քաղաքացիությունը: Էթնիկականությունը ենթադրում է արյունակցական կապ, դրա հիման վրա՝ եղբայրության զգացում և փոխզնության պարտավորվածու -

թյուն: Դա նաև ենթադրում է ընդհանուր անցյալի գիտակցում, որը հիմնված է ընդհանուր ծագում և պատմական հիշողություն ունենալու դրույթների վրա: Քաղաքացիությունը ենթադրում է ազգային անկախության սկզբունքի վրա հիմնված պետության ամկայություն, որի պայմաններում յուրաքանչյուր քաղաքացի իրեն համարում է ոչ թե ինչ-որ մեկի հպատակ, այլ քաղաքական իշխանության աղբյուր և կրող: Քաղաքացիությունը կապված է նաև քաղաքացիական պարտքի և հավասարության, ինչպես նաև ընդհանուր ապագա ունենալու և այն համատեղ կերտելու գաղափարների հետ (8, էջ 92-93):

Պատմաբան Լ. Խուրշուդյանը գրում է. «Ազգը կենդանի օրգանիզմ է, պատմա- Էթնիկական կատեգորիա: Յուրաքանչյուր ազգի գոյապահպանման համար անհրաժեշտ են հետևյալ ազգային գործոնները՝ Լեզու, մշակույթ, պատմական հիշողություն, մտածողություն, ինքնագիտակցություն, բնավորություն, հոգեբանություն, հոգեկան կետվածք, նկարագիր, զգացում՝ ազգասիրություն, հայրենասիրություն և հպարտություն, ոգի, ընտանիք, կրոն, ճաշակ, կենցաղ, Էթնիկական ավանդույթներ ու սովորույթներ: Դարերի ընթացքում ճակատագրի ընդհանրությամբ հիշյալ ազգային գործոնների հիման վրա ձևավորվում են յուրաքանչյուր ազգի ազգային ինքնությունը, արտաքին դիմագիծը և ազգային անհատականությունը (17, էջ 15):

Լ. Խուրշուդյանը վկայակոչում է Անտոնի Դ. Սմիթի տեսակետը ազգության ինքնության էթնիկ հիմքի վեց հիմնական տարրերի վերաբերյալ՝

1. ընդհանուր հատուկ անուն,
2. ընդհանուր նախնի ունենալ ու մասին առասպելի առկայություն,
3. միասնական պատմական հիշողություններ,
4. միասնական մշակույթի կամ մեկ ավելի զատորոշիչ տարրի առկայություն,
5. ընդհանուր միասնական հայրենիքի զգացողություն,
6. բնակչության որոշակի խմբերի համար համերաշխության զգացողություն (17, էջ 32):

Մեծ թվով հետազոտողներ ազգի համար էական հատկանիշներ են համարում ազգային բնավորությունը, հոգեկան կերտվածքը, ազգային դիմագիծը, ազգային հոգեբանությունը, դիցաբանությունը, սովորույթները, ավանդույթները, Լեզուն, պատ-

մական հիշողությունը, կրոնը:

Տարբեր ազգերի հոգեբանության և ազգային նկարագրի առանձնահատկությունների վերաբերյալ գիտելիքներն արտացոլված են դեռևս անտիկ հեղինակների աշխատություններում:

Յերոդոտոսը, որն իրավամբ համարվում է Եթնոհոգեբանության նախահայր, հանգամանալից նկարագրել է այն ժողովուրդների հավատալիքները, կրոնական ծեսերը, սովորույթները, մշակույթը և առօրյա կյանքը, որոնց ծանոթացել է իր ճանապարհորդությունների ընթացքում: Իր «Պատմության» չորրորդ գրքում նա պատմում է սկյութների երկրի, նրանց դեմ Դարեհ Առաջինի արշավանքի և Լիբիայի (Աֆրիկայի) մասին:

Ուշագրավ են նրա անձնական դիտարկումները մասնավորապես սկյութների հավատալիքների, դիցաբանական պատկերացումների, սովորույթների, ծիսական արարողությունների, ծագումնաբանական աղբյուրների վերաբերյալ: Յերոդոտի Եթնոգրաֆիկ նյութերը բացահայտում են սկյութների բնավորության գծերը, Եթնիկ առանձնահատկությունը, հոգեբանությունը, գիտակցությունը և մտածողությունը, որոնք պայմանավորված են շրջակա միջավայրի առանձնահատկություններով և կենսակերպով: Յերոդոտոսի «Պատմությունը» հնագույն ժողովուրդների պատմության, մշակույթի և աշխարհագրական տեղեկությունների յուրահատուկ հանրագիտարան է (28, էջ 381-382):

Անձի և ամբողջությամբ վերցված Եթնոսի հոգեբանական առանձնահատկությունների ձևավորման վրա շրջակա միջավայրի ազդեցության նշանակությունը շեշտադրում է նաև հին հույն բժիշկ և փիլիսոփա Յիպոկրատը: Իր «Օդի, ջրի և տեղանքի մասին» աշխատության մեջ նա ներմուծում է «ժողովրդի հոգի» հասկացությունը՝ ազգերի և ժողովուրդների տարբերությունը պայմանավորելով երկրի աշխարհագրական դիրքի, կլիմայի, օդի, ջրի, սննդի և բնական այլ գործոնների ազդեցությամբ (28, էջ 421):

Յին աշխարհի քաղաքակրթությունները հիմնված են հայրենասիրական և քաղաքացիական դաստիարակության վրա (Աթենք, Սպարտա, Յին Եգիպտոս, Միջա-

գետք, Յին Յնդկաստան, Յին Չինաստան և այլն):

Դաստիարակության տեսության մեջ և պրակտիկայում առանձնացվում են ազգային-հայրենասիրական (Յին Յունաստան) և

ազգային-քաղաքացիական (Յին Յոմ) մոդելները, որոնք արտացոլում են այդ ժողովուրդների ազգային արժեքներն ու առանձնահատկությունները (45, էջ 76-87):

Միջնադարյան եվրոպայում թեև աշխարհի հետ ժողովուրդների շփումը սահմանափակ է եղել, քան հին հունական և հելլենիստական քաղաքակրթությունների դարաշրջանում, այնուհանդերձ վաճառականներն ու միսիոներները եվրոպացիներին ծանոթացնում էին Արևելքի ժողովուրդների կենցաղին ու մշակույթին: Մանկավարժ գիտնականների աշխարհայացքում, ուսմունքներում, գաղափարախոսության մեջ բարոյականության և դաստիարակության հարցերը դիտարկվում են ազգային զգացումների տեսանկյունից:

Վերածննդի դարաշրջանի մարդասիրական գաղափարներում առավել խորունկ-թյամբ է արտացոլված «ազգային ոգի» հասկացությունը. Ֆրենսիս Բեկոնը, Թոմաս Յոբսոնը, Ռենե Դեկարտը շեշտադրում են մարդու գիտակցության մեջ ազգային պատկերացումների դրսևորումները: Կրթության և դաստիարակության մեջ գերակայում են ազգային ավանդույթները, ժողովրդական մանկավարժության սկզբունքները (103):

Ազգային և համամարդկային միասնության, հաջորդականության, փոխադարձ կապի և փոխներթափանցման սկզբունքները առաջատար են չեխ հայտնի մանկավարժ Յան Ամոս Կոմենսկու հայացքներում: Նրա մանկավարժական երկերը տոգորված են մարդասիրության, բարոյականության և ազգային գաղափարներով:

18-րդ դարում Ֆրանսիացի լուսավորիչների հայացքներում դիտարկվում է այն գաղափարը, որ ժողովրդի ոգին պայմանավորված է աշխարհագրական գործոններով: Ֆրանսիացի պատմաբան Ծ. Մոնտեսքիոն նշում է, որ օրենքները, կառավարման սկզբունքները, կրոնը, բնակլիմայական պայմանները, անցյալի օրինակները, բարքերը, սովորույթները ձևավորում են ժողովրդի ոգին (118): Այնուհանդերձ շատ գործոնների թվում Ծ. Մոնտեսքիոն առաջնային է դիտում կլիման. այն ազդում է ժողովրդի ոգու

վրա ոչ միայն անմիջականորեն, այլև ավանդույթների ու սովորույթների միջոցով, որոնք ձևավորվում են՝ կախած բնական պայմաններից և աշխարհագրական միջավայրից:

Ազգերի և ժողովուրդների միասնության գաղափարն առավել խորությամբ արծարծվել է 18-րդ դարի գերմանական փիլիսոփայության պատմության մեջ: Ըստ Ի. Կանտի՝ ժողովուրդը մեկ տարածքում մեծաքանակ մարդկանց միավորումն է, նրա բնավորությունն ու առանձնահատկությունները, որոնք սերնդեսերունդ փոխանցվում են որպես ժողովրդի ոգի, ձևավորվում են բնական, տեղանքային և կլիմայական գործոնների ազդեցությամբ (121):

Ի.Գ. Գերդերը համարժեք է ընկալում «ժողովրդի ոգի» և «ժողովրդի բնավորություն» հասկացությունները: Ժողովրդի հավաքական կերպարի ձևավորման մեջ նա առաջնային է դիտում սոցիալ-քաղաքական գործոնը, որը պայմանավորում է ժողովրդի ավանդույթներն ու սովորույթները: Ժողովուրդը, նրա ըմբռնմամբ, այն մարդկանց հանրությունն է, որի լեզուն և ավանդույթները ձևավորում են նրա գիտակցությունը: Այս կամ ժողովրդի հոգեբանական առանձնահատկությունները բացահայտելը բավականաչափ դժվար է, ուստի պետք է խորապես զգալ տվյալ ժողովրդի զգացմունքները՝ ճանաչելու համար նրա ձգտումները և գիտակցության մակարդակը: Ժողովրդի ոգին, ըստ Ի.Գ. Գերդերի, կարելի է ճանաչել նրա լեզվի, մշակույթի միջոցով. առաջնային է ժողովրդի բնավոր ստեղծագործությունը, քանի որ ժողովրդի երևակայությունը՝ արտացոլված դիցաբանության մեջ, լավագույնս արտացոլում է ժողովրդի ոգին, հոգևոր էությունը (120):

Անգլիացի փիլիսոփա Դ. Յուլմը «Տրակտատ մարդկային բնույթի մասին» և «Ազգային բնավորության մասին» աշխատություններում գրում է, որ ժողովրդի բնավորությունը ձևավորվում է աշխարհագրական և սոցիալ-քաղաքական գործոնների ազդեցությամբ: Մարդկանց խմբերը, որոնք տիրապետում են ընդհանուր արքետիպերի, սովորույթների, ավանդույթների և այլն, մերձենում են տնտեսական-քաղաքական գործընթացների և օրինաչափությունների

ազդեցութեամբ, որի արդյունքում ձևավորվում է ազգային բնավորութիւնը (115, էջ 95):

Է. Դյուրկիեյմը հիմնախնդիրը մեկնաբանում է հասարակութեան բնույթի վերաբերյալ դիտարկումներով: Ըստ նրա՝ կուլտիվ գիտակցութիւնը կախած է այն հասարակութեան անդամների գիտակցութիւնից, որում նրանք սոցիալապես փոխկապված են: Կուլտիվ պատկերացումները փոխանցվում են սերնդեսերունդ, ավանդույթները, սովորույթները, բանահյուսութիւնը, մտածողութեան ձևերը, զգացումները կազմում են նախնիների անգիտակցական ժառանգութիւնը: Ժողովրդի հոգևոր էութիւնը կազմվում է հավատքից, համընդհանուր հետաքրքրութիւններից, մղումներից և արտացոլվում է ժողովրդի լեզվում, կրոնական պաշտամունքի, մշակույթի, իդեալների մեջ (119):

19-րդ դարի կեսերին հոգեբանական գրականութեան մեջ գործածվում է «ժողովրդի հոգեբանութիւն» հասկացութիւնը՝ որպէս գիտական առանձին ուղղութիւն: «ժողովրդի ոգին» ներկայացվում է որպէս որոշակի ազգի պատկանող առանձին անհատների հոգևոր միասնութիւն, որի բովանդակութիւնը մեկնաբանվում է լեզվի, առասպելաբանութեան, մշակույթի և բարոյականութեան ուսումնասիրման միջոցով: Այդ գիտաճյուղի հիմնական խնդիրն է ժողովրդի հոգեբանութեան ուսումնասիրումը նրա երևակայութեան, բարոյականութեան, հավաքական ըմբռնումների և պատկերացումների, կողմնորոշումների, հավատալիքների, համազգային գործողութիւնների, բարքերի, սովորույթների, բնավոր ստեղծագործութեան, կրոնի միջոցով:

Յետագոտվող հիմնախնդրի շրջանակներում հարկ է դիտարկել «հոգեկերտվածք» (մենթալիտետ) հասկացութիւնը, որն ըմբռնվում է «կուլտիվ պատկերացումներ», «կուլտիվ անգիտակցականութիւն» և նմանօրինակ այլ հասկացութիւններին համարժեք: Ազգի մենթալիտետը, ըստ Ա. Նալչաջյանի, մի ընդհանրացված դիրքորոշում է, նրա մտավոր (իմացական) ակտիվութեան բնորոշ եղանակի, նրա մտածողութեան ոճի դրսևորումը (35, էջ 252):

Ժողովրդի հոգևոր կյանքում իրականացող բոլոր երևույթները, ըստ Վ.Ս. Պոլյանսկու, նրա գիտակցության և աշխարհընկալման խոր տեղաշարժերի դրսևորում են: Ժողովրդի հոգեկերտվածքն ընդգրկում է հոգեբանական կողմնորոշումները, մտածելակերպը, արժեքային համակարգը, խորհրդանիշները, աշխարհընկալումը և

այլն (93): Հոգեկերտվածքը սոցիալական տվյալ հանրության հոգեբանական դրսևո-րումն է. ձևավորվելով սոցիալական միջավայրում՝ դաստիարակության գործընթացում, ժառանգական գործոններով և պայմանավորված լինելով ազգային մշակույթով՝ հոգեկերտվածքը դառնում է ազգային գիտակցության յուրահատուկ մարմնավորում: Ժողովրդի հոգեկերտվածքն արտահայտվում է ազգային գիտակցության և վարքի մոդելներում:

20-րդ դարի երկրորդ կեսին տարբեր մոտեցումների հայտեկան էթնոսի ձևավորման և զարգացման ներքին օրենքների ու օրինաչափությունների ուսումնասիրման գործում:

Մշակութաբան և ազգագրագետ Կ. Լևի-Սթրոսի աշխատություններում շեշտադրվում է այն ընդհանուր սիմվոլիկ միջավայրը, որը ժողովրդի էթնիկ գիտակցության աղբյուր է (82, էջ 116): Սիմվոլների՝ բոլորի կողմից հասկանալի և համընդ-հանուր ընդունված համակարգը դիտարկվում է որպես վարքի արժեքային-նորմատիվային կարգավորիչ, որը նպաստում է էթնիկ համերաշխությանը:

Որոշ հետազոտողներ (Վ.Պ. Թոդիաս, Կ. Յունգ և այլք) կարևորում են վարքային կարծրատիպերի համակարգը: Անձի ընտանեկան սոցիալականացումը նպաստում է նրա մեջ որոշակի մշակույթի ընկալումն անհատական զարգացմանը՝ տվյալ էթնոսի աշխարհընկալման ձևավորման համատեքստում: Էթնիկ կարծրատիպերը, որոնք ձևավորվում են համաժողովրդական գիտակցությամբ, պայմանավորում են նաև անձի հոգևոր նկարագիրը, քանի որ տվյալ էթնոսի ներկայացուցիչը սերնդեսերունդ փոխանցվող որոշակի կարծրատիպերի կրող է:

Կ. Յունգը առաջադրում է «արքետիպ» հասկացությունը. արքետիպերը, որոնք խտացնում են էթնիկական խմբի կամ անհատի

արժեքային պատկերացումները, սոցիալական փորձը, ըմբռնումները, գիտակցական և անգիտակցական մակարդակներում կարծրատիպերը և այլն, փոխանցվում են սերնդից սերունդ՝ արտահայտելով տվյալ էթնիկ հանրության սոցիալ-մշակութային դրսևորումները (116):

Ազգային հիմնախնդիրների ուսումնասիրման գործում զգալի ավանդուկն է Ն.Ա.

Բերդյանը. նա մշակել է ռուս ժողովրդի ազգային բնավորության վերաբերյալ առավել լիարժեք և ամբողջական ուսմունք: Ազգային ոգին կամ բնավորությունը, ըստ նրա, արտացոլում է ժողովրդի հոգեբանության՝ պատմականորեն ձևավորված հատկանիշները, որոնց շնորհիվ ազգերն ու ժողովուրդները տարբերվում են միմյանցից: Ազգային բնավորությունը և գիտակցությունը ձևավորվում են աշխարհագրական, քաղաքական, սոցիալ-տնտեսական պայմանների ներգործությամբ. որքան բարդ ու հակասական են այդ պայմանները, այնքան բարդ և հակասական է ազգային բնավորությունը (59):

Տ.Ս Բուտորինան համոզված է, որ գոյություն ունի պայմանական մի սահման, որտեղ «էթնիկ խառնուրդը» վերածվում է ազգի՝ իր առանձնահատուկ կենցաղով, ինքնագիտակցությամբ. այդ ազգը ապրում է ինքնուրույն կյանքով, պայքարում է՝ հաստատելով իր գոյը և կեցության իրավունքը: Ազգային գաղափարները՝ որպես էթնիկ գիտակցության ծնունդ, հիմնվում են ոչ միայն ազգագրական և պատմական, այլև կրոնամշակութային հիմքի վրա, որի վրա, ըստ անհրաժեշտության, ձևավորվում են համազգային զգացումները (62):

«Ազգը ժողովուրդ է, որը կազմակերպված է իբրև ճշմարիտ հասարակություն», - գրում է Յ. Գևորգյանը (10, էջ 399): Ի.Վ. Իլյինան նշում է, որ ազգային ոգին խարսխվում է հայրենասիրության, հայրենիքի զգացողության վրա: Ազգային բնավորությունն ունի մի շարք դրսևորումներ և յուրահատկություններ, սակայն առաջնային է հայրենի հողի նկատմամբ կապվածության զգացումը (79):

Ազգային միասնությունը դրսևորվում է այն ժամանակ, երբ մարդկանց միավորում են սերը հայրենիքի նկատմամբ, պատմական

ճակատագրի ընդհանրու-թյ ու նը, լեզու և, դավանանքը: Կենսական յ ու րաքանչ յ ու ր դրսևորում ու նի ազգային անկրկնելի նկարագիր, որն ամբողջությամբ դրսևորվում է ազգային մշակույթի մեջ: Գիտակցության ոլորտում ազգայինն արտացոլվում է ազգային մշակույթում, ժողովրդի ազգային բնավորության մեջ, ազգային-պատմական կյանքի, հոգեբանության մեջ և գաղափարներում: Ազգային հանրության ներքին ձևավորվում են սոցիալ-տնտեսական և բնական գործոնների ազդեցությամբ: Դա օբյեկտիվ, օրինաչափ գործընթաց է (109):

Պատմաբան Լ. Խուրշուդյանը գրում է. «Հայրենիքը ժողովրդի պատմական ապրելատարածքն է, սակայն ամեն մի ապրելատարածք դեռ հայրենիք չէ»: Հողը հայրենիք է դառնում դարերի ընթացքում, երբ այն պատվում է ժողովրդի պատմամշակութային, ազգագրական, ճարտարապետական հուշարձաններով, նախնիների գերեզմաններով, սրբագործվում է թշնամիների դեմ մղած պատերազմներում տարած հաղթանակներով և լեգենդար հերոսների թափած արյունով, երբ ձևավորվում են ազգային բնավորության գծերը, ազգային նկարագիրը, ավանդույթները, բարքերը, տարազը, լեզվական առանձնահատկությունները և ազգային ինքնագիտակցությունը, երբ այդ հողը ժողովրդի պատմական հիշողության մեջ մտնում է ֆոլկլորային առաս-պելներով, էպոսով, երգերով ու հեքիաթներով, երբ ժողովուրդը դառնում է հոգևոր ամբողջություն, երբ «հող» հասկացությունը վերածվում է «տուն» հասկացության, իսկ «անուն» հասկացությունը՝ «երկիր» ու «հայրենիք» հասկացությունների և մտնում ցեղի արյան ու գենի մեջ՝ որպես նրագոյատևման հիմնական պայման (17, էջ 31):

Ազգի, ազգային բնավորության և գիտակցության էության վերաբերյալ մեթոդաբանական և աշխարհայացքային ուշագրավ դիտարկումներ է արել Ն.Օ. Լոսսկին: Ժողովրդի էթնոհոգեբանության ըմբռնման իր պատկերացումներում նա առաջադրում է ազգային դաստիարակության համակարգի ստեղծման անհրաժեշտությունը: Ազգի հոգևոր էությունը, ըստ նրա, արտահայտվում է կրոնում, պատմության մեջ, լեզվում,

մշակույթում. դրանց միջոցով է ձևավորվում էթնիկ հանրության կերպարը՝ որպես նրա տարածքի, կրոնի, նյութական և հոգևոր մշակույթի ընդհանրություն (122):

Հետազոտության հիմնախնդրի տեսանկյունից ուշագրավ է սոցիոլոգ Ա.Ա. Իվանովայի սահմանումը. «Ազգը բազմագործառույթային, կազմակերպված, միաձուլված սոցիալ-մշակութային հանրություն է, որը գիտակցում է իր միասնության և համատեղ կեցության փաստը»(78): Հետազոտելով մարդու՝ որևէ ազգին պատկանելու հիմնախնդիրը՝ նա շեշտադրում է ոչ թե կենսաբանական ժառանգորդությունը, այլ գիտակցված հաղորդակցումը մշակութային այն արժեքներին, որոնք կազմում են տվյալ հանրության հոգևոր-բարոյական նկարագիրը: Այստեղից էլ՝ մարդկանց խմբի ազգային ինքնագիտակցությունը ենթադրում է անձի՝ այդ ազգի մշակութային արժեքներին հաղորդակցում՝ նրա մեջ հուզական համարժեք վերաբերմունքի ձևավորման միջոցով:

Էթնոսին նվիրված սահմանումների թվում հետաքրքիր է Յ. Վ. Հարությունյանի ձևակերպումը. Էթնոսը, ըստ նրա, մշակութային տեղեկատվության յուրահատուկ, որոշակի տարածքում սահմանափակված խտացում է, մինչդեռ միջէթնիկ շփումներում իրականանում է տեղեկատվության փոխանակում, փոխանցում և տարածում (52):

Անցյալ դարի 60-ական թվականներին ազգին, Էթնոսին նվիրված ուշագրավ հետազոտություններ իրականացան նախկին ԽՍՀՄ-ում. բազմաթիվ ուսումնասիրություններ արվեցին Էթնոսոցիոլոգիայի բնագավառում: Լայնորեն սկսեցին շրջանառվել «Էթնոսոցիոլոգիա», «Էթնոքաղաքագիտություն», «Էթնոհոգեբանություն», «Էթնո-մանկավարժություն» հասկացությունները:

ԽՍՀՄ-ի քայքայումից հետո նախկին համակարգի շրջանակներում ազգային խնդիրները կրում էին շեշտված քաղաքականացված բնույթ. Էթնոսոցիոլոգիայի առարկան դարձավ էթնիկ գործոնների ազդեցությունը ազգերի ինքնորոշման, քաղաքական հարաբերությունների և ինստիտուտների վրա:

Էթնոքաղաքագիտությանը ազգային խնդիրները դիտարկում է պետական-քաղաքական կառույցների գործունեության շրջանակներում: Էթնոքաղաքագիտության հետազոտության ամարկան ազգամիջյան բախումներն են և ազգային քաղաքականության ռազմավարական ուղղությունները: Էթնոսոցիոլոգիական և էթնոքաղաքական մոտեցումները սերտորեն առնչվում են էթնոհոգեբանությանը, որն ուսումնասիրում է էթնիկ հանրության հոգեբանական և մարդաբանական հատկանիշները, էթնոսի ծագման ու զարգացման առանձնահատկությունները, պատկերացումների համակարգը, մշակույթը, խորհրդանիշները, էթնոսի անդամների ինքնագիտակցությունը, էթնիկական նույնականացումը, էթնոպաշտպան մեխանիզմները, հոգե-կերտվածքը, կարծրատիպերը, ազգային ոգին և բնավորությունը, միջէթնիկական հարաբերությունները և այլն:

«Էթնոհոգեբանություն» եզրույթը մեկնաբանվում է որպես տվյալ հասարակությանը բնորոշ ձգտումների, պատկերացումների, հոգևոր հատկանիշների ուսումնասիրման բնագավառ. էթնոհոգեբանության բնագավառում իրականացող հետազոտություններում մեծ տեղ է հատկացվում էթնոսի մտածողության, հոգեբանական խնդիրների ուսումնասիրությանը, ընդամիս այդ հետազոտություններում խաչաձևվում են և՛ սոցիոլոգիական, և՛ հոգեբանական, և՛ քաղաքական տեսանկյունները: Հայ իրականության մեջ նշված ոլորտում ուշագրավ հետազոտություններ է իրականացրել հոգեբան Ա. Նալչաջյանը: Նշանակալի են նրա հետազոտությունները նաև էթնոմանկավարժության ոլորտում:

«Էթնոմանկավարժություն» եզրույթը մանկավարժական գրականության մեջ 1974թ. ներմուծել է Գ.Ն. Վոլկովը (63): Էթնոմանկավարժությունը գիտություն է ժո-ղովրդի կողմից ստեղծված մանկավարժական մշակույթի և նրա օգտագործման գործընթացների մասին: «Այս նոր գիտության խնդիրն է ուսումնասիրել ժողովուրդների՝ էթնոսների և սրանց առավել զարգացած տեսակների՝ ազգերի կողմից իրենց պատմության

ընթացքում ստեղծված մանկավարժական մշակույթը: Այլ կերպ
ասած՝ Եթևոմանկավարժությունն առարկան ազգային
մանկավարժությունն է, ժողովուրդների մանկավարժական
մտածողության և փորձի արդյունքը», - գրում է Ա. Նալչաջյանը (38,
Էջ 6):

Ժողովրդի Եթևոհոգեբանական գծերը սերտ փոխազդեցության
մեջ են նրա պատմության և մշակույթի հետ: Ազգային բնավորության
ձևավորման և զարգացման օրինաչափություններն իրականանում են
ազգային ինքնագիտակցության զարգացման տարբեր փուլերում:
Յուրաքանչյուր ազգունի իրյուրահատուկ հոգևոր ներաշխարհը,
որն արտացոլում է նրա սոցիալական, աշխարհագրական, լեզվական և
այլ առանձնահատկությունները: Ժողովրդի ոգին ամփոփված է նրա
ավանդույթներում, սովորույթներում, բարքերում:

Հասարակական կյանքի զարգացման բոլոր փուլերում խորապես
անհրաժեշտ է ժողովրդի Եթևիկ ժառանգության սոցիալ-
փիլիսոփայական իմաստավորումը: Այս առնչությամբ Կ. Յունգը
գրում է. «Մեր անգիտակցականը անցյալի հիշողությունների պահոց
է. մենք ծնվում ենք ոչ միայն կենսաբանական, այլ և հոգեբանական
ժառանգությամբ: Ե՛վ մեկը, և՛ մյուսը որոշ չափով որոշում են մեր
վարքը և փորձը:

Ինչպես մարդու մարմինն ամփոփում է բոլոր օրգանները՝
յուրաքանչյուրն իր Էվոլյուցիոն պատմությամբ, այնպես էլ
հոգեկանը կազմակերպվում է նույն ձևով» (116): Ըստ Կ. Յունգի՝
արքետիպերը ժառանգական մտապատկերներ են, որոնք հատուկ են
բոլոր մարդկանց՝ անկախ ռասայից և ազգային
պատկանելությունից:

Եթևոսի գործառույթների մեջ կարևոր դեր է վերապահված նրա
անդամների կողմից իրենց որպես յուրահատուկ հանրության
գիտակցումը, այսինքն՝ ինքնագիտակցությունը, որն էլ
ըմբռնվում է որպես ազգերի և ազգային հանրությունների
ազգային ինքնագիտակցություն: Այս հասկացության
բնութագրմանը կանդրադառնանք աստենախոսության հաջորդ
ենթազլխում:

1.2. «Ազգային ինքնագիտակցություն» հասկացության վերլուծությունը

Ազգային-մշակութային շատ հիմնախնդիրներ կապված են ազգային մտածողության մեկնաբանման, ազգի հոգևոր նկարագրի և մարդու գիտակցական ոլորտների հետ:

Ազգայինը՝ որպես բարոյագիտական հասկացություն, վերաբերում է ազգի կեցության բոլոր կողմերին և հատկապես արդիական է հասարակական կյանքի տեղաշարժերի ներկայումս: Դա պահանջում է էթնոսոցիալական և էթնոմշակութային գործընթացների համակողմանի ուսումնասիրություն և միջազգային հարաբերությունների ձևավորման և վերակառուցման համատեքստում, ազգային և համամարդկային մշակութային արժեքների պահպանման ու փոխադրման ավանդույթների համակարգում: Գիտակցություն և ինքնագիտակցության հասկացությունները մեկ-նաբանվել են փիլիսոփայական, հոգեբանական, մանկավարժական, սոցիոլոգիական բազմաթիվ տեսություններում և հայեցակարգերում:

Գիտակցությունը օբյեկտիվ աշխարհի արտացոլումն է, մարդու պրակտիկ գործունեության անհրաժեշտ կողմը: Այն զարգանում է մարդու՝ իրականության հետ փոխազդեցության գործընթացում, նրա առարկայական գործունեության, հասարակական-պատմական պրակտիկ փորձի հիման վրա: Գիտակցությունը օբյեկտիվ իրականության արտացոլման բարձրագույն, միայն մարդուն հատուկ ձև է, այնպիսի գործընթացների համակցություն, որոնք ակտիվորեն մասնակցում են մարդու կողմից օբյեկտիվ իրականության և իր սեփական կեցության իմաստավորմանը (47, էջ 88-89):

«Ինքնագիտակցությունը մարդու կողմից իր առանձնացումն է օբյեկտիվ աշխարհից, աշխարհի նկատմամբ իր հարաբերության, իր՝ որպես անձնավորության գիտակցումը, իր արարքների, գործողությունների, մտքերի ու զգացմունքների, իր

ցանկությունների ու շահերի գիտակցումը», - գրված է «Փիլիսոփայական բառարանում» (47, էջ 167):

Էդ. Աղայանը «Չայոց լեզվի բացատրական բառարանում» ինքնագիտակցությունը բնութագրում է որպես ինքն իրեն, իր էությունը գիտակցելը, իր յուրահատկությունը, հասարակական կյանքում և հասարակության մեջ ունեցած դերի ըմբռնումը (2, էջ 493): Լ. Թորգոմյանը գրում է, որ անհատական գիտակցությունն ընդգրկում է անհատի ներաշխարհը, փաստում է անհատի սոցիալական կապը իրականության հետ: Յուրաքանչյուր անհատի գիտակցությունը արտացոլում է ոչ միայն նյութականը, այլև՝ հոգևորը: Չասարակական և անհատական գիտակցության տարրերից ստեղծվում է աշխարհայացքը՝ աշխարհի, իր և աշխարհում իր տեղի վերաբերյալ մարդու հայացքների համակարգը: Աշխարհայացքը մարդու ինքնագիտակցության բարձրագույն աստիճանն է, կյանքի ռեֆլեքսային պատկերացումն է՝ դիտարկված ուրիշ մարդկանց հայացքների, արժեքների, իդեալների փոխկապակցվածության մեջ (14, էջ 117):

Փիլիսոփայական և հոգեբանամանկավարժական գրականության վերլուծությունը ցույց է տալիս, որ դեռևս անտիկ ժամանակներից սկսած՝ անձի ինքնագիտակցությունը դիտարկվել է որպես սուբյեկտի ռեֆլեքսիան (անդրադարձը) իր նկատմամբ, այսինքն՝ գիտակցության ռեֆլեքսիվ մակարդակը: Ինքնագիտակցությունը մարդու կողմից իրեն որպես անձ, պրակտիկ և ճանաչողական գործունեության սուբյեկտ ճանաչումն ու գնահատումն է, իր աշխարհայացքի, նպատակների, հետաքրքրությունների, վարքի դրդապատճառների գիտակցումն ու իմաստավորումը, անձի լիակատար ինքնագնահատականը, կյանքում ու հասարակության մեջ սեփական դերի արժևորումը:

«Ինքնագիտակցությունը մարդու կողմից ինքն իրեն, իր ֆիզիկական ու մտավոր կարողությունների, արարքների ու գործողությունների, դրանց դրդապատճառների ու նպատակների, արտաքին աշխարհի, այլոց և ինքն իր նկատմամբ վերաբերմունքի գիտակցումն է» (72, էջ 76):

Ա.Վ. Պետրովսկին գրում է. «Գիտակցության բնորոշ գիծը հենց իրեն՝ գիտակցության մեջ ամրակայված սուբյեկտ և օբյեկտ զանազանել կարողանալն է, այն բանը կարողանալ տարբերակելը, թե ինչն է պատկանում իրեն՝ մարդու «ես»-ին և ինչը՝ «ոչ ես»-ին: ... Կենդանի էակների մեջ միայն մարդն է իրագործել ինքնիմացությունը, այսինքն՝ իր հոգեկան գործունեության նպատակը դարձնել սեփական ներաշխարհի ու սուբսասիրությունը: Մարդը կատարում է իր արարքների և ամբողջությամբ վերցված իր էության գիտակցական ինքնագնահատում: «Ես»-ի անջատումը «ոչ ես»-ից այն ուղիներ է, որ ամեն մարդ անցնում է մանկության տարիներին, և որն իրագործվում է մարդու ինքնագիտակցության ձևավորման պրոցեսում (13, էջ 351):

Ա.Վ. Պետրովսկու «Յոգեբանական բառարանում» ինքնագիտակցությունը սահմանվում է որպես համեմատաբար կայուն, առավել կամ պակաս չափով գիտակցված, անհատի կողմից իր նկատմամբ անկրկնելիորեն ապրված պատկերացումների համակարգ, որի հիման վրա կառուցվում են այլոց հետ փոխազդեցությունն ու իր նկատմամբ վերաբերմունքը: Սեփական «ես»-ը, որպես կողմնորոշիչ հանդես գալով իր նկատմամբ, ներառում է ճանաչողական (իր անձնային որակների, ընդունակությունների սոցիալական նշանակության գիտակցումը) և կամային-գնահատողական (իր ինքնագնահատականը բարձրացնելու, հասարակության մեջ ինքնահաստատվելու ձգտումը) բաղադրատարրերը: Ինքնագնահատումը նախադրյալ է և հետևանք, որը ձևավորվում է սոցիալական փորձի վրա (81):

Ա.Վ. Ախմերովան ինքնագիտակցությունը բնութագրում է որպես պատմականորեն ձևավորված և սոցիալապես պայմանավորված հոգեբանական կառույց, որը բնորոշ է սոցիալականացված յուրաքանչյուր անհատի: Այդ կառույցի բաղադրատարրեր են դիտարկվում անձի կողմից իր իրավունքների ու պարտականությունների գիտակցումը, անցյալի փորձի իմաստավորումը, ներկան, ապագայի կանխորոշումը և այլն (56):

Վ.Ա. Մուլիսյանը նշում է, որ ինքնագիտակցությունը ձևավորվում է ժամանակային և սոցիալական որոշակի տարածքում: Սկզբնապես ձևավորվում են ինքնագիտակցության այն բաղադրատարրերը, որոնք ապահովում են անհատի դրական վերաբերմունքն իր նկատմամբ (օնտոգենետիկ վաղ փուլերում այն ձևավորվում է մերձավորների օգնությամբ): Ինքնագիտակցության նախնական հիմքերի ձևավորման ցուցիչներն են՝

- իր «ես»-ի գիտակցումն ըստ արտաքին ֆիզիկական տվյալների և ներքին հոգևոր էության,
- իրեն որպես սոցիոլոմի անդամ գիտակցումը:

Ավելի ուշ ձևավորվում են նաև ինքնագիտակցության ժամանակային կազմավորումը՝ անցյալի, ներկայի և ապագայի ընկալումը, և սոցիալական տարածքի ոլորտը, որում ձևավորվում են անձի բարոյագիտական պատկերացումները՝ այլոց և իր առջև պարտքի զգացումը, իր իրավունքների ձևավորումը, հարգանքն իր անձի նկատմամբ և այլն (84, էջ 236-240):

Ինքնագիտակցության կառուցվածքը պայմանավորված է նաև տվյալ հանրության մշակույթով, ավանդույթներով, արժեքային համակարգով:

Համայնքի հոգեկան նկարագիրը, նրա ինքնագիտակցությունը, էթնիկական սովորույթներն ու ավանդույթները պատկանում են ստատիկ տարրերի թվին: Այն էթնիկական համայնքի անդամների կողմից շրջապատող իրականության տարբեր կողմերի ընկալման և արտահայտման յուրահատուկ ձևն է (34, էջ 19):

Այսպիսով՝ «ինքնագիտակցություն» հասկացության վերաբերյալ գրեթե բոլոր սահմանումներում ընդգծվում են հետևյալ տեսանկյունները՝ իրեն լիարժեք ընկալումը, ճանաչումը, գնահատումը:

Մեր հետազոտության շրջանակներում առանձնահատուկ կարևորում ենք «ազգային ինքնագիտակցություն» հասկացության համակողմանի դիտարկումը և կառուցվածքային վերլուծությունը:

20-րդ դարի 50-60-ական թվականներին Արևմտյան Եվրոպայում և Ամերիկայում ի հայտ եկան ազգային ինքնագիտակցության

հիմնախնդիրներին նվիրված մի շարք աշխատություններ: Տվյալ էթնիկ հանրության մեջ տնական ժամանակաշրջանում իրականացող փոփոխությունները բացահայտվել են բազմաթիվ հետազոտություններում:

Յ.Վ. Բրոմլեյը ազգային ինքնագիտակցությունը դիտարկում է որպես ազգի կարևորագույն հատկանիշ: Նամշակել է ազգային ինքնագիտակցության կառուցվածքի, նրա զարգացման ներքին մեխանիզմների, գոյության օբյեկտիվ հիմքերի վերաբերյալ ուշագրավ դրույթներ: Յ.Վ. Բրոմլեյի դիտարկումները սկիզբ դրեցին մի ուղղության, որն առնչվում է ազգային ինքնագիտակցության բաղադրատարրերի բացահայտմանն ու վերլուծությանը, դրանց ծագմանն ու էվոլյուցիայի ուսումնասիրմանը: Յ.Վ. Բրոմլեյը ընդլայնեց ազգային ինքնագիտակցության բաղադրատարրերի շրջանակը՝ արտահայտելով այն տեսակետը, որ ազգային ինքնագիտակցությունը չի հանգեցվում սոսկ էթնիկ պատկանելության գիտակցմանը, քանի որ ինքնագիտակցությունը մարդու կողմից իր գործունեության, զգացումների, վարքի, դրապատճառների գիտակցումն է, համապատասխանաբար ազգային ինքնագիտակցությունը ներառում է էթնոսի անդամների դատողություններն իր էթնիկ հանրության գործունեության, բնավորության, հատկանիշների, կարծրատիպերի մասին (60, էջ 176): Յ.Վ. Բրոմլեյը առանձնացնում է ազգային ինքնագիտակցության կառուցվածքի հետևյալ տարրերը՝ ազգային նույնականացումը, էթնիկ հանրության հատկանիշների վերաբերյալ պատկերացումները, հայրենիքի զգացողությունը, պետականության գիտակցումը, կողմնորոշումը դեպի ազգային նվիրական իդեալները (61, էջ 97):

Գրականության մեջ առկա է այն տեսակետը, որ ազգային ինքնագիտակցությունը ձևավորվում է էթնիկ հանրության գիտակցության առավել պարզունակ ձևերից և իր զարգացման ընթացքում անցնում է մի շարք փուլեր, որոնք համապատասխանում են հասարակության զարգացման փուլերին: Ազգային ինքնագիտակցությունը լայն հասկացություն է, որը բովանդակում է իր և այլ ազգերի վերաբերյալ տվյալ էթնիկ հանրության

անդամների պատկերացումների ամբողջությունը՝ ներառյալ սոցիալ-հոգեբանական կողմնորոշումներն ու կարծրատիպերը:

Ազգային ինքնագիտակցությունը հայացքների, գնահատումների, կարծիքների, հարաբերությունների, սոցիալական կապերի ամբողջությունն է, որն արտահայտում է էթնիկ հանրության անդամների պատկերացումները էթնոսի պատմության, ներկա վիճակի և զարգացման հեռանկարների, ինչպես նաև ազգամիջյան հարաբերությունների բնույթի վերաբերյալ: Ներառում է հետևյալ բաղադրատարրերը՝ տվյալ ազգին՝ իր պատկանելության գիտակցումը և տվյալ էթնիկ խմբի այլ ներկայացուցիչների հետ իր հոգևոր միասնության զգացումը: Ազգային ինքնագիտակցությունը ազգային գիտակցության հիմքն է նախևառաջ հուզազգայական առումով, քանի որ հանդես է գալիս որպես ազգային բնավորության հուզական-գնահատողական հարաբերությունների և արժեքային պատկերացումների համակարգի առանցք, որը սոցիալ-քաղաքական և հոգևոր կյանքում անհրաժեշտ է ինքնորոշման համար (114):

Ազգային ինքնագիտակցությունը տվյալ ազգի ներկայացուցիչների կողմից իրենց սեփական սոցիալ-էթնիկական էության գիտակցումն է, նրանց ավանդը համամարդկային քաղաքակրթության մեջ, իրավունքի և ազատ, անկախ գոյության իմաստավորումը: Ինքնագիտակցության առկայությունը ամբ ազգի ներկայացուցիչները գիտակցում են իրենց տեղն ու դերը համաշխարհային հանրության մեջ, այդ հիմքի վրա են որոշվում ազգի նպատակն ու պատմական նախանշվածությունը: Ինքնագիտակցությունը էթնոսի անդամներին միավորում է սոցիալ-մշակութային միասնական հանրության մեջ (107, էջ 34-35):

Յոգեբան Ա. Նալչաջյանը էթնիկական ինքնագիտակցությունը դիտարկում է որպես էթնոսի ես (մենք)-կոնցեպցիա (հայեցակարգ). «Այդ կազմավորումն իրենից ներկայացնում է էթնոսի անդամների զգալի թվի կամ մեծամասնության պատկերացումն իր ծագման, մշակույթի, հոգեկան կերտվածքի և վարքի յուրահատկությունների մասին: Դա խմբային պատկերացումների համակարգ է, բայց ոչ թե արտաքին աշխարհ-

հի և այլ ազգերի, այլ հենց իր մասին: ... Այս կազմավորումը ծագում է Եթնոսի բազմաթիվ անդամների և ենթախմբերի հոգեկան գործունեության և փոխհարաբերությունն-

ների շնորհիվ: Այն պատմական երկարատև զարգացման արդյունք է: Եթնոսի ինքնագիտակցությունը, ինչպես նաև նրա մշակույթը և՛ անհատական, և՛ խմբային ստեղծագործության արդյունք է: Որոշակյալովոր անհատներ, ինչպիսին էր, օրինակ, Մովսես Խորենացին, հսկայական ներդրում են կատարում Եթնիկական ինքնագիտակցության ստեղծման և զարգացման գործում» (35, էջ 55-56):

Ազգային ինքնագիտակցությունը ներառում է ազգային ինքնանույնականացումը, ազգային հետաքրքրությունների, պահանջմունքների ըմբռնումը, ազգի պաշտպանության և նրա ճակատագրի համար պատասխանատվության զգացումը, ազգային հպարտությունն ու արժանապատվությունը, ինքնաքննադատությունը. դա ազգային հոգեբանության, ազգային բնավորության և ազգային զգացումների միասնությունն է: Ազգային գիտակցության տարրերն են ինքնագիտակցությունը, արժեքները, լեզուն, պահանջմունքները, հետաքրքրությունները, պատկերացումները, գաղափարախոսությունը, հոգեբանությունը, բնավորությունը, կարծրատիպերը, ինքնանույնականացման զգացումը, խորհրդանիշները, պատմական հիշողությունը, ազգային ոգին:

Ազգային ինքնագիտակցությունը հասարակական գիտակցության ձև է, որն արտացոլում է մշակութային արժեքների, հայացքների, գաղափարների, խորհրդանիշների ամբողջությունը, որում Եթնիկ հանրությունը գիտակցում է իր որոշակի, պատմականորեն պայմանավորված սոցիալ-մշակութային ինքնատիպությունը (106, էջ 32-33):

Պ.Մ. Գուրևիչը Եթնիկական ինքնագիտակցությունը դիտարկում է որպես անհատի ինքնանույնականացումը տվյալ խմբի պատմական անցյալի հետևանքով ձևավորված «արմատների» գաղափարի վրա: Եթնիկական խմբի աշխարհայացքը մշակվում է սիմվոլների, Եթնոսի ընդհանուր անցյալի՝ առասպելների, լեգենդների, սրբությունների, խորհրդանիշների միջոցով. դա Եթնոսի

կյանքում պատմամշակութային ժառանգորդում է՝ դինամիկ և փոփոխվող մեծություներ (9):

Յ.Վ. Հարությունյանը առանձնացնում է ազգային ինքնագիտակցության հետևյալ ակունքները՝ ծագումնաբանական, հոգեբանական, մշակութային և սոցիալական: Ծագումնաբանականը բնութագրվում է ժողովրդի ծագման և պատմական ճակատագրի ընդհանրության գիտակցմամբ, սոցիալ-կենսաբանական չափանիշներով: Հոգեբանական ակունքին են վերաբերում ժողովրդի մեջ կուտակված կրոնական և սոցիալական հոգևոր արժեքները (53): ԱՇվեյցերը գրում է, որ ազգային ինքնագիտակցության էթնոմշակութային բնութագրիչները ձևավորվում են մշակութային կողմնորոշիչներով. դրանց շնորհիվ մարդիկ հաղորդակցվում են ազգային մշակույթին, վարքի կարծրատիպերին, լեզվին, սոցիալ-բարոյական պատկերացումներին, սովորույթներին, ծեսերին և առօրյա կենսակերպի ազգային նրբերանգներ ունեցող տարաբնույթ դրսևորումներին (111): Սոցիալական աղբյուրը բնութագրվում է էթնոսի սոցիալական դիրքորոշմամբ, հետաքրքրություններով ու սոցիալական կապերով:

Վ.Յ. Ֆերցերը բնութագրում է ազգային ինքնագիտակցության ճանաչողական, հուզական և կամային տեսանկյունները: Գանաչողական կողմը ներառում է մարդու կողմից իր էթնիկ պատկանելության, սոցիալական կարգավիճակի, էթնիկ հանրության հոգեկերտվածքով պայմանավորված ավանդույթների, վարքի մոդելների գիտակցումը, իր կենսական հետաքրքրությունների և պահանջմունքների իմաստավորումը: Ազգային ինքնագիտակցության հուզական կողմը ներառում է ազգային հպարտության, արժանապատվության զգացումը, իր երկրի նյութական և հոգևոր բարգավաճման գործում սեփական ներդրում ունենալու գիտակցումը: Ինքնագիտակցության կարգավորիչ գործառնույթի շնորհիվ կարգավորվում և ուղղորդվում են էթնիկ հոգեբանության բոլոր դրսևորումները (108):

Վ.Յ. Խոտինցը առանձնացնում է ազգային ինքնագիտակցության ճանաչողական և հուզական-արժեքային

բաղադրատարրերը: ճանաչողական բաղադրատարրը ներառում է իրեն՝ որպես էթնոսի պատկանելության (նույնականացման) վերաբերյալ պատկերացումները, իսկ հուզական-արժեքային բաղադրատարրը՝ մարդու՝ տվյալ էթնոսի մշակույթի տիրապետման հնարավորությունները և հուզական վերաբերմունքը (110):

Վ.Տ. Բաբակովը շեշտադրում է ազգային ինքնագիտակցության բնութագրիչ -

ները՝ էթնոտարբերիչ հատկանիշների, ազգային բնավորության, ազգային կերպարի վերաբերյալ պատկերացումները (57, էջ 36-50): Այդ բնութագրիչների թվում են ավանդական մշակույթի որոշ տարրեր՝ ազգային տոները, սովորույթները, ծեսերը, լեզուն, միջանձնային հաղորդակցման եղանակները:

Բ.Ա. Վյատկինը ազգային ինքնագիտակցության կառուցվածքում դիտարկում է մշակութային, տարածքային և ծագման ընդհանրության վերաբերյալ պատկերացումները (66): Ազգային ինքնագիտակցության կառուցվածքային բաղադրատարրերի թվում հետազոտողներն առանձնացնում են ոչ միայն հետևյալ հիմնական գերակայությունները՝ պատմական անցյալը, տարածքը, ազգային մշակույթը, կրոնական պատկերացումները, լեզուն, ավանդույթները, այլև դրանց նկատմամբ հուզական-արժեքային վերաբերմունքը: Աշխարհագրական տարածքը, որի վրա ապրում է տվյալ էթնիկ հանրությունը, կապված է ժողովրդի անցյալի, ներկայի և ապագայի հետ. դա նախնիների հողն է, որն ամփոփում է նյութական և հոգևոր հուշարձանները, որոնք արտացոլում են ժողովրդի կյանքի բոլոր իրադարձությունները, ինքնության կերպը: Տարածքը աշխարհագրական հասկացությունից վերածվում է հիմնարար արժեքի՝ դառնալով հայրենի տուն, օջախ, հայրենիք: Մայրենի լեզուն ոչ միայն հաղորդակցման միջոց է, այլև ապահովում է սերունդների կողմից ազգի պատմության ու մշակույթի յուրացումը: Լեզուն իր մեջ բովանդակում է ժողովրդի հոգևոր պատկերացումները:

Վ.Դ. Ուշինսկին մայրենի լեզուն համարում է ժողովրդի ազգային հարստությունը: «Սերունդ սերնդի հետևից մայրենի լեզվի գանձարանում կուտակվում են սրտի խոր թրթիռների

պտուղները, պատմական դեպքերը, հավատալիքները, հայացքները, ապրած վշտի և ուրախության հետքերը, մի խոսքով՝ հոգևոր կյանքի ամբողջ հետքը ժողովուրդը խնամքով պահպանում է Լեզվի մեջ»,- գրում է նա (46, էջ 605):

Ազգային ինքնագիտակցության ձևավորման գործում Լեզվի նշանակությունը շեշտել է նաև Խ.Աբովյանը: «Լեզվի մեջ, ինչպես մաքուր հայելու մեջ, ցուանում է մի ազգի առանձնահատկությունը, կուլտուրան, անգամ քաղաքական վիճակը»,- համոզ-

ված է Խ. Աբովյանը (1, էջ 472): Մայրենի Լեզուն ամփոփում է կենսասոցիալական, պատմամշակութային, էկոլոգիական և գեղագիտական մեծ տեղեկատվություն: Լեզվի շնորհիվ են ձևավորվում մարդու աշխարհայացքը, ինքնագիտակցությունը, հոգևոր-

բարոյական արժեքները: Լեզուն ազդում է նաև ժողովրդի էթնոհոգեբանական առանձնահատկությունների և ազգային բնավորության վրա, որոնք ձևավորվում են հասարակական հարաբերությունների զարգացման տևական ժամանակահատվածում:

Ազգային ինքնագիտակցության կառուցվածքում հետազոտող Լ.Մ. Դրոբիժևան դիտարկում է այն հայացքները, պատկերացումներն ու կողմնորոշումները, որոնք կապված են էթնիկ հանրության ինքնորոշման, նրա կողմից բարոյական, սոցիալական, քաղաքական, գեղագիտական, էկոլոգիական և այլ արժեքների յուրացման հետ: Ինքնագիտակցության շնորհիվ ազգը ձեռք է բերում ինքնապաշտպանական, ինքնազարգացման կարողություն (74): Ընդհանուր անցյալի գաղափարը, ազգի գենետիկ հիշողությունը ինքնանույնականացման կարևոր գործոն են:

Ազգային ինքնագիտակցության առանցքը կազմում է ազգի սոցիալական հիշողությունը, որի շնորհիվ սերնդեսերունդ փոխանցվում են ազգի կյանքում տեղի ունեցող բոլոր իրադարձությունները: «Սոցիալական հիշողությունը,- գրում է Յ.Կ. Ռեբանեն,- արակտիկ և ճանաչողական գործունեության արդյունքների յուրահատուկ գանձարան է, որը տեղեկատվական տեսանկյունից յուրաքանչյուր մարդու անհատական գիտակցության զարգացման հիմքն է» (95):

Տվյալ էթնիկ հանրության անդամների հիշողության մեջ արմատացած են «հայրենիք», «հայրենի հող», «բնօրրան», «նախնյաց երկիր» հասկացությունները: Սոցիալական հիշողությունը ներառում է հայրենի եզերքի հետ կապված բոլոր իրողությունները, որոնք կենսական հզոր աղբյուր են՝ օջախը, ընտանեկան երջանկությունն ու անդորրը, հողը:

Էթնիկ հոգեբանության ստատիկ կառուցվածքին պետք է վերագրել նաև ազգային ինքնագիտակցությունը: Այն առաջանում է էթնիկական համայնքի պատմական զարգացման գործընթացում ազգային զգացմունքների հողի վրա, որպես ազգային գոյության գիտակցում, և ունի մեծ կայունություն: Էթնիկական ինքնագիտակցությունը սկսել է ձևավորվել նախնադարյան համայնական հասարակարգում և գոյություն կունենա այնքան ժամանակ, որքան գոյություն կունենան ազգերը (34, էջ 21):

Սոցիալական հիշողությունը ազգի զարգացման բոլոր փուլերում ներծծում է հասարակության բարքերը և սերնդեսերունդ փոխանցում մարդկանց զգացումները, ասքումները, մտքերը, հույզերը: Սոցիալական հիշողությունը հնարավորություն է տալիս ազգային գիտակցությունից բարձրանալ համամարդկային գիտակցության, որից էլ ծնվում են համերաշխության, արդարության, բարձրության գաղափարները: Դա հատկապես կարևորվում է սոցիալ-տնտեսական, հասարակական-քաղաքական, հոգևոր-բարոյական ոլորտներում իրականացող արդի տեղաշարժերի ժամանակաշրջանում, երբ առաջնային են աճող սերնդի գաղափարական համոզմունքների ձևավորումը և միջազգային հարաբերությունների մշակույթի զարգացումը:

Էթնոսոցիալական հիշողությունը ներառում է ժողովրդի սոցիալական պատկերացումների, մշակույթի և կենցաղի բոլոր երանգները, պատմական փաստերն ու երևույթները: Ժողովրդի սոցիալական հիշողությունը ձևավորվում է պատմական տևական ժամանակաշրջանում՝ սոցիալ-տնտեսական, մշակութային, քաղաքական, աշխարհագրական, էկոլոգիական գործոնների ազդեցությամբ (93):

Ազգային ինքնագիտակցության ձևավորման գործում կարևոր նշանակություն ունի Էկոլոգիական մշակույթը: Էկոլոգիական մտածողությունը, մշակույթը և ազգային ինքնագիտակցությունը միմյանց փոխկապակցված են: Այսօր համամոլորակային գլոբալ հիմնախնդիրներից են կենսոլորտի աղտոտվածության, մարդկության Էվոլյուցիայի, աշխարհի Էթնիկ պատկերի, կենսահամակարգերի և շրջակա միջավայրերի միջև Էկոլոգիական հավասարակշռության պահպանման, երկրաբանական գործընթացների հետ կապված հիմնախնդիրները: Միավորելով տարբեր տարածաշրջաններում Էթնիկ հանրությունների իմացական և հոգևոր-բարոյական ներուժը՝ հնարավոր է միասնաբար լուծել սոցիալ-տնտեսական, Էկոլոգիական, մշակութային և ժողովրդագրական հիմնախնդիրները:

Ազգային ինքնագիտակցության կարևոր տարրեր են տեղանունները (տոպոնիմիկան) և հատուկ անունները, անվանաբանությունը (օնոմաստիկա), որոնք ազգի և առանձին անհատների գիտակցության մեջ պահպանում և վերարտադրում են ժողովրդի կենսափորձը, ազգային-մշակութային փոխհարաբերությունները, երևույթներն ու իրադարձությունները: Անվանումները, որոնք փոխանցվում են դարեդար և պահպանվում են ժողովրդի հիշողության մեջ, ձևավորում են ազգային ինքնությունը: Առանձին մարդկանց, ազգային-պատմական, դիցաբանական, կրոնական, գեղարվեստական կերպարները մարմնավորում են Էթնոմշակութային տեղեկատվություն: Նրանք ոչ միայն ազգային գիտակցության և ազգային պատկանելության հատկանիշներ են կրում, այլև արտացոլում են ժողովրդի մտածողության և մշակույթի առանձնահատկությունները, աշխարհայացքը, պատկերացումները, ըմբռնումները, կենսափիլիսոփայությունը (101, էջ 120-135):

Ազգային ինքնագիտակցության կառուցվածքում Էական նշանակություն ունեն ազգային խորհրդանիշները (սիմվոլները): Խորհրդանիշը որևէ գաղափարի, կառույցի, Էության, ոգեղեն կամ նյութական արժեքի խոստովանող արտահայտությունն է, արտացոլում է

տվյալ ժողովրդի ժառանգական հիշողությունը և ազգային ավանդույթները: Սիմվոլները խորացված և օգտագործման համար հարմար ձևով ծածկագրում են մեծաքանակ հոգեբանական ինֆորմացիա: Ա. Նալչաջյանն առաջադրում է էթնիկա-կան սիմվոլների հետևյալ դասակարգումը՝

- աշխարհագրական օբյեկտները,
- ազգային հերոսներն ու արքաները,
- դիցաբանական-ազգային սիմվոլները,
- գրողները, գիտնականները, մշակույթի այլ գործիչները (35, էջ 169-176):

Ազգային խորհրդանիշները յուրահատուկ տարբերանշաններ են, որոնք արտահայտում են տվյալ ազգին բնորոշ աշխարհագրացողությունն ու աշխարհ-ընկալումը: Խորհրդանիշներ կարող են հանդես գալ նաև ազգի կենսագործունեության միջավայրը, այն տարածքը, որի վրա ընթացել է ազգի ծագումն ու կազմավորումը, ձևավորվել են լեզուն, մարդաբանական առանձնահատկությունները, կրոնա-կան հավատալիքները և այլն:

Այսպիսով՝ ազգային ինքնագիտակցությունը ընդհանրական հատկանիշ է, որը ներառում է ազգային նույնականացումը (հդենտիֆիկացիա), ծագման և ընդհանուր արմատների վերաբերյալ պատկերացումները, էթնոտարբերիչ լեզվական և մշակույթային

առանձնահատկությունները, կարծրատիպերը: Ազգային ինքնագիտակցության ձևավորման վրաներգործում են սոցիալական, քաղաքական, տնտեսական, գաղափարական և այլ գործոններ: Ազգային ինքնագիտակցության ձևավորման հիմնախնդրին նվիրված հետազոտություններում առանձնացվում են ազգային ինքնագիտակցության հետևյալ բաղադրատարրերը՝

- էթնոմշակույթային միջավայրի առանձնահատկությունների գիտակցումը,
- իրեն որպես տվյալ էթնիկ հանրության սուբյեկտի գիտակցումը,
- էթնոմշակույթային միջավայրին հոգևոր հարազատությունը,
- ազգի պատմական արմատների գիտակցումը,
- էթնիկ իրականություն սոցիալ-նորմատիվային գնահատումը (102):

Ակնհայտ է, որ Էթնոմշակութային միջավայրի առանձնահատկությունների գիտակցումը առաջին մակարդակն է: Ազգային ինքնագիտակցության սոցիալ-նորմատիվային գնահատումը յուրահատուկ վերաբերմունք է նրա բոլոր բաղադրատարրերի այն ապրումների հիման վրա, որոնք ի հայտ են գալիս ազգային ինքնագիտակցության ձևավորման և նրա զարգացման տարբեր փուլերում:

Ազգային ինքնագիտակցության՝ մեր կողմից դիտարկված հայացքների, տեսակետների, մոտեցումների ընդհանրացման արդյունքում կարելի է սահմանել, որ ազգային ինքնագիտակցությունը ազգի կենսագործունեության Էթնոտարբերակիչ և Էթնոմիավորիչ հատկանիշների, գիտակցված պատկերացումների և գնահատումների համեմատաբար կայուն համակարգ է: Այդ համակարգի տարրերն են Էթնոնիմը (Էթնոսիանունը), ծագումը, տվյալ հանրության անդամների պատմական անցյալը, պատմաաշխարհագրական տարածքը, լեզուն, կրոնը, մշակույթը, մարդաբանական և հոգեբանական առանձնահատկությունները: Այսինքն՝ ազգային ինքնագիտակցությունը մարդու գիտակցության մեջ ազգային հատկանիշների և իրողությունների վերաբերյալ ամբողջական պատկերացումն է: Այդ համակարգի ձևավորման արդյունքում

մարդն իրեն գիտակցում է որպես ազգային որոշակի հանրության ներկայացուցիչ, յուրացնում է բարոյականության օրենքի ու ժստացած վարքի մոդելներ և կարգավորում է այլ ազգերի ներկայացուցիչների հետ հարաբերությունները:

1.3. Չայ ազգային-հոգևոր նկարագիրը պատմագրական, ազգագրական, հոգեբանական և սոցիալ-մշակութաբանական տեսանկյուններից

Ըստ Աստվածաշնչի՝ Չայ կական լեռնաշխարհը ներկայացվում է որպես արարչագործության վայր՝ Եդեմ-դրախտավայր, որտեղ գտնվել են իմաստությունը և անմահությունը խորհրդանշող

ծառերը, և որը համարվում է համաշխարհային ջրհեղեղից հետո մարդկության փրկության ու վերածննդի երկիր (39, էջ 71):

«Ազգ» և «հայրենիք» հասկացությունները անխզելիորեն կապված են: Յայ ժողովրդի հայրենիքը իր մեջ ընդգրկում է հայ ազգի ամբողջական պատմական կենսատարածքը:

Յայ կական լեռնաշխարհն այն բնիկ հայրենիքն է, որտեղ կազմավորվել և զարգացել է հայ ժողովուրդը, ձևավորվել են հայ ազգային նկարագիրը, բնավորությունը, մշակույթը, անկախությունն ու պետականությունը:

Բնականաբար, ազգի ձևավորումը պատմական երկարատև զարգացման

արդյունք է, որին նպաստում են տարբեր գործոններ՝ էթնոսի կենսագործունեության պատմական տարածք կամ հայրենիք, այդ տարածքի վրա էթնոսի ներկայացուցիչներին իրար կապող քաղաքական, տնտեսական, սոցիալական, հոգևոր և մշակութային կապեր ու հարաբերություններ: Պատմաբան Լեոն հիշատակում է. «Առաջավոր Ասիայի գրեթե կենտրոնական մասում՝ Իրանի սարահարթի հյուսիս-արևմտյան կողքին, տարածված է երկրաբանական շարժումներով և հրաբխային ուժերով վերբարձրացած մի երկիր, որ Յայաստան (Արմենիա) անունով աշխարհագրական և պատմական գիտության սեփականությունն է դարձել՝ սկսած 5-րդ դարից, նախքան Քրիստոսի ծնունդը (15, էջ 119): Այնուհետև պատմաբանը հավելում է, որ պատմա-աշխարհագրական այդ տարածքում արմենները (այդ ժողովրդի առաջնորդ և անվա-

նադիր Արմենիոսի անունով), հեռանալով իրենց նախահայրենիքից, «մոտավորապես Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքների ժամանակ հաստատվել են Արաքսի հովտում: Գուցե այդ ժամանակներում էլ վերջացել է եկվորների և բնիկների միաձուլումը, որից Արևմտյան Ասիայի բազմաթիվ ազգությունների մեջ առաջացավ մի նոր ժողովուրդ, որ իրեն անվանում էր հայ, իսկ երկիրը՝ Յայաստան, մինչդեռ օտար ազգությունները շարունակեցին նրան արմեն և նրա երկիրը՝ Արմենիա անվանել » (15, էջ 248-257):

Մ.թ.ա. 6-րդ դարում՝ Արարատյան թագավորության ժամանակաշրջանում, Յայկական Լեռնաշխարհում ավարտվում է Եթնիկական-լեզվական խմբերի միասնականացումը: Շուրջ հինգհազարամյա կենսատարածքում ձևավորվում են հայ ազգային կյանքը և մշակույթը:

Ազգի ձևավորումը և գոյությունը անմիջականորեն առնչվում են ազգային ինքնության գիտակցմանը: «Ազգային ինքնության գիտակցության իրական դրսևորում-ները,- գրում է պատմաբան Յ. Գևորգյանը,- Յին Յայաստանի պատմության մեջ եղան Երվանդունի և Արտաշեսյան հարստությունների օրոք Մեծ Յայքի և Ծոփքի անկախ պետությունների մեջ հայ ժողովրդի բուրք ազգագրական խմբերի ու նրանց տարածքների միավորումը, իսկ քրիստոնեության ընդունումից հետո՝ հայ եկեղեցու ինքնուրույնության հաստատումը քրիստոնեական եկեղեցիների շարքում, հայ գրերի գյուտն ու հայ մատենագրության սկզբնավորումը և զարգացումը՝ նախապես մտածված ու մշակված ծրագրով» (10, էջ 513):

Ինչպես յուրաքանչյուր ազգ, այնպես էլ հայ ազգը բնութագրվում է մի շարք հատկանշներով՝ ընդհանուր ծագման մասին պատկերացումներ, ամբողջական ապրելատարածք, ինքնանվանում (Եթնոնիմ), Լեզու, մշակույթի ընդհանրություն, պատմական հիշողություն, ընդհանուր հոգեկերտվածք, ազգային բնավորություն, պետականություն, ազգային իդեալներ, ինքնագիտակցություն:

Յայ ազգային ինքնագիտակցության հիմքերից մեկը, ըստ հոգեբան Ա. Նալ-չաջյանի, Յայկ Նահապետի և նրա մեծագործությունների մասին պատմող Եթնոգենետիկ (ազգաստեղծ) առասպելն է, որը մեզ է հասել Մ. Խորենացու շնորհիվ: Առասպելի Եթնոհոգեբանական և Եթնոմանկավարժական արժեքն այն է, որ շեշտադրվում են ազգային ինքնագիտակցության հիմքը կազմող արժեքները՝ անկախությունը, ազատությունը, հարստությունը, քաջությունը, վեհանձնությունը, ազգասիրությունը, հայրենիքը գենքի ու ժով պաշտպանելու և նրա սահմաններն ընդլայնելու արիությունը,

միմյանց օգնության հասնելու պատրաստակամությունը: Հայկ Նահապետի առասպելում փաստորեն առկա է հայ ազգի արժեքային համակարգի կորիզը: Ըստ Ա. Նալչաջյանի՝ առասպելը արժեքավոր տվյալներ է պարունակում հայ էթնոսի ձևավորման շրջանից մինչև միատարր էթնիկական կազմ ունեցող պետության ստեղծումը և այդպիսով հայկական ոգու ձևավորումը (38, էջ 8-11):

Ազգային ինքնագիտակցության ձևավորման գործում անգնահատելի է Մեսրոպ Մաշտոցի հայ ապահպան գործունեությունը: «Եթե հայ ժողովրդի հոգևոր ու գաղափարական միասնությունն ամրապնդելու նվիրած անդուլ գործունեությամբ ու մեծամեծ ջանքերով, այդ նպատակին հասնելու համար հայկական գրի ու գրականության ստեղծման գործում ցուցաբերած հետևողական ու անխնջ պրպտումներով Մեսրոպ Մաշտոցը հանդես է գալիս որպես իր ժողովրդին նվիրված անձնուրած քաղաքական-գաղափարական գործիչ, ապա հայկական գրի ստեղծումով նա իրեն դրսևորում է որպես մեծ գիտնական: Իր կատարելությամբ հայկական գիրը, իրոք, հանճարեղ մտքի ծնունդ է: Այդ գործը ավարտելով՝ Մեսրոպը հայ ժողովրդին նվիրեց իր հոգեկան կերտվածքի բյուրեղացման, իր մշակույթի զարգացման հզոր մի գենք», - գրում է Է. Աղայանը (21, էջ 14): Այս առնչությամբ Ա. Նալչաջյանը համոզված է, որ Մեսրոպ Մաշտոցի կողմից հայերեն գրերի և դպրոցների ստեղծումը պետք է դիտվի էթնիկական ինքնապատասխանության և ինքնագիտակցության տեսանկյունից, խնդիրներ, որոնք 5-րդ դարում հայ ազգի կյանքում դրված էին ամենայն սրությամբ (38, էջ 15):

Հայ ազգային ինքնագիտակցությունը ենթադրում է ազգի բոլոր անդամների միասնական նպատակների ըմբռնում, նվիրվածություն և ազգային արժեքներին, լեզվին, հայրենիքին, մշակույթին և այն բոլոր իրողություններին, որոնք ազգի անդամներին համախմբում են միևնույն գաղափարների շուրջ: Ազգային ինքնագիտակցության

առանցքը կազմում է ազգային հպարտության զգացումը, որը լավագույնս դրսևորվել է 5-րդ դարի պատմիչների՝ Ազաթանգեղոսի, Բուզանդի, Եղիշեի և հատկապես Մովսես Խորենացու «Հայոց պատմության» մեջ: Պատմահայրը սահմանել է էթնոպատմա-

մշակութային համակարգի իր ծրագիրը, մշակել հայ ազգի հավաքական «մենք» հայեցակարգը. նրա «փոքր ածուխ» գաղափարը, ըստ էության, ուղենշում է ազգային

հայրտությանը և ազգայինը պահպանելու գաղափարը. «Որովհետև թեպետ մենք փոքր ածուխ ենք և շատ սահմանափակ թվով և շատ անգամ օտար թագավորության տակ նվաճված, բայց և այնպես մեր աշխարհումն էլ քաջության շատ գործեր կան գործված՝ գրելու և հիշատակելու արժանի» (16, էջ 13):

«Մովսես Խորենացու ի հայտ գալը,- գրում է Ա. Նալչաջյանը,- պատմական ուղենիշ էր հայ Էթնոսի զարգացման գործում: Մեսրոպ Մաշտոցի գյուտի հետ միասին Խորենացու «Յայոց պատմությունը» հայկական քաղաքակրթության սկիզբն էր: Մաշտոցը և Խորենացին են կանգնած հայկական քաղաքակրթության, հետևաբար նաև ազգաստեղծման ակունքներում: Մշակույթ հայկական Էթնոսն ուներ նաև մինչ այդ, հազարամյակներ շարունակ, սակայն հայկական քաղաքակրթության հիմքը դրեցին այդ երկու մեծ մարդիկ» (35, էջ 274):

Մեծ մտածող, փիլիսոփա, մանկավարժ Գրիգոր Տաթևացին հայ ազգային-հոգևոր նկարագիրը անխաթար պահելու համար հեղինակել է պատմափիլիսոփայական, դավանաբանական, մշակութային, մանկավարժական աշխատություններ, որոնք խորությամբ արտացոլում են հայկական հոգևոր-մշակութային արժեքները, ազգային բնավորությունը, հայ Էթնոսի ամբողջական պատմական դիմագիծը:

Խ. Աբովյանը ազգային ինքնագիտակցության հիմնական գործոններն էր համարում մայրենի լեզուն, ազգային մշակույթի դարավոր ավանդույթների պահպանումը, ազգային դպրոցը և բարոյական դաստիարակության համակարգը: Յայրենասիրությունը, ազգասիրությունը, ըստ մեծ լուսավորչի, դաստիարակվում են ազգի պատմության, ազգային սովորույթների, ավանդույթների, բանահյուսության յուրացմամբ: Յայ ժողովրդի հոգևոր վերածննդի ուղին մայրենի լեզվով ազգային մշակույթ ստեղծելն ու երիտասարդությանը ազգային ոգով դաստիարակելն է, որով

հնարավոր է ձևավորել հայ մանուկների ազգային կերտվածքը և բնավորությունը: «Ժողովրդական դաստիարակության և կրթության գործը հասկացող և գնահատող յուրաքանչյուր մարդու պարտականությունն է ձգտել իր գիտելիքները, իր փորձը ի սպաս դնելու երկրի կարիքներին և նպաստելու այդ ընդհանուր վեհ ծրագրին, որով պետք է ընթանա ժողովրդական դաստիարակության և կրթության վեհ գործը», - գրում է Խ. Աբովյանը (1, էջ 481):

Ազգային ինքնագիտակցության և հոգևոր վերածննդի գործում անգնահատելի է դպրոցաշինական գործի ակնավոր ներկայացուցիչ Ստ. Նազարյանի ավանդը. նրա ազգապահպան հայացքները ամրապնդեցին հայ ազգային դպրոցի գաղափարական հիմքերը: «Չայոց կյանքի վերանորոգությունը,- գրում է նա,- պիտի սկսանի ժողովրդա-կան դպրոցից, որ արմատն է ամենայն ազգային լուսավորության, ամենայն ազգային առաջադիմության» (22, էջ 199): Ստ. Նազարյանը ազգային դաստիարակության գործում առաջնային է համարում մայրենի լեզվի և մտածողության փոխկապակցվածությունն ու փոխապայմանավորվածությունը՝ դրանց արդյունավետ զարգացումը դիտարկելով ընդհանուր կրթության, ազգային դաստիարակության և հոգևոր զարգացման միասնական գործընթացում, որը հնարավոր է իրականացնել միայն ազգային մշակույթի հիման վրա:

Չայ ժողովրդի լուսավորության և առաջադիմության առաջամարտիկ Մ. Նալբանդյանը ազգային գիտակցության ձևավորման կարևոր գործոն է համարում լուսավորությունը, ազգային դպրոցը և մայրենի լեզուն: «Մայրենիի դաստիարակության մեջ է ազգի ապագայի սերումը», - գրում է նա (22, էջ 290):

Նշանավոր վիպասան, մանկավարժ Բաֆֆին ազգային մտածելակերպի, հոգեբանության, ոգու և բնավորության ձևավորման գործում կարևորում է ընտանիքը, որտեղ ձևավորվում են ազգային կարևորագույն հատկանիշները՝ լեզուն և կրոնը: «Ընտանեկան օջախի մեջ,- գրում է նա,- սրբագործվում է երեխան իր ազգային ինքնուրույնության երկու ամենամեծ առանձնություններով, որպիսիք են՝ կրոնը և լեզուն: ...Մայրն է սովորեցնում երեխային թոթովել այն նվիրական բարբառով, որով

խոսել են նրա պատերը, նրա նախնիքը: Այդ բարբառով սովորում է երեխան մտածել,

աղոթել և արտահայտել իր զգացումը: Ընտանիքը սկսվում է ազգայնությունից: Ընտանիքը մի օղակ է ազգայնության մեծ շղթայակապի մեջ: Այստեղ է ստանում երեխան իր ազգային բնական գույնը ...Եթե այդ գույնը խորին կերպով է տպավորված երեխայի մեջ, այնուհետև միշտ կմնա անջնջելի, այնուհետև ոչ մի օտար ազդեցություն և չի կարող փոխել նրան...» (23, էջ 173):

Հայ ազգային նորագույն պատմության մեջ ազգային և ազգային ինքնա-

գիտակցության խոր զգացողությամբ առանձնանում է Գարեգին Նժդեհը: Նրա յուրաքանչյուր միտք առաջընթացի ուղենիշ է հայ ազգի համար. լինելով խորապես ազգային՝ նա միաժամանակ համամարդկային մշակույթ կրող անհատ է:

Իր ազգային գաղափարախոսությունը Գարեգին Նժդեհը բանաձևում է որպես ցեղակրոնություն: 1932թ. Սոֆիայում լույս տեսնող «Խռովք» ամսագրում Գ. Նժդեհը «Հոգևոր նորոգության խնդիրներ» խորագրի ներքո լույս ընծայեց «Ցեղակրոնությունն իբրև հաղթանակի զօրույթ» հիմնադրույթային հոդվածը, որը հայ ազգի հոգևոր-բարոյական վերանորոգման ծրագիր դարձավ: Նա խոսքերեց ու ամփոփեց մինչ այդ եղած հայ ազգային գաղափարախոսությունը՝ հիմք դնելով հայ ազգի էության, ոգու և բարոյականի վրա կառուցված մի ուսմունքի: Գ. Նժդեհի համար «ցեղ» հասկացությունը տարբերվում է մարդաբանության մեջ տրված սահմանումներից. ««Ցեղը» դիմագծորեն ազգայինն է, այն տիպարականը, որով ժողովուրդները տարբերվում են իրարից: ...Հայ ցեղը դա հայ հողն է՝ համակ բոց ու զօրույթ: Ցեղն է, որ մեր մեջ կապրեցնե եւ կզօրացնե Հայաստանը, անգամ Հայաստանից դուրս: Ցե՛ղն է մեր ապավենը: Ցեղն արարիչ է, ժողովուրդը՝ արարած» (41, էջ 316-318): Ցեղակրոնությունը հայ որեն ապրելու և հարատևելու տենչն է, մղումը. այն սկսվում է ցեղի պատմության, մշակույթի, կենցաղի, արժեքների, արժանիքների, ներկայի ձգտումների, համաշխարհային քաղաքակրթության մեջ հայ ցեղի բերած պատկառելի ավանդի ճանաչմամբ: Ցեղի ճանաչումից է բխում

ցեղահավատությանը՝ հավատը ցեղի ուժի, հանճարի, կամքի, կարողությանն են, ապագայի ու հավիտենականի նկատմամբ: Ցեղապաշտությանը ցեղի որակների, արժեքների, սրբությանն են պաշտամունքն է, որի վրա խարսխվում է հայրենապաշտությանը. դա այն հողի նվիրական պաշտամունքն է, որի վրա առաջացել է հայ ցեղը, կերտել իր պատմությունը, ստեղծել մշակույթը, որում ամփոփված են իր զավակների աճյունները, և որի սիրուն ազատության համար զոհաբերվել են նրամեծ մեռելները (42):

Ցեղի արժեքների ու առաքինությանների իմացությունից, դրանց նկատմամբ ակնածանքից, պաշտամունքից է ծնվում անհատի ազգային հպարտությունը: Ցեղա-կրոնությունը, ըստ Գարեգին Նժդեհի, քոմեջ ցեղը, ցեղի որակները, բարոյականը, հայկականը կրելն է. «Ցեղակրոն է նա, ով ապրում է ցեղորեն՝ ցեղի կյանքով և ցեղի համար»: Գ.Նժդեհը «ազգասիրություն», «հայրենասիրություն» և այլ բառերի փոխարեն նախընտրում է ցեղակրոնությունը, դաավելին է, քան հայրենապաշտությունը, դա հայ ցեղի էության արտահայտությունն է, ազգայինի և համամարդկայինի յուրօրինակ ներդաշնակություն: Նժդեհյան ցեղակրոնությունը ձգտում է ստեղծել հոգեբանական այն մթնոլորտը, որի պայմաններում հնարավոր է ազգային առաքինությանների ու կարողությանների դրսևորումը: Ցեղն իր մեջ կրում է ազգային ոգին, հայկականությունը, ինքնագիտակցությունը:

Ուսանելի են նժդեհյան դասերը ազգասիրության, հայրենասիրության, անձնագոհության մասին: Հայրենասիրությունը, Գ. Նժդեհի համոզմամբ, ազգերի գոյության անհրաժեշտ պայմանն է, ուժի և մեծության անսպառ աղբյուրը. այն զարգանում է ժողովրդի ինքնագիտակցության և արժանապատվության զգացումի հետ և կործանվում նրա բարքերի ապականության, նյութականացման հետ: Ազգն առանց հայրենասիրության այն է, ինչ մարմինն առանց հոգու: Իբրև հայրենասիրության և ազգային ինքնագիտակցության խորհրդանիշ՝ Գ.Նժդեհը վկայակոչում է Մամիկոնյան-ներին՝ որպես ցեղի հոգևոր առաջնորդներ: Ուշագրավ է նրա «Տարոնականություն»

բնորոշումը՝ որպես ազգային նկարագրի յուրահատուկ մարմնավորում: «Տարօնակա-նութիւն ասել է՝ Մամիկոնեանների ճամբով, դա ասել է՝ ցեղի և հայրենիքի համար Մամիկոնեանների պես մեռնել ու զել ու մեռնել գիտենալ», - գրում է Գ. Նժդեհը (41, էջ 346):

Ազգային ինքնագիտակցության ձևավորման առաջնային գործոնը հայրենասիրությունն է, որի գաղափարը դարերի ընթացքում հասունանում և սերնդեսերունդ է փոխանցվում պատմական հիշողության միջոցով: «Ազգի խաղաղ ոչնչացումը սկսվում է պատմական հիշողության ոչնչացումից: Այդ պատճառով էլ լեզուն և պատմությունը ժողովրդի գոյապահպանման ու զարգացման ամենակարևոր գործոններն են համարվում» (17, էջ 22): Հայ ազգի պատմական հիշողությունը արտացոլված է նրա մշակույթում՝ պատմա-արտապետական հուշարձաններում, առասպելներում, վեպերգերում, նույնիսկ հնագիտական առարկաներում, որոնք իրենց բնույթով, խորհրդանիշներով ու պատկերներով ևս պատմում են անցյալի մարդկանց, նրանց մտքերի, պատկերացումների, հավատալիքների ու գործերի մասին:

Հ. Գևորգյանը համոզված է, որ «Սասնա ծռեր» էպոսը «սերնդեսերունդ կենդանի պատումներով մեր ժամանակներն է հասցրել ժողովրդի պատմական հիշողությունը մեր թվարկությունից էլ շատ դարեր առաջ կատարված իրադարձությունների մասին, Ասորեստանի և Բաբելոնի ժամանակների մասին՝ անձնավորված Սանասարի ու Բաղդասարի, Ծովինարի, Ջոջ Միերի, Պստիկ Միերի և ուրիշների կերպարներում: ...Կամի ժողովուրդ, որն իր ծննդաբանության պատմությունը հասցրել է մեր օրերը ոչ միայն հնագիտական-քարեդեն կոթողների, վիմագիր արձանագրությունների, Աստվածաշնչի և գրավոր պատմության վկայություններով, այլ և սերնդեսերունդ ավանդված կենդանի պատումներով, որոնք իրենք իսկ հավաստում են այդ վկայությունները» (11, էջ 21): Սա ևս հավաստումն է այն իրողության, որ պատմական հիշողությունը եղել ու մնում է հայ ազգային ինքնության գիտակցության էական բաղադրիչը, ազգ, որ

«արդեն 16 դար շարունակ պահպանել է և այցելում է հայ գրի ստեղծողի շիրիմին, որի Մայր տաճար Սուրբ Էջմիածինը գործում է 17 դար շարունակ, որի վանքերի կամարների տակ 15 դար շարունակ հնչում են հորենացու սաղմոսները, որը որպես ազգային տոներ նշում է Թարգմանչաց տոնը և Վարդանանց օրը, որն իր հիշողությամբ ամրագրել է իր մատենագրության մեջ ու հնատիպ գրքերում, հայրենի երկրի տեղանունների մեջ՝ Մասիս ու Նեմրոթ, Արայի լեռ ու Շամիրամի ջրանցք, Յայկական Տավրոս ու Յայկական պար, Էջմիածին ու Վարագա վանք, Տիգրանակերտ ու Վաղարշապատ և այլն» (12):

Յայ ժողովրդի ազգային-հոգևոր նկարագրի, ինքնության ու էթնիկ յուրա-

հատկության վերաբերյալ ինքնատիպ տեսակետ է արտահայտել գերմանացի լեզվաբան, հայագետ Յայնրիխ Յյուբշմանը: Ըստ նրա՝ բազմաբանակ ժողովուրդ-ներից, որոնք հին ժամանակներում բնակվում էին հյուսիս-արևմտյան Ասիայում, հայերն են մինչև մեր օրերը պահպանել իրենց էթնիկ մաքրությունն ու լեզուն: Այդ երևույթը պետք է վերագրվի ռասայական հատկանիշներին և աշխարհագրական, պատմական, կրոնական փոխառնչություններին, որոնց շնորհիվ հայերը կարողացել են

գոյատևել: Յ. Յյուբշմանը վստահաբար հավաստում է, որ այդպիսի հին, աննկուն, ազգային հպարտությամբ և հավատով լի մշակութային ժողովուրդը անհրաժեշտություն ունի ակնկալելու գիտության ու քաղաքակիրթ աշխարհի հետաքրքրությունը (26):

Ավգուստ Ֆոն Յաքստհաուզեն գրում է, որ հայ ժողովուրդը աստվածային նախախնամությամբ Արևելքում քրիստոնեության և քաղաքակրթության տարածման ընտրյալ է. հայերն իրենց հայրենիքին, լեզվին, ավանդույթներին, քրիստոնեությանը և եկեղեցուն, ազգային նկարագրին մնացել են խորապես հավատարիմ: Բնութագրելով հայ ազգային-հոգևոր հատկանիշները՝ Ա. Ֆոն Յաքստհաուզեն համոզված է, որ հայերի ինքնության կերպը, անհատականությունն ու ազգային այլ որակների ակունքը նրանց կոչվածությունն է առ բարձր մշակույթ, ինչպես նաև ակնառու

հոգևոր կերտվածքի մեջ այն առաքելությունն, որ տրված է Եվրոպայի և Ասիայի միջև միջնորդ և կապող օղակ լինելու համար (26):

Յ. Գևորգյանը իրավացիորեն նշում է, որ Յայաստանն ինչ-որ աշխարհագրական հասկացությունն չէ և ոչ էլ ավետյաց երկիր, այլ իրական հայրենիք, որն իր նկարագիրը ստացել է հայ ժողովրդի բազմադարյան աշխատանքով և ինքն էլ մեծապես ձևավորել է հայ մարդուն՝ նրա բնավորությունը, վարքագիծը: Ժողովուրդը դար առ դար վերափոխում է երկրի տարածքը՝ այն դարձնելով իր ազգային կեցության ու պատմության առարկայացումը: Այս առնչությամբ Յ. Գևորգյանը վկայակոչում է Նիկողայոս Ադոնցի մեկնաբանությունը պատմամշակութային միջավայրի ու մարդու կեցության ներդաշնակության վերաբերյալ. «Յուրաքանչյուր երկիր ունի, բացի իր ֆիզիկական մակերևույթից, սեփական ոգեկան գծերը, որոնք այն տարբերում են մյուս երկրներից:

Յայաստանը՝ որպես մարդկային աշխատության լաբորատորիա, միշտ եղել է և կմնա հայկական...ճարտարապետական զարմանահրաշկոթողները, պալատները, ամրոցները, եկեղեցիներն ու վանքերը, վեհապանծորեն բազմած իրենց լեռնագահերին, այսօր փոշուն են հավասարեցված, բայց նրանց մեջ դեռ ապրում է ոգին, ավերակների մեջ դեռ դեգերում են անցյալի սովերները, սովերներ, որոնք պատրաստ են մարմնավորվել ու նոր կյանքի համար» (10, էջ 429-441):

Ազգերն իրարից տարբերվում են ազգային մշակույթով. ազգային կերպարը, ոգին, բնավորությունը, հոգեբանությունը մեծապես պայմանավորված են ազգային-մշակութային առանձնահատկություններով: Յ. Գևորգյանը գրում է, որ ժողովուրդն ազգ է դառնում՝ ստեղծելով ազգային մշակույթ, այսինքն՝ ծավալելով իր հնարավորությունները մշակույթի բարձրագույն շերտերում, քաղաքակրթության ժամանակակից ձևերի մեջ, արտադրական-տնտեսական, գիտակրթական, գիտատեխնիկական, իրավաքաղաքական ոլորտներում: Միայն այդ դեպքում ժողովրդի մշակույթը կարող կլինի հավասար երկխոսության մեջ մտնել ու իշ ժողովուրդների զարգացած մշակույթների հետ (10, էջ 419):

Դեռևս հնագույն ժամանակներից կերտելով իր պատմությունը
ու ազգային մշակույթը՝ հայ ազգը դրանցում արտացոլել է իր
ազգային բնավորությունը, խառնվածքը, ինքնագիտակցությունը,
մտածելակերպը, ինքնությունը, աշխարհընկալումն ու
աշխարհըմբռնումը: Չայոց արժեհամակարգն իր յուրահատուկ
արտահայտությունն է ստացել ճարտարապետության մեջ,
շինարարական արվեստում, փիլիսոփայության, բանահյուսության,
երաժշտության, մանկավարժության, մատենագրության մեջ,
քերթողական արվեստում, ազգային-ընտանեկան կյանքի նորմերում,
լեզվում, դավանանքում, նյութական և հոգևոր այլ ոլորտներում:
Չայ ազգային մշակութային ժառանգության մեջ իր ուրույն դերն
ու գործառնությունը ունեն ազգային-հոգևոր կառույցները:
Ժամանակակից աշխարհում իրականացող գլոբալացման
գործընթացում ձևավորվող բազմամշակութային միջավայրում,
թվում է, հետին պլան են մղվում ազգային մշակույթները,
համազգային, հոգևոր-բարոյական, գեղագիտական, ճանաչողական
արժեքները, պատմական հիշողությունը, մտածողությունը,
սակայն դաթյունը

կարծիք է: Ազգային մշակույթը ժամանակի փորձությունը,
հազարամյակի մարտահրավերներին դիմակայելու հզոր գործոն է.
մշակութային մեջ են ամփոփված ազգապահպան ռազմավարությունները:
Ազգային մշակութային և հայեցի կերպի պահպանումը, ազգային-
մշակութային պաշտպանական կառույցների ստեղծումը հատկապես
կարևոր են մեծ սփյուռք ունեցող հայության համար. օտար
միջավայրում բազմաթիվ գործոնների ազդեցությամբ
աշխարհասփյուռ հայությունը դժվար թե դիմակայեր ձուլմանն ու
ազգային կերպի աղավաղմանը, եթե չունենար իր մշակութային մեջ
ամրակայված ազգային հոգեկերտվածքի խտացումը:

Ժողովրդի հոգեկան նկարագրի գծերը հատկապես վառ են
արտահայտվում և կայուն պահպանվում ավանդույթներում և
սովորույթներում:

Էթնիկական ավանդույթներն ու սովորույթները՝ որպես
հասարակության կյանքի ինքնատիպ, յուրահատուկ երևույթներ,
փոփոխվում, զարգանում են՝ կախված պատմական-հասարակական

այն պայմաններից, որոնցում ապրում են ժողովուրդները: Ազգերի և ժողովուրդների պատմական զարգացման ընթացքում որոշ ավանդույթներ և սովորույթեր պահպանվում են, մի մասը վերանում է, իսկ մյուսները ձեռք են բերում նոր բովանդակություն՝ պահպանելով հին ձևը:

Ավանդույթներն ու սովորույթները մեկ սերնդի գործունեության արգասիք չեն. դրանք ստեղծվում են երկարատև բարեփոխումների ընթացքում, ամրապնդվում են գիտակցության մեջ և մեկ սերնդից փոխանցվում մյուսին (34, էջ 23):

Հայ ազգային մշակույթի և հոգեբանության յուրահատուկ մարմնավորում են ազգային խորհրդանիշները: Առաջաջանը գրում է, որ խորհրդանիշների համակարգը ազգային հոգեկանի, հատկապես բնավորության ծածկագրման (կոդավորման) համակարգ է, որը խտացված և օգտագործման համար հարմար ձևով ծածկագրում է մեծաքանակ հոգեբանական տեղեկատվություն (35, էջ 171):

Հայկական խորհրդանիշները, ըստ ծագման և բնույթի, լինում են ազգային- մշակութային, ազգային-պետական, պատմական, աշխարհագրական, բարոյակերպարային և այլն:

Աշխարհագրական խորհրդանիշները խորհրդանշում են այն տարածքներն ու օբյեկտները, որտեղ ընթացել և ընթանում է տվյալ էթնիկ հանրության ծագումն ու զարգացումը: Լեռների, լճերի, դաշտավայրերի հոգեբանական պատկերներն արտացոլում են ազգի պատմական ճակատագիրը: Հայ ազգի համար աշխարհագրական խորհրդանիշներ են Մասիսը, Արաքսը, Սևանը, Արագածը, Արարատյան դաշտավայրը և այլն: Պատմական խորհրդանիշներն արտահայտում են ազգային պատկանելության, արժանապատվության խոր զգացողություն: Տաճարները, վանքերը, բերդերն ու ամրոցները, կոթողները, հուշարձանները, հերոսամարտի վայրերը ազգային ինքնության և ինքնագիտակցության խորացված արտահայտությունն են, ազգային անկրկնելիության վկայությունը:

Ազգային ինքնագիտակցության ձևավորման մեջ առանձնահատուկ նշանակություն ունեն ազգային-պետական խորհրդանիշները՝

դրոշը, օրհներգը, գինանշանը: Հայոց պատմության տարբեր ժամանակաշրջաններում գինանշանների վրա պատկերված առարկաների, պատկերների համադրությունը ազգի խորհրդանշանային ժառանգական տարբերանշանն է:

Յուրահատուկ նշանակություն ունեն ազգային-մշակութային խորհրդանիշները, որոնք խմբավորվում են ըստ դերի և գործառույթների: Ազգային կրոնական խորհրդանիշները արտահայտում են տվյալ ազգի կրոնական հոգեբանությունը, բարոյական պատկերացումները: Հայոց ազգային արժեհամակարգում ազգային-կրոնական խորհրդանիշներից են խաչը, պաշտամունքային որոշ առարկաներ՝ եկեղեցիները, վանքերը, խաչքարերը, սուրբ մյուռնուհները, կրոնական ծեսերն ու արարողությունները, աղոթքը, կանթեղները, ջահերը, մկրտության ավազանը, եկեղեցական սպասքը և այլն:

Ազգային-մշակութային խորհրդանիշներն են լեզուն և լեզվական մշակույթի արտահայտությունները՝ այբուբենը, մագաղաթե մատյանները, դյուցազնավեպը:

Մշակութային խորհրդանիշներից են նաև ժողովրդական և գուսանական երգերը, պարը, խոսքը, մանրանկարները, հոգևոր երաժշտությունը՝ տաղերը, գանձերը և շարականները:

Ազգային յուրահատուկ մտածելակերպի դրևորումներ են կենդանական խորհրդա-

նիշները՝ խոյը, արծիվը, առյուծը, ցուլը, որոնք հայ ազգի տոտեմիստական հնագույն պատկերացումների մարմնացումն են: Բուսական խորհրդանիշները՝ ծիրանը, խաղողը, նուռը, ցորենի հասկը, սոսիս, բարդին, խորհրդանշում են ազգային բնավորությունը, աշխատասիրությունը, Հայկական լեռնաշխարհի նվիրական բարիքները: Հայ ազգային խորհրդանիշների համակարգում յուրահատուկ նշանակություն ունեն ազգային հերոսներն ու արքաները՝ Տիգրան Մեծը, Արտաշես Առաջինը, Տրդատ Երրորդը, Մեսրոպ Մաշտոցը, Սահակ Պարթևը, Վարդան Մամիկոնյանը, Անդրանիկ

Օգանյանը, Գարեգին Նժդեհը, Աղբյուր Սերոբը և այլք: Նրանք խորհրդանշում են ազգային արժանապատվությունը,

անկախությունը, հոգևոր ներուժը, կորովը, ռազմական հանճարը, գոյատևման կամքը:

Դիցաբանական-ազգային խորհրդանիշները էթնոտարբերիչ նշանակություն ունեն և մարմնավորում են հայերի պատկերացումները տիեզերքի, երկնային մարմինների, չարի ու բարու աստվածների, բնության ուժերի մասին: Դիցաբանական խորհրդանիշները թվում են հայոց դիցաբանի աստվածները՝ Արամազդը, Վահագնը, Աստղիկը, Անահիտը, Միրիը, ինչպես նաև առասպելական հերոսները՝ Յայկ Նահապետը, Արամը, Արագեղեցիկը և այլն:

Ազգային խորհրդանիշներ են դառնում նաև ազգի ականավոր փլիխոս-փաները, գրողներն ու գիտնականները՝ Դավիթ Անհաղթը, Անանիա Ծիրակացին, Գրիգոր Նարեկացին, Գրիգոր Տաթևացին, Խաչատուր Աբովյանը, Յովհաննես Թումանյանը, Ավետիք Իսահակյանը, Յովհաննես Ծիրազը, Կոմիտասը, Վիկտոր Յամբարձումյանը, Մարտիրոս Սարյանը, Արամ Խաչատրյանը: Գիտության և արվեստի նշանավոր գործիչները նպաստում են ազգային ինքնագնահատականի բարձրացմանը և հայ ազգի այցեքարտն են հանրությունը:

Աճող սերնդի ազգային ինքնագիտակցության զարգացման գործում առաջ-նային դեր է վերապահված ազգային կրթական համակարգին. ազգի գոյատևման և ազգային գաղափարախոսության հիմքերը դրվում են ազգային դպրոցում: Բոլոր ժամանակներում կրթամշակութային հաստատությունները ազգապահպան դեր և նշանակություն են ունեցել, սակայն այսօր ազգային դպրոցի առջև ռազմավարական խնդիրներ են դրված՝ կապված միջազգային հարաբերությունների զարգացումների, ազգամիջյան բախումների, ժողովրդագրական տեղաշարժերի և գլոբալացման արդի գործընթացների հետ:

Գ Լ ՈՒ Խ ԵՐԿՐՈՐԴ
ԱՎԱԳ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆԱԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ
ՉԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ԱԶԳԱՅԻՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ
ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

2.1. Անձի ազգային ինքնագիտակցության զարգացման գործընթացի առանձնահատկությունները, բովանդակային բաղադրատարրերը

Անձի ազգային ինքնագիտակցությունը զարգանում է ամբողջ կյանքի ընթացքում՝ սոցիալականացման բոլոր փուլներում: Չարգացման և ձևավորման ընթացքում իրականանում է էթնիկ նույնականացում, որը համապատասխանում է մարդու զարգացման տարիքային շրջափուլներին:

Երեխայի մեջ որևէ ազգային խմբի պատկանելության գիտակցման վերաբերյալ բավականին ուշագրավ հայեցակարգ է մշակել հոգեբան Ժան Պիաժեն: Նա իր աշխատություններին մեծ մասը նվիրել է երեխաների աշխարհընկալման առանձնահատկություններին, ուսումնասիրել է նրանց խաղի, նմանակման, խոսքի զարգացումները, մտածողության, ընկալման, երևակայության, հիշողության, գիտակցության հարցերը, տրամաբանության և աշխարհայացքի յուրահատկությունները (91,92):

Ժ. Պիաժեն համոզված է, որ երեխայի մտածողության զարգացումն ընթանում է ընդհանուր եսակենտրոնությունից դեպի նյութական աշխարհի օբյեկտները, որը հանգեցնում է այլոց և ինքն իրեն ճանաչելու առավել օբյեկտիվ դիրքորոշման (91): Նա առանձնացնում է էթնիկ բնութագրիչների ձևավորման և զարգացման երեք փուլ՝

1. 6-7 տարեկանից երեխան ձեռք է բերում իր էթնիկ պատկանելության առաջին ոչ համակարգված պատկերացումները, որոնք սկզբնապես հիմնվում են ակնհայտ բնութագրիչների վրա՝ մաշկի գույն, մարդաբանական տվյալներ, լեզու, մշակույթի տարրեր, սովորույթներ,

2. 8-9 տարեկանում երեխայի աշխարհաճանաչողական փորձի հետ ընդլայնվում են

տեղեկատվության շրջանակները. նա իրեն նույնականացնում է տվյալ էթնիկ հանրության ներկայացուցիչների հետ, գիտակցում է իր ծնողների ազգությունը, բնակավայրը, մայրենի լեզուն,

3. 10-11 տարեկանում լիովին ձևավորվում է ազգային ինքնագիտակցությունը. տարբեր ազգերի մեջ երեխան գիտակցում է իր ազգի ինքնատիպությունը, մշակույթը, բարքերը, ազգային բնավորությունը, կրոնը, նախնիների հոգևոր ժառանգությունը, յուրացնում է սոցիալական հիշողության տարրեր (91):

Հիմնախնդրին նվիրված արդի հետազոտություններում ևս (67,80,85) ճշգրտվում և որոշակիացվում են ազգային ինքնագիտակցության ձևավորման յուրաքանչյուր փուլի առանձնահատկությունները, տարիքային սահմանները: Դեռևս 3-4 տարեկանից արդեն տվյալ էթնիկ հանրությանը պատկանելության գիտակցման վերաբերյալ կարծիքներ են արտահայտել շատ հետազոտողներ: Ա.Լ. Անդրեանը նշում է, որ երեխայի մեջ ազգային ինքնագիտակցության հիմքերը ձևավորվում են օնտոգենետիկ վաղ մակարդակներում՝ մայրենի լեզվի յուրացման ընթացքում և շրջապատի ազդեցությամբ. վաղ տարիքից արդեն երեխաները ընկալում են արտաքին տարբերությունները՝ մաշկի, աչքերի, մազերի գույնը (51):

Ուսումնասիրելով մի շարք հետազոտություններ՝ (66,77,78,96,105) կարելի է ընդհանրացնել, որ օնտոգենետիկ ազգային ինքնագիտակցությունը զարգանում է չորս փուլով: Նախնական փուլն ընթանում է նախադպրոցական և կրտսեր դպրոցական տարիքում (5-10 տարեկան): Այս տարիքում բնորոշ են երեխայի կողմից իր ազգության մարդկանց հետ ընդհանրության ոչ հստակ գիտակցումը, իր ազգային պատկանելության դրդապատճառների ոչ բավարար չափով առկայությունը, ազգային հատկանիշների վերաբերյալ թույլ պատկերացումները: Այս տարիքում երեխայի կողմից տվյալ ազգին պատկանելության գիտակցումը հիմնված է շրջապատողների հետ հաղորդակցման փորձի վրա՝ առանց ազգային հատկանիշների հստակ տարբերակման, մինչդեռ այլ ազգերի վերաբերյալ պատկերացումները հիմնված են վերացական կերպարների վրա: Ազգային ինքնագիտակցության ձևավորման այս

փուլում ընտանիքը կարևոր դեր ունի ազգային-մշակութային տեղեկատվության փոխանցման գործում:

Ազգային ինքնագիտակցության զարգացման երկրորդ փուլն ընդգրկում է դեռահասության տարիքը (11-15 տարեկան): Տարիքային այս շրջանը բնութագրվում է իր ազգի նկատմամբ գիտակցված վերաբերմունքով. դեռահասը ընդգծված հե-տաքրքրություն է դրսևորում իր և այլ ազգերի պատմության, մշակույթի, կենցաղի, սովորույթների նկատմամբ: Այս փուլում ձևավորվում է էթնոմշակութային և էթնոհոգեբանական առանձնահատկությունների վերաբերյալ պատկերացումների ու գնահատականների համակարգը: Ընտանիքը տակավին մեծ ազդեցություն ունի դեռահասի ազգային ինքնագիտակցության ձևավորման, նրա ազգային նույնակա-նացման գործում: Դեռահասի համար նշանակալի են ծնողների հեղինակությունը, մտածելակերպը, դատողությունները:

Ազգային ինքնագիտակցության զարգացման երրորդ փուլը բնորոշ է վաղ պատանեկությանը կամ ավագ դպրոցական տարիքին (16-18 տարեկան): Այս շրջանում ամրապնդվում է իր ազգային պատկանելության գիտակցումը, ձևավորվում են իր ազգի պատմության և մշակույթի վերաբերյալ պատկերացումներ: Պատանեկան տարիքում ազգային նույնականացումը ձևավորվում է ըստ «Ես իմ ազգի ներկայացուցիչն եմ» սկզբունքի: Վաղ պատանեկան տարիքում ուսումնադաստիարակչական հաստատությունները նշանակալիորեն ազդում են դպրոցականի ազգային ինքնագիտակցության զարգացման, նրա էթնիկ պատկերացումների ձևավորման վրա:

Չորրորդ փուլը, որն ընդգրկում է ուշ պատանեկությունը կամ ուսանողական տարիքը (18-22 տարեկան), ազգային ինքնագիտակցության զարգացման վճռորոշ շրջանն է: Բարձրագույն և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում ուսումնառության ժամանակաշրջանում ընդլայնվում է աշխարհի մասին անձի պատկերացումների համակարգը, ամրապնդվում են նրա համոզմունքները: Այս շրջանում ազգի հետ հոգեբանական նույնացումը հաճախ հանգեցնում է

սեփական անձի վեհացման՝ ազգի նվաճումների, մշակույթի և պատմության հետ նույնանալու միջոցով, սակայն քիչ չեն նաև օտարասիրության, այլ ազգերի ներկայացուցիչներին նմանվելու, նրանց կենցաղը, բարքերն ու մշակույթը ընդօրինակելու դեպքերը: Ա.Վ. Ախմերովան հետազոտել է տարիքային յուրաքանչյուր փուլում անձի աշխարհընկալ -

ման և պատկերացումների առանձնահատկությունները (55): Ըստ նրա՝ երեխաները դեռևս վաղ տարիքից ունեն իրենց սեփական տեսակետը, մեծահասակների նկատմամբ վերաբերմունքի որոշակի դրսևորումները: Նրանց վրա մեծ ազդեցություն ունի ազգային մտածելակերպը, որը ձևավորում է «ես» հայեցակարգը, աշխարհի նկատմամբ վերաբերմունքը. դա արտահայտվում է հետևյալ հացադրումներում՝ «Ո՞վ ենք մենք», «Որտեղի՞ց ենք գալիս», «Ո՞ր ազգին եմ պատկանում» և այլն:

Դեռահասունը անձի զարգացման առանձնահատուկ փուլ է. արդիական է դառնում կենսական ինքնորոշման պահանջմունքը, որը պայմանավորում է ինքնագիտակցության զարգացումը և զգայուն դարձնում ազգային հիմնախնդիրների նկատմամբ: Այս տեսանկյունից չափազանց կարևոր է ուսումնասիրել և ուղղորդել դեռահասների ազգային ինքնագիտակցության զարգացման գործընթացը նրանց մեջ ազգամիջյան ճիշտ հարաբերություններ ձևավորելու, միջմշակութային երկխոսության և հաղորդակցման կարողություններ զարգացնելու համար:

Դեռահասության և պատանեկության տարիքի հաջորդ կարևոր առանձնահատկությունը անձի չափազանց զգայունակությունն է սոցիալական միջավայրի նկատմամբ, հասակակիցների ու մեծահասակների հետ հաղորդակցումը, կենսական տվյալ փուլին բնորոշ նորագոյացությունների ձևավորումը, ինքնագիտակցության և ինքնորոշման զարգացումը: Հստակեցվում են ազգային ոգու, բնավորության և հատկանիշների վերաբերյալ զգացումները, պատկերացումներն ու համոզմունքները:

Ա.Վ. Ախմերովան համոզված է, որ դեռահասության տարիքում առավել խորությամբ է զարգանում ազգային

ինքնագիտակցությունը. ձևավորվում են գնահատողական վերաբերմունքը, կայուն կարծրատիպերը, վարքի մոդելները: Այս տարիքում դեռահասի ազգային ինքնագիտակցությունը զարգանում է ոչ միայն ընտանիքի, այլև ուսումնական հաստատությունների և սոցիալական միջավայրի ազդեցությամբ: Դեռահասի ազգային պատկերացումների ձևավորման վրա մեծ ազդեցություն ունեն հասակակիցների, զանգվածային լրատվական միջոցների, տեղեկատվական և հեռադորդակցական տեխնոլոգիաների շնորհիվ ստացված տեղեկատվությունը: Միասին լինելու, համախմբվելու, միևնույն խմբին պատկանելու պահանջմունքը, համերաշխության գագաթումը, տվյալ խմբում գնահատվելու և ընդունված լինելու դրդապատճառները բավականաչափ ուժեղ են և կարող են հակադրվել ավելի վաղ ձևավորված գագաթումների, համակրանքին և կապվածությանը: Միևնույն ժամանակ խումբում ընդհանուր հայացքները, հետաքրքրությունները առաջնային են դարձնում խումբային արժեքների և կարծրատիպերի որոշակիացումը և խմբի նպատակները (56):

Պատանեկան տարիքում նկատվում է իր մեջ տվյալ էթնիկ հանրությանը բնորոշ հատկանիշների արտահայտվածության գնահատում: Միաժամանակ ներկայումս որոշ հետազոտողներ արտահայտում են այն տեսակետը, որ պատանեկության շրջանում նկատվում է ազգային մշակույթի նկատմամբ հետաքրքրության նվազում՝ կապված գլոբալացման արդի գործընթացների հետ: Զեռադորդակցական տեխնոլոգիաների և դրանց շրջանակներում սոցիալական կայքերի մատչելիությունը հնարավոր է դարձնում տարածության մեջ արագ հաղորդակցումը, երկխոսությունը. ձևավորվում է այսպես կոչված զանգվածային երիտասարդական մշակույթ՝ լեզու, մտածելակերպ, ճաշակ, գեղագիտական ըմբռնումներ, ոճ, որն իր բովանդակությամբ ինտերնացիոնալ է: Տ.Ս. Բուտորիևան և Ն.Պ. Օվչիննիկովան (62) ավագ դպրոցականների մտագործունեությունը բնութագրում են որպես ընդհանրացման և վերացարկման բարձր մակարդակ. նրանք հակված են բացահայտել երևույթների պատճառատեսանքային կապերը, փաստարկել, ապացուցել, հիմնավորել, եզրակացնել, համակարգել: Այս տարիքում

ձեռք է բերվում հոգեբանական, բարոյական, գաղափարական և քաղաքացիական հասունության այն մակարդակը, որի շնորհիվ անձը պատրաստ է իմացական և պրակտիկ ինքնուրույն գործունեության:

Ավագ դպրոցական տարիքը՝ որպես մարդու հասունացման և կայացման առանձնահատուկ փուլ, հետազոտվել է Բ.Գ. Անանևի, Լ.Ս. Վիգոտսկու, Ի.Ս. Կոնի, Ա.Վ. Պետրովսկու, Է. Էրիքսոնի, Ժ. Պիաժեի և տարիքային հոգեբանության ինդիվիդուալ զբաղվող այլ հետազոտողների կողմից: Ավագ դպրոցական տարիքում պատանու ինդիվիդուալ է որոշել իր տեղը և դերը հասարակական հարաբերություններում, ձգտել ինքնակազմակերպման, ինքնարտահայտման, ինքնիրացման: Ի հայտ են գալիս նոր հետաքրքրություններ ու դրդապատճառներ, անհատական դիրքորոշում է ձևավորվում

իր, աշխարհի, ներկայի և ապագայի նկատմամբ:

Ավագ դպրոցականները կանգնած են մասնագիտական ընտրության և ինքնուրույն կյանքի շեմին: Ապագայի նպատակամղվածությունը պայմանավորում է վարքային դրսևորումները: Ինքնագիտակցության ձևավորման և զարգացման հետ զարգանում են տրամաբանական մտածողությունը, աշխարհայացքը, ձևավորվում են կենսական նոր դրդապատճառներ՝ կապված մասնագիտության ընտրության և կենսական կողմնորոշումների հետ: Նշանակելիորեն արտահայտվում են ինքնուրույն-նությունը, կազմակերպվածությունը, հուզական հավասարակշռությունը, հաղորդակցման ձգտումը, անհատական տեսակետը: Սոցիոմի և հասարակական հարաբերություններին առանձնահատկությունները թելադրում են նոր հարաբերություններ. նոր հետաքրքրություններ են ի հայտ գալիս կյանքի, ազգային և համամարդկային հիմնախնդիրների, այդ հիմնախնդիրների լուծման գործում իր տեղի ու դերի վերաբերյալ: Ուսումնական առարկաների ու այլ աղբյուրներից ստացված տեղեկատվության շնորհիվ ավագ դպրոցականը փորձում է ինքնուրույն իմաստավորել իրակա-նությունը, իրադարձություններն ու երևույթները, ընդսմին այս

գործընթացները հաճախ են ընթանում ներքին բախումներով, անհանգստությամբ, տագնապներով:

Ձևավորվում են ավագ դպրոցականների գաղափարական, բարոյական, քաղաքացիական հատկանիշները, հարստանում են ներքին հոլգական ապրումները, ընդսմին պատանեկան տարիքին բնորոշ են նաև բռնկունությունը, դյուրագրգռությունը, տաքարյունությունը, որոնք, ըստ Ա.Վ. Ախմերովայի, հատկապես ազգամիջյան լարվածության և բախումնային իրավիճակներում պատանուն դարձնում են ակտիվ և անկառավարելի (56):

Ազգային ինքնագիտակցության ձևավորման հիմնախնդրին նվիրված հետազոտություններում դասակարգված են անձի ազգային ինքնագիտակցության ձևավորվածության մակարդակները: Ըստ Դ.Վ. Եֆիմովայի՝ տվյալ տարիքի երեխաների ազգային ինքնագիտակցության ձևավորվածության մակարդակները պետք է որոշվեն ըստ տվյալ տարիքային շրջափուլի և զարգացման առանձնահատկությունների: Նրա կողմից համապատասխանաբար առանձնացվում են ազգային ինքնա-

գիտակցության ձևավորվածության ցածր, միջին և բարձր մակարդակները (75):

Օ.Դ. Օլեյնիկովան ավագ դպրոցականների ազգային ինքնագիտակցության ձևավորվածության մակարդակների բնութագրման համար օգտագործում է կառուցվածքային հետևյալ բաղադրատարրերը՝

- տեղեկատվական-իմացական,
- հոլգական-արժեքային,
- վարքային (88):

Չիմք ունենալով նշված բաղադրատարրերը՝ ազգային ինքնագիտակցության զարգացվածության մակարդակների բնութագրման համար օգտագործվում են հետևյալ չափանիշները՝

- ազգի պատմության և մշակույթի վերաբերյալ գիտելիքներ,
- ազգի պատմության, լեզվի, կրոնի, հոգեկերտվածքի, իդեալների, կենսակերպի, խորհրդանիշների, ծեսերի, ավանդույթների,

սովորույթների, խոհանոցի, կենցաղի նկատմամբ վերաբերմունքը, դրանց վերաբերյալ տեղեկատվություն ունենալու պահանջմունքը,

- քննադատական մտածողության զարգացվածությունը և ստեղծագործական ակտիվությունը,
- այլ ազգերի պատմության և մշակույթի իմացության դրդապատճառների առկայությունը:

Նշված չափանիշների շնորհիվ բացահայտվում են ազգային մշակույթի բաղադրատարրերի՝ պատմության, լեզվի, կրոնի, արվեստի, սովորույթների, ավանդույթների իմացությունը, ազգային կենսակերպին հարազատությունը, իրեն որպես տվյալ ազգի ներկայացուցիչ գիտակցումը, ազգային մշակույթի, պատմական հուշարձանների, ազգային խորհրդանիշների նկատմամբ հուզական վերաբերմունքը, ըստ ազգի էթնոհոգեբանական առանձնահատկությունների՝ սոցիալական վարքի դրսևորումը, քաղաքացիական դիրքորոշումը, քննադատական մտածողությունը, ազգային ու համամարդկային հիմնախնդիրների լուծման գործում իր ներդրումն ունենալու պատրաստակամությունը:

Չափի առելով ավագ դպրոցականների տարիքային առանձնահատկությունները, ազգային ինքնագիտակցության զարգացման դրդապատճառները, ինչպես նաև ազգային ինքնագիտակցության կառուցվածքային բաղադրատարրերը՝ էթնոմշակույթային միջավայրի առանձնահատկությունների գնահատում, իրեն որպես տվյալ էթնիկ հանրության սուբյեկտի գիտակցում, ազգի պատմական ակունքների իմացություն, նույնականացում, էթնիկ իրականության սոցիալ-նորմատիվային գիտակցում և այլն, մենք ճիշտ համարեցինք դիտարկել սովորողների ազգային ինքնագիտակցության զարգացման գործընթացի իմացական, գնահատողական և վարքային-գործունային բաղադրատարրերը:

Իմացական բաղադրատարրի համար որպես չափանիշ ընդգրկվել են հետևյալ բնութագրիչները՝

- իր և այլ ազգերի մշակույթի և պատմության իմացություն,

- իր ազգային պատկանելության վերաբերյալ պատկերացումներ, պատմամշակույթային իրողությունները վերլուծելու կարողություն, մայրենի լեզվի իմացություն,
- տարբեր ազգերի պատմական ճակատագրի, կենսուղու վերաբերյալ գնահատողական դատողություններ, ինքնուրույն վերլուծություններ կատարելու ունակություն, կայուն համոզմունքներ,
- գիտելիքները և կարողությունները տարբեր իրավիճակներում (ազգամիջյան բախումներ, ընդհարումներ) կիրառելու ունակություն, միջմշակույթային երկխոսության պատրաստակամություն.

Գնահատողական բաղադրատարրի չափանիշներն են՝

- իր և այլ ազգերի ներկայացուցիչների միջև փոխըփոխմաների ու փոխհարաբերությունների վերաբերյալ գնահատողական դատողություններ անելու կարողությունը,
- վերաբերմունքը մայրենի լեզվի և ազգային արժեքների նկատմամբ,
- իր ազգի արժեքային համակարգի, բնավորության, մտածելակերպի նկատմամբ հուզական ապրումների խորությունը,
- իր ազգի ներկայացուցիչների վարքի և գործունեության նկատմամբ քննադատական վերաբերմունքը, ռեֆլեքսիան:

Վարքային-գործունային բաղադրատարրը բնութագրվում է հետևյալ չափանիշ-ներով՝

- վարքային դրսևորումներում իր ազգին բնորոշ հատկանիշների արտահայտվածությունը,
- հաղորդակցման ընթացքում անադարտ, օտարաբանություններից, ժարգոնային և բարբառային տարրերից զերծ մայրենի լեզվի կիրառումը,
- իր և այլ ազգերի ներկայացուցիչների նկատմամբ դրական, հանդուրժողական գործողությունները:

Դիտարկված չափանիշների հիման վրա առանձնացվել են ավագ դպրոցական-ների ազգային ինքնագիտակցության զարգացվածության բարձր, միջին և ցածր մակարդակները՝ ըստ վերոնշյալ չափանիշների:

Ազգային ինքնագիտակցության բարձր մակարդակի տիրապետող սովորողների մեջ ձևավորված են իր ազգային պատկանելության, իր և այլ ազգերի պատմության, մշակույթի, մտածելակերպի, հոգեկերտվածքի, կենսակերպի վերաբերյալ խոր և կայուն գիտելիքներ: Բարձր մակարդակ ունեցող դպրոցականը դրական է վերաբերվում իր և այլ ազգերի ներկայացուցիչների նկատմամբ, օժտված է հանդուրժողականությամբ, համագործակցային, հաղորդակցային որակներով, ճկուն արձագանքում է ազգային և համամուրակային հիմնախնդիրներին, դրանց լուծման գործում կարևորում է իր սեփական ներդրումը, տարածաշրջանային և համաշխարհային դեպքերի ու իրադարձությունների նկատմամբ դրսևորում է քննադատական, գնահատողական վերաբերմունք, տիրապետում է մայրենիի հարուստ բառապանծին, բայց և կարողանում է հաղորդակցվել օտար լեզուներով, վարքում արտացոլվում են իր ազգին բնորոշ գծերը, էթնոպաշտպան մեխանիզմները, արագորեն յուրացնում է ազգային խորհրդանիշներն ու կարծրատիպերը, գերծ է բարդույթներից, բախումնային իրավիճակներում դրսևորում է լայնախոհություն և հակված է երկխոսության:

Ազգային ինքնագիտակցության միջին մակարդակի տիրապետող ավագ դպրոցականը ոչ հստակ պատկերացումներ ունի իր ազգային պատկանելության, ազգային մշակույթի, պատմության, նկարագրի վերաբերյալ: Նրան քիչ են հուզում ազգային խնդիրները. դրանցով հետաքրքրվում է ըստ իրավիճակների, երբ անմիջապես կանոններն առնչվում են իր անձին և ընտանիքին: Հաճախ է քննադատական դատողություններ անում՝ առանց խորությամբ ըմբռնելու և վերլուծելու երևույթներն ու իրադարձությունները: Հետաքրքրություն է դրսևորում սոսկ ազգային կյանքի առանձին դրվագների նկատմամբ, այլ ազգերի պատմության, մշակույթի, ազգամիջյան փոխհարաբերությունների նկատմամբ ուշադրություն է դրսևորում ժամանակ առ ժամանակ: Տիրապետում է մայրենի լեզվին, սակայն խուսափում է բոլոր իրավիճակներում հաղորդակցվել գրագետ, մաքուր մայրենիով: Ազգային նկարագրին բնորոշ որոշ հատկանիշներ համարում է

Ժամանակավրեպ. ավելի հակված է օտարամոլության և գլոբալացման արդի գործընթացների:

Ազգային ինքնագիտակցության զարգացվածության ցածր մակարդակ ունեցող սովորողների մեջ բավարար չափով ձևավորված չեն իր և այլ ազգերի պատմության ու մշակույթի վերաբերյալ պատկերացումները:

Նրանք անտարբեր են ազգային արժեքների, իդեալների նկատմամբ, պատրաստ են հարմար առիթի դեպքում հեռանալ հայրենիքից՝ առաջնային համարելով նյութա-կան բարեկեցությունը: Յադրոդակցվում են մայրենիով, սակայն խոսքում գերակշռում են օտար շեշտադրումները, ժարգոնային արտահայտությունները: Միջազգային փոխհարաբերությունների նկատմամբ մակերեսային տեսակետներ ունեն, վերլուծելու, փաստարկելու, երևույթների միջև պատճառահետևանքային կապերը դիտարկելու կարողությունները թույլ են զարգացած: Բավարար չափով չեն տիրապետում ազգային խորհրդանիշների ու կարծրատիպերի:

Ա.Վ. Ախմերովան (55) համոզված է, որ ազգային ինքնագիտակցության և նրա բաղադրատարրերի արդյունավետ ձևավորումը պայմանավորված է օնտոգենեզում անձի սոցիալականացման գործընթացով: Ազգային ինքնագիտակցության կառուցվածքային բաղադրատարրերի ձևավորման և ամրապնդման հիմնական միջոցներն են շրջակա միջավայրը, ծագումը, տվյալ հասարակությանը բնորոշ գաղափարախոսու-թյունը, զանգվածային լրատվամիջոցները, տեղեկատվական և հեռահաղորդակցա-կան տեխնոլոգիաները, տվյալ հասարակության մեջ ընդունված իրավաօրենսդրա-

կան նորմերն ու բարոյականության չափանիշները, միջանձնային հաղորդակցման բնույթը, միջազգային երկխոսությունն ու փոխազդեցության բնույթը, ուսումնա-դաստիարակչական հաստատությունների գործունեության ուղղվածությունը, ազգային բնավորության առանձնահատկությունները, գլոբալացման արդի գործընթացների արագությունը, սոցիալ-մշակութային և ժողովրդագրական տեղաշարժերը, Էկոլոգիա-կան աղետները և այլն: Ազգային ինքնագիտակցության զարգացման գործընթացում կարևոր

գործոն է դեռահասների և պատանիների կողմից ազգային միասնության և համերաշխության ընկալումը, որի հիմքում ընկած են արյունակցական, հոգեֆիզիոլոգիական և հուզազգայական տեսանկյունները: Ազգային մասունքների, նյութական և հոգևոր արժեքների իմացությունը ոչ միայն հանգեցնում է ազգային պատկանելության զգացմանն ու գիտակցմանը, նույնականացմանը, այլ և դրանց հիման վրա ձևավորվում են քաղաքացիական որակներ: Ազգային ինքնագիտակցության հիման վրա են ձևավորվում ազգային զգացումները՝ արժանապատվությունը, ինքնահարգանքը, վեհացումը, ազգային լավատեսությունը, հպարտությունը, հայրենասիրությունը, բարոյականությունը, որոնց հիմքի վրա էլ ձևավորվում են հարգանքն ու հանդուրժողականությունն այլ ազգերի նկատմամբ, միջմշակութային երկխոսության պատրաստակամությունը, համամլորակային քաղաքական և էկոլոգիական գլոբալ հիմնախնդիրների գիտակցումը:

Ս.Ա. Ռետենգերը անձի ազգային և քաղաքացիական ինքնագիտակցության ձևավորումը կապում է նրա՝ աշխարհում իր տեղի իմաստավորման, իրեն որպես էթնոսի սուբյեկտ գիտակցման հետ: Այդ նպատակին հնարավոր է հասնել այն ժամանակ, երբ սովորողն ակտիվորեն ներգրավվում է իմացական գործունեության, երկ-խոսության մեջ, որը նրան կանգնեցնում է ընտրության առջև: Այդօրինակ իրավիճակներում լուծվում են կենսական կարևոր հարցեր, բացահայտվում են նախասիրություններ, համակրանքն ու հակակրանքը տարբեր իրողությունների նկատմամբ, արվում են ինքնուրույն եզրակացություններ և ընդհանրացումներ (96):

Բնականաբար, այսպիսի կարողությունների մշակման համար բացառիկ դեր է վերապահված ուսումնական հաստատություններին, որոնք և ստանձնում են ազգային

դաստիարակության համակարգի ձևավորման գործառույթներ:

Ազգային կրթության, ազգային դպրոցի ստեղծման հայեցակարգային գաղափարները, ըստ որոնց՝ մանկավարժական գործընթացը կառուցվում է ժողովրդի մայրենի լեզվի, պատմության, մշակույթի ուսումնասիրման հիման վրա,

արտահայտվել են Կ.Դ. Ուշինսկու, Լ.Ն. Տոլստոյի, Ն.Կ. Ռերիխի, Գ. Վոլկովի, Խ. Աբովյանի, Մ. Նալբանդյանի, Ստ. Նազարյանի, Ղ. Աղայանի և այլ մանկավարժների տեսական ու պրակտիկ գործունեության մեջ: Ժողովրդավարական գաղափարները հավաստում են ազգային և համամարդկային անխզելի կապի գիտակցման անհրաժեշտությունը: Ձևակերպվել են կրթության այնպիսի արժեքային կողմնորոշիչներ, որոնք ուղղված են սովորողների մեջ մարդասիրության, բարության, ինքնագիտակցության, բարոյական կատարելագործման համամարդկային գաղափարների զարգացմանը:

Ազգային դաստիարակության համակարգը ժողովրդի հոգևոր մշակույթի մի մասն է, ներհատուկ է միմիայն տվյալ ժողովրդին: Ազգային դաստիարակության համակարգի նպատակը ազգային ոգու և հոգևոր արժեքների ձևավորումն է: Յուրաքանչյուր ազգունի իր անկրկնելի հոգևոր աշխարհը, ազգային ոգին, որն ազգի հոգեբանական կերտվածքի հուղական դրսևորումն է: Ազգային դպրոցը պետք է տոգորված լինի ազգային ոգով՝ բացառելով ազգայնամոլության և այլ ազգերի արժանապատվության ոտնահարման դրսևորումները:

Ազգային դպրոցի գաղափարական հիմքերը ամրագրված են «Կրթության մասին» ՀՀ օրենքում. «Կրթության բնագավառում պետական քաղաքականության հենքն ազգային դպրոցն է, որի գլխավոր նպատակը մասնագիտական պատշաճ պատրաստվածություն ունեցող և համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված անձի ձևավորումն է» (19, էջ 7):

Ի մի բերելով արված դիտարկումները՝ կարելի է սահմանել ազգային դաստիարակության վերաբերյալ գաղափարական հետևյալ դրույթները՝

- ազգային դպրոցի նպատակն է դաստիարակել այնպիսի սերունդ, որը տիրապետում է ազգային ու համաշխարհային պատմությանն ու մշակույթին, ունակ է ստեղծագործաբար վերարտադրել ու փոխանցել ու մշակույթային արժեքներն ու սերունդների փորձը,

- ազգային դպրոցի գաղափարական հիմքերը պայմանավորված են տվյալ ազգի սոցիալ-մշակութային հատկանիշներով, պետական-հասարակական կառուցվածքով, հոգևոր կյանքով,
- ազգային դաստիարակության ելակետային հիմքը կրթական ծրագրերում, ազգային բնավորության, ազգային ոգու և հոգևոր մշակույթի գերակայությունն է,
- ազգային դպրոցի խնդիրն է նպաստել սովորողների ազատ զարգացմանը, ինքնորոշմանը, քննադատական և ստեղծագործական մտածողության ձևավորմանը, օգնել նրանց տիրապետելու աշխատանքային, գիտական, բարոյամշակութային կարողությունների ու հմտությունների, բացահայտել ստեղծագործական ներուժը, դաստիարակել ազգային ոգով:

Վ.Բ. Նովիչկովը նշում է, որ տարածաշրջանային կրթության բովանդակության մեջ պետք է խելամտորեն համադրվեն ազգային ու համամարդկային բաղադրատարրերը (86): Ազգային կրթության բովանդակության հիմքում \$.\$-ը ևս շեշտադրում է ազգային և համամարդկային գաղափարների միասնության գաղափարը՝ այդ միասնության մեջ առաջնային դիտելով ազգային ոգու արտահայտությունը, ազգային մշակութային ժառանգությանը հաղորդակցումը (109):

Բ.Ս. Գերշուևսկին կրթության արդյունավետության կառուցվածքային շղթայում՝ գրագիտություն, կրթվածություն, մասնագիտական կոմպետենտություն, մշակույթ, մենթալիտետ, կարևոր դեր է հատկացնում մենթալիտետին, այսինքն՝ ազգային մտավոր ներուժի խոստմանը կամ հոգեկերտվածքին՝ որպես կրթական հարացույցի մեթոդաբանական հիմք դիտարկելով սոցիոմի մենթալիտետի առանձնահատկությունների հաշվառումը (71):

Չասարակական-քաղաքական փոփոխությունները նոր խնդիրներ են առաջադրում ազգային դպրոցին. կրթական համակարգի առաջնությունը են ազգային վերածնունդը խորհրդանշող արժեքները վերագնահատելու, ազգային դիմագիծը ձևավորելու հիմնահարցերը:

Ավագ դպրոցում միջնակարգ կրթության պետական չափորոշիչներով սահմանված ուսումնական առարկաները պետք

Ե նպատակ առև ղղվելն դպրոց ա-կանների ազգային դաստիարակությանը և այն իմաստով և այդ համատեքստում ազգային ինքնագիտակցության զարգացմանը:

2.2. Ուսումնական առարկաների և դասղեկի ժամերի հնարավորություններն ավագ դպրոցականների ազգային ինքնագիտակցության զարգացման գործընթացում

Յանրակրթական ավագ դպրոցի բնագիտամաթեմատիկական հոսքի կրթության բովանդակությունն արտահայտող փաստաթղթերի վերլուծությունը ցույց է տալիս, որ մի շարք առարկաներ ունեն հետազոտության հիմնախնդրի լուծման ուղղությամբ բավականաչափ հնարավորություններ, այսինքն՝ կարող են ավագ դպրոցականների ազգային ինքնագիտակցության զարգացման կարևոր միջոց դառնալ:

Մենք հանգամանորեն ուսումնասիրել ենք «Յասարակագիտություն», «Յայոց և գրականություն», «Անգլերեն», «Աշխարհագրություն», «Յայոց պատմություն» և «Յամաշխարհային պատմություն», «Յայոց եկեղեցու պատմություն», «Կենսաբանություն», «Յանրահաշիվ և մաթեմատիկական անալիզի տարրեր», «Երկրաչափություն» դասընթացների առարկայական չափորոշիչները, ծրագրերը, դասագրքերը՝ բացահայտելու համար, թե այդ դասընթացների շրջանակներում ինչպիսի հնարավորություններ կան հետազոտության հիմնախնդրի համատեքստում:

Ավագ դպրոցի «Յասարակագիտություն» ինտեգրված առարկան, ներառելով գիտելիքներ մի շարք կարևոր բնագավառներից՝ գեղագիտություն, բարոյագիտություն, հոգեբանություն, տնտեսագիտություն, իրավագիտություն, քաղաքագիտություն, փիլիսոփայություն, կրթական մեծ ներուժ ունի մարդու աշխարհայացքի, մտածելակերպի, արժեքային համակարգի, իր և այլոց հանդեպ վերաբերմունքի ձևավոր-

ման առումով: Առարկայի ուսումնական նպատակների թվում շեշտադրվում է հայոց մտածելակերպի համար առավել ընդունելի աշխարհայացքային կողմնորոշիչների մշակումը, դրանց հիման վրա հայոց արժեհամակարգի՝ սովորողների համար հասկանալի ձևակերպումը՝ միաժամանակ հաշվի առնելով համամարդկային լավագույն արժեքներն ու մարդասիրական աշխարհայացքը: Կարևոր է, որ դպրոցական հասարակագիտական կրթության բովանդակությունը ուղղված լինի հայրենասիրության, քաղաքացիության դաստիարակմանը, հայոց ազգային ինքնագիտակցության բարձրացմանն ու հայոց և համաշխարհային մշակութային արժեքների գնահատմանն ու պահպանմանը (32, էջ 9):

Հասարակագիտական կրթությունը պետք է հնարավորություն տա նոր սերնդի մարդուն ընտրություն կատարելու աշխարհայացքների, կրոնական ու փիլիսոփայական համակարգերի, կենսակերպերի հորձանուտում, պետք է սովորողի մեջ զարգացնի խաղաղության մշակույթ՝ պահպանելով ազգային արժեքների համար պայքարելու ոգին ու պատրաստակամությունը (32, էջ 10):

Դասընթացում ընդգրկված բոլոր ենթահամակարգերի բովանդակային պարտադիր միջուկի ուսումնասիրությունը բացահայտեց ու շագրավ հնարավորություններ մեր հետազոտության հիմնախնդրի տեսանկյունից: «Գեղագիտություն» առարկայի շրջանակներում, օրինակ, շոշափվում են գեղեցիկի պահպանման, առողջ ապրելակերպի, արվեստի գեղագիտական կողմերի, հայկական արվեստի և գեղեցիկի հայկական իդեալի հիմնախնդիրները (32, էջ 11):

«Բարոյագիտություն» առարկայի յուրացումը նպաստում է բարոյական արժեքների, մշակութային տարբեր համակարգերում դրանց դերի, համամարդկային բարոյականության և ազգային բարոյական նկարագրի, գործարար էթիկայի և մեդիա էթիկայի վերաբերյալ պատկերացումների ձևավորմանը (32, էջ 11):

«Հոգեբանություն» առարկայի ուսուցումը կարևոր է այն առումով, որ ավագ դպրոցականը, ի թիվս այլ գիտելիքների, ձեռք է բերում գիտելիքներ անձի ուղղվածության՝ դրդապատճառների,

պահանջ մուկներին, հետաքրքրությունների, համոզմունքների, հայացքների, աշխարհայացքի, արժեքային համակարգի մասին, պատկերացում է կազմում անձի սոցիալականացման, սոցիալական դերերի, պաշտպանական մեխանիզմների, ժամանակակից հայ ընտանիքում գենդերային հարաբերությունների, մարդկային փոխհարաբերությունների հոգեբանություն, զիջո-դականություն, կոնֆորմիզմի, հանդուրժողականություն մասին, որը ազգային ինքնագիտակցության զարգացման անհրաժեշտ միջոց է (32, էջ 12):

Ազգային ինքնագիտակցության զարգացման համար բավականաչափ ներուժ ունի «Քաղաքագիտություն» առարկան: Պետության բնութագրիչների, օրենքի և իրավունքի, քաղաքական գործընթացների ու գաղափարախոսության ուղղությունների, արտաքին քաղաքականության, ազգային շահերի ու ազգային անվտանգության, աշխարհաքաղաքականության, խաղաղության ու հակամարտության, Կովկասում էթնիկ և աշխարհաքաղաքական շահերի բախման հիմնահարցերը, որոնք ընդգրկված են առարկայի բովանդակային միջուկում, անչափ կարևոր են ավագ դպրոցականների ազգային դաստիարակության իրականացման և ազգային ինքնագիտակցության զարգացման գործում (32, էջ 16-17):

«Փիլիսոփայություն» առարկան առանձնահատուկ հնարավորություն ունի հետազոտության հիմնախնդրի լուծման գործում: Հատկապես մարդու հիմնախնդրին, ժամանակակից հասարակության առանձնահատկություններին, համաշխարհայինացմանը և ժամանակակից հայ հասարակության վրա դրա ունեցած ազդեցությունը, Հայաստանում դրական տեղաշարժերին ու բացասական միտումներին, ազգային մշակույթի պահպանման հիմնահարցերին նվիրված թեմաները կարող են կարևոր միջոց դառնալ ազգային ինքնագիտակցության զարգացման գործում (32, էջ 17):

Այնուհանդերձ պետք է նշել, որ «Հասարակագիտություն» դասընթացին ավագ դպրոցի բնագիտամաթեմատիկական հոսքում հատկացվում է 10-րդ դասարանում շաբաթական 2 (տարեկան 68 ժամ), 11-րդ դասարանում՝ 1,5 (տարեկան 51 ժամ), 12-րդ դասարանում՝ շաբաթական 1 (տարեկան 17 ժամ), որը դեռևս բավարար միջոց չէ այդ

կարևոր բնագավառների ամբողջ ներուժը հետազոտության հիմնախնդրի լուծմանը ծառայեցնելու համար:

Պատմության հիմնարար գիտելիքների տարածման և ամրապնդման հասարակական-քաղաքական նշանակությունը գիտակցվել է բոլոր հասարակար-գերում. այդ գիտելիքները ազգային ինքնագիտակցության զարգացման կարևոր միջոց են: «Յամաշխարհային պատմություն» առարկայի ավագ դպրոցի ընդհանուր և բնագիտամաթեմատիկական հոսքերի առարկայական հայեցակարգի գլխավոր դրույթներում նշվում է, որ համաշխարհային քաղաքակրթության գործ-ընթացներում վճռական գործոն են ազգային քաղաքակրթական նվաճումները, ընդսմին հայկականը դիտարկվում է որպես միջքաղաքակրթական մի ուրույն աշխարհ՝ ազգային և տարածաշրջանային առումներով: Վճռական գործոն են նաև ազգը, նրա հասարակական կառույցները և պայքարը հանուն գոյատևման ու բարգավաճման, ուստի վերոնշյալ դասընթացում գլխավոր ուշադրությունը պետք է դարձնել պատմական զարգացման տվյալ փուլում առաջին գծում գտնվող ազգերին ու հասարակություններին: Յանրակրթական դպրոցում պատմագիտական կրթության հիմնական բովանդակային ուղղությունները վերաբերում են պատմական տարածքներին, պատմական զարգացման աշխարհաքաղաքական գործունեություն, մարդու և մարդկային հասարակության ծագմանն ու զարգացմանը, մշակութաբանական, էթնոազգային՝ էթնիկ հանրությունների ձևավորումն ու դրանց զարգացման գործընթացը պատմական տարբեր դարաշրջաններում, աշխարհաքաղաքական, արժեքանական՝ ազգային և համամարդկային արժեքների ձևավորումը հասարակության մեջ և այլն, կողմերին, որոնք դպրոցականների ազգային ինքնագիտակցության զարգացման գործում մեծ դեր և նշանակություն ունեն: «Յամաշխարհային պատմություն» դասընթացը՝ որպես կարևոր միջոց, արժևորվում է նաև նրանով, որ էական են առնչությունները և միջառարկայական կապերը բնագիտամաթեմատիկական առարկաների, աշխարհագրության, լեզուների, իրավագիտության, հասարակագիտության և այլ դասընթացների հետ: Առարկայի ուսումնական նպատակները ևս

ուղղված են հետազոտության հիմնախնդրի լուծմանը, մասնավորապես սովորողների մեջ արժեքային կողմ-նորշման և անհատական համոզմունքների ձևավորում աշխարհի տարբեր ժողովուրդների պատմամշակութային ավանդույթների նկատմամբ հարգանքի, քաղաքացիական և ազգային ինքնագիտակցության, մարդասիրական գաղափարների, մարդու և քաղաքացու իրավունքների ու ժողովրդավարական արժեքների դաստիարակության հիման վրա (44, էջ 136-139): Արևելյան և արևմտյան քաղաքակրթությունների սոցիալական և մշակութային պատմության վերաբերյալ գիտելիքների հիման վրա ավագ դպրոցականներն առավել խորությամբ են ընկալում և իմաստավորում հայ ազգի տեղն ու դերը, անցյալը, ազգային ինքնորոշման ներկա զարգացումներն ու քաղաքակրթության զարգացման հեռանկարներն ու մշակութային զարգացման միտումները:

Յուրաքանչյուր ժողովրդի պատմությունը նրա անցած ուղին է, նրա կենսագրությունն ու հիշողությունը, դարերի հոլովույթում նրա կերտած հոգևոր և նյութական արժեքների արողջությունը: Հայոց պատմության իմացության միջոցով են հիմնականում ձևավորվում հայ ազգային ինքնագիտակցությունն ու մտածողությունը, նրա միջոցով է աճող սերունդը հաղորդակցվում իր ժողովրդի անցյալին, պատմամշակութային ժառանգությանը: Պատմությունը աշխարհաճանաչողության և ինքնաճանաչողության հիմքն է: Սեփական պատմության իմացությունը հնարավորություն է տալիս իրականացնելու ազգային նպատակները, պահպանելու և ապահովելու հայ ազգի և պետության գոյությունն ու շարունակականությունը: Հայոց պատմությունը բովանդակում է դաստիարակչական վիթխարի ներուժ՝ աճող սերնդի համար հանդիսանալով հայրենասիրության, անձնուրաց պայքարի և ազգային արժանապատվության ապացույցների անսպառ աղբյուր (44, էջ 5):

Հիմք ընդունելով այն առանցքային գաղափարը, որ պատմության միջոցով է պահպանվում ու փոխանցվում ազգերի

ու ժողովուրդների պատմական հիշո-ղությունը՝ ավագ դպրոցի «Հայոց պատմություն» առարկայի հայեցակարգում սահմանվում են մի շարք մոտեցումներ՝ պատմական կրթության հիմքում դնել ազգային առանձնահատուկ նպատակներ, որոնք բխում են Հայաստանի, հայ ժողովրդի բազմադարյան հարուստ փորձից՝ հաշվի առնելով համաշխարհային պատմության փորձն ու համամարդկային արժեքները, կարևորել մշակույթի ազգապահպան, էթնոպաշտպան գործառույթները, ազգային մշակույթի միջոցով իրակա-նացնել էթնիկական սոցիալականացումը, մշակույթ, որի միջոցով պահպանվում, վերարտադրվում և զարգանում է հայոց արժեհամակարգը (44, էջ 6-7):

«Հայոց պատմություն» առարկայի բովանդակային պարտադիր միջուկի առանցքը կազմող թեմաները՝ հայկական պետականության, մշակույթի հարուստ ժառանգության, ազատության և անկախության համար մղված պայքարի պատմությունը ծառայում են դասավանդման գլխավոր նպատակին՝ ազգային և համամարդկային արժեքների իմացության և արժևորման միջոցով նպաստել աճող սերնդի ազգային նկարագրի ամբողջականացմանը:

Բնականաբար, դասընթացի բոլոր թեմաներն անխտիր նպատակաւողոված են ավագ դպրոցականների ազգային ինքնագիտակցության զարգացմանը, հայոց հայրենիքի ճանաչմանը՝ որպես հայ ժողովրդի պատմամշակութային տարածքի, հայության պատմական հիշողության և ազգային ինքնագիտակցության նյութա-կան կրողի: Սակայն ավագ դպրոցի բնագիտամաթեմատիկական հոսքում «Հայոց պատմություն» դասընթացին հատկացված ժամաքանակը 10-12-րդ դասարան-ներում շաբաթական 2, տարեկան 68 ժամ, բավարար չեն հզոր ներուժ ունեցող նշված դասընթացի հնարավորությունները լիարժեքորեն ծառայեցնելու մեր հետազոտության հիմնախնդրի լուծմանը: Հատկապես 12-րդ դասարանում, երբ դպրոցականները պատրաստվում են ավարտական և միասնական քննություն-ներին և նախընտրում են 2-3 առարկա խորութամբ յուրացնել, մանավանդ

որ նշված հոսքում նախապատվությունը տրվում է բնագիտամաթեմատիկական առարկաների խորյուրացմանը:

Ավագ դպրոցականների ազգային ինքնագիտակցության զարգացման կարևոր միջոց են նաև օտար լեզուների դասընթացները, որոնք հնարավորություն են տալիս ամենատարբեր բնագավառներից ձեռք բերել տեղեկատվություն և գիտելիքներ՝ նպաստելով սովորողների տրամաբանական մտածողությանը, ճանաչողական կարողությունների զարգացմանը: «Օտար լեզուն, լինելով իր լեզվակիր ժողովրդի մշակույթի էական տարրը և այլ ժողովուրդներին այդ մշակույթը փոխանցելու միջոց, նպաստում է աշխարհի ամբողջական պատկերի ձևավորմանը, ժողովուրդների փոխըմբռնմանն ու մշակութային դրական հարաբերությունների ամրապնդմանը», - նշված է «Օտար լեզու» ուսումնական առարկայի հայեցակարգում (3, էջ 8):

Օտար լեզուների իմացությունն ընդլայնում է սովորողների աշխարհայացքը, աշխարհաճանաչողությունը. այլ երկրների ու ժողովուրդների մշակույթին, քաղաքակրթությանը հաղորդակցումը, դրանց հոգևոր-մշակութային արժեքների յուրացումը առավել ևս նպաստում են ազգային մշակույթի ճանաչմանը, ազգային ինքնագիտակցության զարգացմանը, ինքնորոշմանն ու ինքնադրսևորմանը: Ուսումնասիրվող լեզվի երկրների պատմության, մշակույթի և լեզվակիր ժողովրդի հասարակական կյանքի մասին գիտելիքները՝ աշխարհագրական տեղեկությունները, կենցաղի, կենսամակարդակի հետ առնչվող առանձնահատկությունների, ավանդույթների, սովորույթների, բարոյական արժեքների առանձնահատկությունների, պետական խորհրդանիշների, քաղաքականության, կրթության, գիտության, կրոնի, պատմության, արվեստի, գրականության, գեղանկարչության, կինեմատոգրաֆիայի բնագավառների և նշանավոր մարդկանց ստեղծագործական կյանքի փաստերը, վարքի նորմերի իմացությունը, մի խոսքով՝ հանրամշակութային գիտելիքները ընդլայնում են դպրոցականների ճանաչողության շրջանակները՝ լայն հնարավորություններ ընձեռելով համեմատելու ազգային

տնտեսական, քաղաքական, սոցիալ-մշակութային, կենցաղային ոլորտներում նմանություններն ու տարբերությունները:

Ավագ դպրոցի աշխարհագրության դասընթացները կրթադաստիարակչական բացառիկ գործառույթ ունեն, որով սովորողի համար մեծ հնարավորություն են ստեղծում համամոլորակային բնական ու հասարակական երևույթները ճանաչելու միջոցով գնահատել սեփական հայրենիքի տեղն ու դերը հարափոփոխ աշխարհում: Աշխարհի միասնականության և բազմազանության վերաբերյալ փիլիսոփայական դրույթների, ժամանակակից աշխարհի քաղաքա-

կան կառուցվածքի, Յայաստանի և տարածաշրջանի աշխարհագրական ու տնտեսական իրավիճակի մասին գիտելիքները, համամոլորակային էկոլոգիական հիմնախնդիրների ու համաշխարհայնացման հետևանքների մասին պատկերացումները ձևավորում են ազգային-պետական մտածողություն, իր ժողովրդի նյութական և հոգևոր արժեքները պահպանելու և զարգացնելու, ազգամիջյան և միջազգային հարաբերություններում փոխադարձ հարգանքի, հանդուրժողականության անհրաժեշտության գիտակցում (4, էջ 5-7): «Աշխարհագրություն» դասընթացի շրջանակներում իրականացվող ստեղծագործական բնույթի հետազոտական աշխատանքները, քաղաքական, տնտեսական, մշակութային և սոցիալական հիմնախնդիրների լուծման ինքնուրույն նախագծերը նպաստում են ավագ դպրոցականների տրամաբանական և ստեղծագործական մտածողության զարգացմանը՝ կարևոր միջոց դառնալով նաև ազգային ինքնագիտակցության զարգացման համար:

Ավագ դպրոցականների ազգային ինքնագիտակցության զարգացման գործում բացառիկ կարևոր նշանակություն ունի «Յայոց եկեղեցու պատմություն» դասընթացը: Այդ առարկայի 10-րդ և 11-րդ դասարանների դասընթացները համապատասխանաբար կոչվում են «Քրիստոնեական բարոյագիտություն» և «Քրիստոնեական ազգային արժեհամակարգը և մշակույթը»: Ամբողջական պատկերացում կազմելով քրիստոնեական բարոյագիտության վերաբերյալ, հաղորդակցվելով քրիստոնեական հավատի առանցքը

կազմող քրիստոնեական բարոյագիտության հիմնարար արժեքներին, ազգային հիմնարար արժեքներին, քրիստոնեական-ազգային արժեհամակարգին, քրիստոնեական-ազգային մշակույթի տարբեր ուղղու-թյունների խորհրդաբանությանը՝ դպրոցականները կարող են յուրացնել շատ արժեքավոր գաղափարներ: Դասընթացի թեմաները, որոնք շոշափում են քրիստոնեական բարոյագիտության և իդեալի, մարդ-անհատի դերի և առաքելության, ազատ կամքի և բանականության, քրիստոնեական բարոյագիտության կանոնա-կարգած առաքինության ուղիների, հայոց եկեղեցու ծեսերի ու բարեպաշտական սովոր-րույթների, աշխարհայացքի, քրիստոնեական-ազգային արժեհամակարգի, ազգային-

հոգևոր նկարագրի, ազգի, էթնիկական ինքնագիտակցության, հայրենիքի ու ազգասիրության, անկախության ու պետականության, ընտանիքի, ազգային մշակույթի, ազգային խորհրդանիշների հիմնահարցերը, դպրոցականների ազգային ինքնագիտակցության զարգացման անփոխարինելի միջոց են (30):

Հանրակրթական ավագ դպրոցում «Կենսաբանության ուն», «Քիմիա», «Ֆիզիկա», «Հանրահաշիվ և մաթեմատիկական անալիզի տարրեր» և «Երկրաչափության ուն» առարկաները՝ որպես բնագիտամաթեմատիկական հոսքի հիմնարար և մեծ ժամաբանակով ուսուցվող դասընթացներ, կրթական մեծ ներուժ ունեն սովորողների իմացական ոլորտի, կամային ու անհատական հատկանիշների զարգացման տեսանկյունից: Ճիշտ է, հետազոտության հիմնախնդրի շրջանակներում նշված դասընթացներն ուղղակիորեն բավականաչափ մեծ ներուժ չունեն, այնուհանդերձ էական ազդեցություն ունեն դպրոցականների աշխարհայացքի ձևավորման, տրամաբանական մտածողության զարգացման առումով, որոնք ազգային ինքնագիտակցության զարգացման համար մեթոդաբանական հիմք են: Այսպես, օրինակ, «Հանրահաշիվ և մաթեմատիկական անալիզի տարրեր» և «Երկրաչափության ուն» ուսումնական առարկաների հայեցակարգերում նշված են, որ մաթեմատիկան՝ որպես աշխարհում հայտնի ճշգրիտ բանական կառույց, ունի հիմնարար

դեր գիտության տարբեր բնագավառներում համակարգված ու ճշգրիտ գիտելիքներ ստանալու համար, և անփոխարինելի դեր ունի մարդու աշխարհայացքի ձևավորման գործում: Յանրահաշվի ու սուցման միջոցով ձևավորվող մտքերի հստակությունը, վերլուծական կարողությունները նպաստում են ստեղծագործական ունակությունների ձևավորմանը: Յանրահաշվի յուրացման արդյունքում դատողություններն ունեն հստակ, կուռ տրամաբանական կառուցվածք, զարգանում է սովորողների ոչ միայն տրամաբանական և ալգորիթմական մտածողությունը, այլև՝ լեզվամտածողությունը: Առարկայի ու սուցման նպատակների թվում շեշտադրվում են նաև սովորողների հոգևոր դաստիարակությունը, ազգային-հայրենասիրական զգացմունքների, անհատների ու ժողովուրդների նկատմամբ հարգանքի ձևավորումը, սովորողի իմացական ոլորտի, կամային ու անհատական հատկանիշների զարգացումն ու ձևավորումը, գեղագիտական ընկալման խտացումը (31, էջ 5-6):

«Կենսաբանություն» դասընթացը ևս որոշակի հնարավորություններ ունի սովորողների գիտական աշխարհայացքի ու մտածողության ձևավորման, օրգանական աշխարհի էվոլյուցիոն գործոնների ու արդյունքների, էկոլոգիական համակարգերի, կենսոլորտի մասին գիտելիքների ձևավորման և դրանց հիման վրա աշխարհաճանաչողության, քաղաքակրթության զարգացման ընկալման, բնութան հետ ներդաշնակ ապրելու անհրաժեշտության ըմբռնման համար: Ժառանգականության հիմնական օրինաչափությունների, գենոտիպի ու գենոֆոնդի, մուտացիոն գործոնների, մարդու՝ որպես կենսասոցիալական էակի, անթրոպոգենեզի շարժիչ ուժերի, մարդկության սոցիալական առաջընթացում հասարակական կյանքի առաջատար դերի վերաբերյալ գիտելիքներն ու պատկերացումները կարող են դարձնել հասարակական ազգային ինքնագիտակցության զարգացման միջոց հանդիսանալ:

Յանրակրթական ավագ դպրոցի ֆիզիկայի խորացված ու սուցումը ևս նպատակաուղղված է սովորողների գիտական աշխարհայացքի ու մտածողության ձևավորմանը

ստեղծագործական ունակությամբ, հիշողությամբ, դիտողականությամբ, երևակայությամբ զարգացմանը, բնապահպանական գիտելիքների ձեռք-բերմանը, բնության պահպանության նկատմամբ անձնական պատասխանատվության գիտակցության ձևավորմանը, որը կարևոր գործոն է հետազոտության հիմնախնդրի լուծման գործում:

Ավագ դպրոցում, բացի ուսումնական դասընթացներից, ազգային - հոգևոր դաստիարակությունն իրականացնելու համար մեծ հնարավորություն են ընձեռում դասղեկի ժամերը: Դասղեկի ժամը դպրոցականների կյանքում մեծ դեր կարող է խաղալ, եթե այն նպատակային ու հետաքրքիր է կազմակերպված: Յուրաքանչյուր դասղեկ ինքն է ընտրում դասղեկի ժամերի թեմատիկան, սակայն գաղտնիք չէ, որ որոշ դասղեկներ լուրջ չեն մոտենում այդ ժամերի կազմակերպմանն ու անցկացմանը: Մինչդեռ դասղեկի ժամերին պետք է մանրակրկիտ պատրաստվել: Դպրոցում դասղեկի ժամն անցկացվում է շաբաթը մեկ անգամ: Որպեսզի դասղեկի ժամերը հետաքրքրեն բոլոր աշակերտներին, և նրանք ցանկությամբ ու հայտնեն մասնակցելու դրանց նախապատրաստման աշխատանքներին, կարելի է սովորողներին հայտնել դասղեկի ժամերի թեմաները և նրանցից յուրաքանչյուրին հնարավորություն տալ մասնակցելու այդ ժամերի նախապատրաստմանն ու անցկացմանը: Այս աշակերտներն իրենց հավաքած նյութերը պետք է վերլուծեն դասղեկի հետ, մշակեն համապատասխան պլան: Ինչի՞ց սկսել. չէ՞ որ հայ ժողովուրդն աչքի է ընկնում ազգային արժեքների հարստությամբ: Ավագ դպրոցականի ազգային-հոգևոր նկարագիրը ձևավորող ամենակարևոր հատկանիշներն են լեզուն, հավատը, սեփական ժողովրդի պատմության, գրականության իմացությունը, նրա պատմա-արտարապետական հուշարձանների ճանաչումն ու արժևորումը: Անձի հոգևոր զարգացման, գեղագիտական իդեալների, ազգային ինքնագիտակցության ձևավորման գործում մեծ դեր են խաղում նաև հայկական ժողովրդական և հոգևոր երգերը, ազգային պարերը, ծեսերը, տոներն ու ավանդույթները, հայրենի բնությունն ու էկոլոգիական դաստիարակությունը: Որ-պեսզի հայ

դարոցականը գիտակցի և որպես մնայուն ազգային արժեք ճանաչի մայրենին, անհրաժեշտ է տարեցտարի խորացնել մայրենի լեզվի և սուրբ հավատի ոգեղեն արժեքների մասին գիտելիքները՝ նորանոր տեղեկությունների ու փաստերի գույքորդումներով:

«Հայ գրերի գյուղը և Մեսրոպ Մաշտոցը» թեմայի ուսումնասիրությունը պահանջում է տարբեր տեղեկատվական աղբյուրներից անհրաժեշտ նյութերի որոնում և համադրում, որը կատարվելու է բացառապես աշակերտների ջանքերով, որպեսզի նրանք նաև ստանան գեղագիտական հաճույք, երկյուղածությամբ լցվեն ամեն մի նյութի մեջ մայրենիի հանդեպ հայոց մեծերի ցուցաբերած սիրո ու պաշտամունքի, գնահատանքի ու մեծարման ազնիվ մղումների նկատմամբ: Մեր նախնիները տառերի ստեղծման մեջ հրաշք են տեսել, իսկ գիրն ստեղծող հայրենանվեր գործչին փառավորել սրբի լուսապսակով: Այս թեմայով դասղեկի ժամերի ընթացքում անհրաժեշտ է հատվածներ ընթերցել Կորյունի «Վարք Մաշ-

տոցի» երկից, Լեոյի «Մեսրոպ Մաշտոց» աշխատությունից, Պ. Սևակի «Եվ այր մի՛ Մաշտոց անուն» պոեմից, «Թրի դեմ գրիչ» հոդվածից, Մ. Գալշոյանի «Մամփրե արքան» պատվածքից, Արա Աբգարյանի «Անդորրության արարիչը» աշխատությունից և այլն, արտասանել հայ գրողների՝ Մաշտոցին ու մայրենի լեզվին նվիրված ասույթներ, բանաստեղծություններ:

Զպետք է մոռանալ նաև հոգևոր դաստիարակության մասին: Աշակերտների ուշադրությունը պետք է հրավիրել քրիստոնեական պատվիրաններին. այդ պատվիրանները բարոյականության դասեր են տալիս, ձևավորում են հոգևոր բարձր հատկանիշներ: «Աստվածաշունչը» ամեն մի քրիստոնյայի կյանքի դասագիրքը պիտի լինի, ուստի կարևոր է, որ բոլոր աշակերտները ընթերցեն այն, դարձնեն իրենց հոգու ուղեցույցը: Դաստիարակչական առումով չափազանց ուսանելի են աստվածաշնչյան առակները. կարելի է մի ամբողջ դասղեկի ժամ նվիրել դրանց ուսումնասիրությանը: Ուսուցիչը դասարանը կարող է բաժանել 2-3 հոգանոց խմբերի՝ յուրաքանչյուր խմբի

հանձնարարելով աստվածաշնչյան մի քանի առակ: Աշակերտները պետք է պատմեն առակները, բացատրեն այլաբանական իմաստը, մատնանշեն ուսանելի հատվածները: Արժեքային համակարգ են ձևավորում մեր պատմական հուշակոթողները՝ Էջմիածնի Մայր տաճարը, Գառնին ու Գեղարդը, Նորավանքն ու Խոր Վիրապը, Սարգարապատի հուշահամալիրն ու Սաղմոսավանքը, Նոր Ջուղայի եկեղեցիներն ու Աղթամարա վանքը, հայ ժողովրդի հոգևոր հարստության ամենամեծ վկան՝ Մատենադարանը: Առանձին դասղեկի ժամեր կպահանջվեն այս և մյուս կարևոր պատմադրությամբ տարապետական հուշարձանների մասին տեղեկությունների պատրաստման և յուրացման համար: Որպես ազգային գիտակցությունը կազմավորող հիմնաքար՝ ավագ դպրոցականի արժեքային համակարգի ձևավորման գործում կարևոր դեր կարող են խաղալ նաև մեր մեծ հայրենասերների՝ Անդրանիկի, Նժդեհի, Դրոյի, Թևանի և շատ ուրիշների ապրած կյանքն ու գործունեությունը, Սարգարապատի հերոսներ Դանիել Բեկ և Պողոսբեկ Փիրումյանների, Սիլիկյանի անմոռաց կերպարները, Ղարաբաղյան պատերազմում անմահացած հերոսների հավերժող օրինակները: Ուսանելի է Ա. Ղանալանյանի «Ավանդապատումից» հատվածները ներթրեցել Դավիթ - Բեկի և հայ ազգային այլ հերոսների, \$իդայիների մասին:

Դասղեկի ժամերից մի քանիսն էլ կարելի է նվիրել «Հայրենասիրությունը սկսվում է ընտանիքից», «Ընտանիքի դերը պատանու դաստիարակության գործում», «Պարտքի և պատասխանատվության գիտակցում», «Բարոյականության դասերը մարդկության պատմության մեջ», «Ի՞նչ էին գրում թերթերը Արցախյան հերոսամարտի օրերին» թեմաների ուսումնասիրմանը:

Որպես ազգային ինքնագիտակցությունը կազմավորող հիմնաքար՝ ավագ դպրոցականի արժեքային համակարգի վերջնական ձևավորման գործում մեծ են նաև բնության ու էկոլոգիական դաստիարակության հարցերը: Բնությունը անձի հոգեկերտվածքի ձևավորման, ներաշխարհի հարստացման հզոր ակունք է, ոգեշնչման աղբյուր: Բնության պահպանումն ինքնին մարդու պահպանման գործընթաց է, քանզի մարդը բնության անբաժանելի մասն է:

Կենդանի բնության և շրջակա միջավայրի հանդեպ սիրո սերմանումը Էկոլոգիական դաստիարակության հիմքն է: Որպեսզի դարոցականը սիրի բնությունը, շրջապատող աշխարհը, ուշադիր և հոգատար կլինի նրա նկատմամբ, հարկավոր է հաճախակի կազմակերպել Էքսկուրսիաներ, զբոսանքներ, շրջագայություններ բնության գրկում, որի ժամանակ դարոցականների մեջ անհրաժեշտ է սերմանել ակնածանքի, հպարտության զգացում Արարատ լեռան, Մայր Արաքսի, Սրբազան Արածանիի, հայոց խաչքարերի, մամռակալած վանքերի ու եկեղեցիների հանդեպ: Կարևոր է նաև Էկոլոգիական դաստիարակության ազգային-հայրենասիրական կողմի ապահովումը: Ուսուցիչն աշակերտների մեջ հետևողականորեն պիտի ձևավորի այն համոզմունքը, որ պահպանել բնությունը նշանակում է պահպանել հայրենիքը: Չէ՞ որ յուրաքանչյուր մարդու համար հայրենիքի գաղափարը կապված է հայրենի բնության հետ: Բնության մեջ ճիշտվարքագիծ դրսևորելու համար անհրաժեշտ է նաև, որ աշակերտները դասղեկի ժամերի ընթացքում ընթերցեն դասղեկի կողմից նախորոք ընտրված գեղարվեստական ստեղծագործություններ, դիտողական օրինակների վրա հասկանան, թե բնության մեջ ինչն է կարելի, ինչը՝ ոչ:

Մարդ-բնություն և հարաբերակցության գաղափարն է շոշափված Յամաստեղի «Չալոն» պատմվածքում, Անտուան դը Սենտ-Էքզյուպերիի «Փոքրիկ իշխանը» վիպակում, Յ. Սահյանի, Մ. Գալչոյանի, Յր. Մաթևոսյանի բնափիլիսոփայական ստեղծագործություններում:

Կիսամյակի ավարտին կամ տարեվերջին ցանկալի է կազմակերպել հայրենասիրական զանազան միջոցառումներ, հանդիպումներ Արցախյան հերոսամարտի մասնակիցների հետ, անցկացնել երաժշտական երեկոներ, զեկուլցումներ, դասախոսություններ, բանավեճեր արվեստի և գրականության վերաբերյալ՝ ի մի բերելով դասղեկի ժամերին ստացած գիտելիքները:

Դարոցականների ազգային ինքնագիտակցության զարգացման միջոցները բավական շատ են ու բազմազան: Եթե դրանք ճիշտ ու փոխկապակցված օգտագործվեն, ապա դասղեկի ժամերը կդառնան և՛

հետաքրքիր, և՛ կնպաստեն դարո-ցականների ազգային ինքնագիտակցության զարգացմանը:

Կրթության բովանդակությունը կազմող հանրակրթական բուհոր առարկաներում այդ խնդիրների իրագործման մեջ առանձնահատուկ դեր է վերապահված գրականությունը, որի կրթադաստիարակչական ներուժը հետազոտվող հիմնախնդրի շրջանակներում կդիտարկվի հաջորդիվ:

2.3. Գրականությունը՝ որպես անձի ազգային ինքնագիտակցության զարգացման առաելլ արդյունավետ միջոց

Անձի աշխարհայացքի ձևավորման գործում կարևոր նշանակություն ունեն մշակութային արժեքները, հատկապես գրական ստեղծագործությունները: Ժողովրդի գրական ժառանգության դերը մեծ է ոչ միայն ազգային ինքնագիտակցության զարգացման, այլև աշխարհաճանաչողության և իրականության գեղագիտական յուրացման տեսանկյունից:

Գրականությունը ժողովրդի հոգևոր կյանքի արտացոլումն է, նրակենցաղի և գործունեության հայելին, բարոյական նորմերի ընտրանին, նախնիների հոգևոր

ժառանգությունը, անցյալի խորացումը, ներկայի իմաստավորումը և ապագայի տեսլա-

կանը: Գրական երկերի միջոցով իմանալով անցյալը՝ հնարավոր է ճանաչել ոչ միայն սեփական ազգի, այլև աշխարհի ժողովուրդների պատմությունը, կենսափիլիսոփայությունը, իդեալները, պատմական ճակատագիրը:

Գրականությունը անփոխարինելի նշանակություն ունի մարդու դաստիարակության գործում. այն մարդու հոգու վրա ներազդելու հզոր ուժ ունի: Ներկայումս, երբ աճող սերունդը հայտնվել է ազգային և համաշխարհային տեղաշարժերի հորձանուտում, և նրա ճաշակի ու իմացության վրամեծ չափով ազդում են

տեղեկատվական տեխնոլոգիաները, ռադիոհեռուստատեսային բազմաալիսի հաղորդումները, սոցիալական կայքերի միջոցով ստացվող տեղեկատվությունը, գրականությունը կոչված է ժամանակակից սերնդի մեջ փրկելու մարդուն, մարդկայինը, նրամեջ դաստիարակելու արժանապատվության, մարդասիրության, հպարտության, հանդուրժողականության հատկանիշներ: Ցուցադրվող գեղարվեստական ֆիլմերը, փաստագրական-հրապարակախոսական հաղորդումները, որոնք հաճախ ողորդված են քրեական աշխարհին նվիրված թեմաներով, խարխլում են սերնդի բարոյական և գեղագիտական կողմնորոշումները: Խարխլվում և արժեզրկվում են նաև ավագ սերունդների կողմից ընդունված իդեալները, ավանդույթներն ու սովորույթները: Չպետք է մոռանել նաև այն հանգամանքը, որ 21-րդ դարի սերունդը ի վիճակի է օգտվելու էլեկտրոնային գրադարաններից, նրան մատչելի են տեղեկատվական բոլոր աղբյուրները, քաղաքակրթության նվաճումները, համաշխարհային մշակութային արժեքները: Նոր սերունդն ընտրելու հնարավորություն ունի, և դասավանդվող գրական նյութը ոչ միայն պետք է ձևավորի ճաշակ, կենսական հմտություններ, արժեհամակարգ, այլև հնարավորություն տա ճանաչելու իր ազգային ակունքները, բնավորությունը, ոգին, դաստիարակի ազգային ինքնագիտակցություն:

Գրականությունը ժամանակի հիշողության վերարտադրումն է, ժողովրդի հոգևոր կյանքի գեղարվեստական տարագրությունը: Գրականությանն է վերաբերված ազգային ոգին նվիրական գաղափարների շուրջ համախմբելու և աճող սերնդին համամարդկային բարձր զգացումներով դաստիարակելու պատմական դերը: Պատ-

մական բոլոր դարաշրջաններում հայ գրականության համար բարձրագույն չափանիշներ են եղել ազգային արժանապատվության դաստիարակումը, հայրենիքի նվիրական կերպարի վերարտադրումը, անհատի հոգևոր ներաշխարհի բացահայտումը, պատմական ճշմարտության վերհանումն ու հայ հոգևոր-մշակութային կյանքում առաջ-նորդության դերի և գործառնույթների ստանձնումը: Գրականությունը մեկնաբանում, վերլուծում է

հասարակական գործընթացները, ընդհանրացնում համամարդկային փորձը, կենսական օրինաչափությունները, պատմական, քաղաքական, սոցիալական իրադարձությունները:

Գրականությունն արտացոլում է ժողովրդի պատմական հիշողությունը:

Ազգային ինքնագիտակցության ձևավորման տեսանկյունից Ա.Բ. Պանկինը, որպես էթնոմիավորող հատկանիշ, հանգամանալից բնութագրում է պատմական հիշողությունը, որում առանձնացնում է հետևյալ կողմերը՝

- ազգային հիշողությունը, որը ենթադրում է ազգային-հոգևոր կյանքին հաղորդակցումը,
- սոցիալական հիշողությունը, որը ներառում է ազգի կենսագործունեության տարբեր փուլերում նրա անդամների պատկերացումները իրենց կենսակերպի, փոխհարաբերությունների, սոցիալական կապերի մասին,
- քաղաքացիական հիշողությունը, որը ներառում է մարդկանց գիտելիքները պետական կառույցների վերաբերյալ,
- սոցիալ-մշակութային հիշողությունը, որի շրջանակներում են մայրենի լեզվի, ազգային ավանդույթների ու սովորույթների, բանահյուսության, հասարակության մեջ արմատացած բարոյական ու սոցիալական նորմերի, կրոնական ծեսերի, արարո-ղությունների վերաբերյալ պատկերացումները (89, էջ 140-152):

Գեղարվեստական գրականության մեջ ազգային հիշողության շնորհիվ հերոսները հարազատ են մնում իրենց ակունքներին. ազգային հիշողությամբ է ներծծված, օրինակ, կարոտի գրականությունը (Ա. Բակունցի, Խ. Դաշտենցի, Մ. Գալ-շոյանի, Յամաստեղի, Յակոբ Մնձուրու, Յ. Քոչարի ստեղծագործությունները): Սոցիալական հիշողությունը ազգի զարգացման բոլոր փուլերում վերականգնում է մարդկանց բարքերը, նիստուկացը և հաջորդ սերունդներին փոխանցում է նրանց մտքերը, ապրումները, զգացումները:

Յանրակրթական դպրոցի հենքային ուսումնական պլանում հայ գրականության դասընթացը կարևոր նշանակություն ունի ազգային-հայրենասիրական, բարոյա-մշակութային և գաղափարական

տեսանկյուններից: Գրականությանը կուտակում է մարդկության սոցիալական փորձը. նրա բովանդակության մեջ արտացոլված են մարդկության սոցիալ-մշակութային զարգացման փուլերը, պատմաքաղաքական իրադարձությունները: Գրականությունն արվեստի մյուս տեսակներից տարբերվում է մարդու վրանենցած խոր ազդեցությամբ. գրականությունը տիրապետում է խոսքի ներգործման ուժի, ունի կրթադաստիարակչական հզոր ներուժ: Ճիշտ է, տեղե-կատվական և հեռահաղորդակցական տեխնոլոգիաների արդի դարաշրջանում հաճախ հետին պլան է մղվում գրականությունը, երիտասարդությունը խուսափում է ընթերցանությունից, այնուհանդերձ մարդու հոգևոր ներաշխարհը ձևավորելու իր հզոր ներուժով նորագույն ոչ մի միջոց, արվեստի ոչ մի տեսակ չի կարող համեմատվել գրականության հետ: «Չայոց լեզվի և հայ գրականության առարկայական չափորոշիչներում» ևս շեշտադրվում է, որ հայ գրականության ուսուցումը բացառիկ նշանակություն ունի անհատի և քաղաքացու բարոյական կերպարի ու արժեքային համակարգի ձևավորման գործում, ուստի ավագ դպրոցում հայ գրականության դասընթացը, բուն գրականագիտական գիտելիքներ տալուց բացի, պետք է համոզմունք մշակի ժողովրդի կյանքում և նրա ազգային նկարագրի վերջնական ձևավորման գործում մայրենի լեզվի ու գրականության դերի վերաբերյալ:

Չանրակրթական դպրոցում գրականության ուսուցումը սոցիալ-մանկավարժական բարդ գործընթաց է: Դա ոչ միայն սոսկ գրական-պատմական նյութի յուրացում է, այլև սովորողների մեջ ձևավորում է ստեղծագործական մտածողություն, արժեքային վերաբերմունք հայ և համաշխարհային մշակույթի նկատմամբ: Չամապատասխանաբար առաջադրվում են մանկավարժական հետևյալ նպատակները՝

- անցյալն ու ներկան քննադատորեն վերլուծելու, գրական աղբյուրների ինքնուրույն

ուսումնասիրման հիման վրա եզրահանգումներ անելու կարողությունների զարգացում,

- սովորողների մեջ տարբեր ազգերի պատմության և մշակույթի համեմատական վերլուծություն կատարելու, պատմական իրադարձություններն ու դրանց փոխադարձ կապերն ընկալելու, գնահատելու կարողությունների զարգացում,
- տարբեր ազգերի պատմամշակութային առանձնահատկությունների, ավանդույթների իմացության, աշխարհայացքի և արժեքային կողմնորոշումների ձևավորում,
- համաշխարհային մշակույթի համատեքստում հայ գրականության դերի իմաստավորում, որը նպաստում է նաև սովորողի անձի ինքնորոշմանը, հասարակության մեջ իր տեղի իմաստավորմանը:

Չանրակրթական ծրագրով հայ գրականության ուսումնական բովանդակության ընտրությունը պայմանավորված է հետևյալ գործոններով՝

- ժամանակակից աշխարհում իրականացող զարգացումները, տեղաշարժերը, գլոբալացման գործընթացները և հայ ժողովրդի դերը այդ գործընթացներում,
- սոցիալ-հումանիտար գիտելիքների զարգացման արդի միտումները,
- ժողովրդի հոգեկերտվածքի առանձնահատկությունները,
- աճող սերնդի պահանջմունքներն ու դրդապատճառները, կրթական ծառայությունների շուկայում իրականացող տեղաշարժերը,
- ուսուցանվող նյութերի գեղագիտական, ազգային ու համամարդկային նշանակություն և արժեքի հաշվառումը:

Կրթության համակարգի արդի բարեփոխումների արդյունավետությունը մեծ չափով պայմանավորված է կրթական քաղաքականության զարգացումների, ռազմավարության, նպատակների ու գերակայությունների հստակեցմամբ: Ահա թե ինչու ներկայումս հասարակության համար առանձնահատուկ նշանակություն է ձեռք բերում կրթական ծրագրերի, այդ թվում հայ գրականության ուսուցման խնդիրների ու նպատակների որոշումը:

Առհասարակ կրթական բարեփոխումների նպատակն է արտահայտել կրթական գերակայությունների համապատասխանությունը պետության և հասարակության հետաքրքրություններին: Չանրակրթական ոլորտում իրականացող բարեփո-

խուժները ենթադրում են ժամանակակից սերնդի հոգևոր պահանջմունքների հաշվառում, կրթության և դաստիարակության ավանդույթների ու ազգային արժեքների պահպանում, ազգային ու համամարդկային իդեալների միասնություն, հազարամյակի մարտահրավերներին դիմակայելու պատրաստ սերնդի դաստիարակում, բարձր տեխնոլոգիաների հարածուն ներդրման պայմաններում սովորողների մեջ համապատասխան կարողությունների ձևավորում, համակեցության, հանդուրժողականության, համագործակցության և արժեքային որակների զարգացում:

Հայ գրականության ուսուցման տեսական և գործնական կարևոր հիմնահարցերից է ազգային և համամարդկային արժեքների միջև օպտիմալ հաշվեկշռի որոնումը: Այսօր արդեն լայն քննարկումներ են իրականանում հայ գրականության դարոցական ուսուցման ժամանակակից նպատակների հիմնախնդիրների շուրջ, քանի որ աճող սերնդի առջև մի կողմից դրված են էթնիկ նույնականացման խնդիրներ, իսկ մյուս կողմից պետք է խորապես հաշվի առնել համաշխարհային զարգացումները և քաղաքացիական հասարակության ժամանակակից արժեքները: Ներկայումս իրակա-նացող քննարկումների և երկխոսության թեմաներն են կրթության բովանդակության մեջ ազգային-մշակութային հոգևոր արժեքների պահպանումը՝ ազգային ու համաշխարհային տեղաշարժերի ու գերակայությունների խոր հաշվառմամբ:

Վերը շարադրվածը դիտարկելով կրթության բովանդակության նորացմանը նվիրված տեսական հետազոտությունների տեսանկյունից՝ հանգում ենք հետևյալ եզրակացությունների՝

- փոխվել են հասարակության քաղաքական, սոցիալ-մշակութային, գաղափարախոսական, բարոյագիտական կողմնորոշումները. կրթական համակարգում գործում է անձնակենտրոն կրթության հարացույցը,
- հասարակությունը և մասնավորապես մանկավարժական հանրությունը առավել խորությամբ են գիտակցում, որ առանց հայ գրականության ազգային-մշակութային ավանդույթների վերարտադրման հնարավոր չէ իրականացնել ազգայինի և համամարդկայինի հաշվեկշռի պահպանումը. այս համատեքստում

Ներկայ ու մս շեշտադրվում է հայ գրականության ուսուցման բովանդակության մեջ ազգային-պատմամշակութային ժառանգության և իննովացիաների համադրման արդյունավետ ուղիների որոնման անհրաժեշտությունը:

Այս նկատառումներով ավագ դպրոցի «Չայոց լեզու և գրականություն» առարկայական չափորոշիչներում և ծրագրերում հայ գրականության բովանդակությունը սահմանելիս առաջնորդվել են հետևյալ սկզբունքներով.

ա) Չայ գրականությունն առանձնահատուկ տեղ ունի մի կողմից՝ որպես աշխարհաճանաչողության, անձի զարգացման, նրամտավոր առաջընթացի, հոգեբանական կարգերի՝ տրամաբանական և պատկերավոր մտածողության, լեզվամտածողության և հոգելեզվամտածողության զարգացման ու կատարելագործման հիմնական միջոց, մյուս կողմից՝ ուսումնական մնացած բոլոր առարկաների ընկալման, յուրացման, գնահատման և արժևորման նախադրյալ:

բ) Չայ գրականության ուսուցումը բացառիկ նշանակություն ունի անհատի ու քաղաքացու բարոյական կերպարի և արժեքային համակարգի ձևավորման գործում, ուստի ավագ դպրոցում հայ գրականության դասընթացը պետք է համոզմունք մշակի ժողովրդի կյանքում և նրա ազգային նկարագրի վերջնական ձևավորման գործում մայրենի լեզվի ու գրականության դերի վերաբերյալ:

....թ) Չայ գրականության ուսումնասիրությունը սովորողի բռնապաշարի հարստացման, պատկերավոր մտածողության, երևակայության և ստեղծագործական կարողությունների զարգացմանը զուգընթաց աշխարհաճանաչողության, ինքնաճանաչման, ինքնագնահատման ու ինքնակատարելագործման արդյունավետ միջոց է և մեծապես նպաստելու է բարձր բարոյական գծերի՝ հայրենասիրության, քաղաքացիական պատասխանատվության, մարդասիրության, կարեկցանքի ու հանդուրժողականության, ընկերասիրության և սոցիալ-հոգեբանական այլ արժեքների արմատավորմանը, զգայական-հուզական, գաղափարական և հանրակեցական դաստիարակությանը:

Ժ) Հայ գրականության ուսուցումը պետք է նպաստի ազգային գեղարվեստական մտածողության յուրահատկությունների բացահայտմանը, հայ ժողովրդի պատմական ճակատագրի և հայ մարդու կերպարի մարմնավորման ընկալմանը, գրական-գեղար-

վեստական նյութի դաստիարակչական և ճանաչողական նշանակություն գիտակցմանը, ավանդույթների շարունակականությունը, գրողի և նրա ստեղծագործություն հասարակական նշանակություն գիտակցմանը:

Ժա) Հայ գրականության ծրագրով առաջարկվող նյութերի ուսումնասիրությունը պետք է կապել այսօրվա կյանքին, բխեցնել սովորողների նախասիրություններից, ցույց տալ բոլոր ժամանակներում մարդկային կրքերի բխումներ՝ բարու հաղթանակով, մարդկանց ճակատագրեր՝ հերոսական կամ դրամատիկ, պայքար հանուն վսեմ գաղափարների, ընդգծել դրանց արդիական հնչեղությունը, պատմական անցյալի և այսօրվա բարդ ու բազմակողմանի կյանքի ներքին կապը, նպաստել մարդու և նրա հոգեբանության ճանաչմանը (29, էջ 5-7):

Հետազոտության շրջանակներում հայ գրականության դասավանդման արդի վիճակի վերաբերյալ արված ուսումնասիրությունների ընթացքում մեր կողմից բացահայտվել են ավագ դպրոցի ընդհանուր և հոսքային դասարաններում հայ գրականության դասավանդման գործընթացի զարգացման միտումներն ու հետագա ուղղությունները՝

- ազգային մշակույթի խոր իմաստավորում՝ բանահյուսական նյութերի ուսումնասիրման ճանապարհով,
- կրթական բոլոր աստիճանների (տարրական, հիմնական, ավագ դպրոց) հաջորդականության ապահովում,
- գրականության դաստիարակչական դերի բարձրացում,
- հայ գրականության բոլոր արժեքների (հին, միջնադարյան, նոր, նորագույն, արևելահայ, արևմտահայ, սփյուռքահայ) միասնական յուրացում՝ իրենց զարգացման ներքին օրինաչափություններով և առանձնահատկություններով:

Հայ գրականության դասավանդման նպատակներից են սովորողների հո-գեմտավոր զարգացումը, ժողովրդի հոգևոր ժառանգությանը, սոցիալ-բարոյական փորձին հաղորդակից դարձնելը, գրական երկերի գաղափարագեղարվեստական հարստության օգտագործմամբ նրանց մեջ բարոյական արժեքների սերմանումը, ստեղծագործաբար մտածելու, իրականության դեպքերն ու երևույթները իմաստավորելու, գեղարվեստական պատկերներն ընկալելու կարողությունների զարգացումը, գեղարվեստական ստեղծագործությունների իմաստավորման հիման վրա արժեքային կողմնորշումների, համոզմունքների, մարդասիրական գաղափարների, համամարդկային ժողովրդավարական արժեքների, փոխըմբռնման, մարդու և ազգերի իրավունքների նկատմամբ արժեքային վերաբերմունքի ձևավորումը:

Գրականությունը մարդուն օգնում է ըմբռնել մարդկային փոխարաբերությունները, զգացմունքների խորությունն ու նրբերանգները: Ընդհանուր գրում է. «Գրքերը ըստ էության փոքրիկ տուփեր են ու սնտուկներ, ուր կանոնավոր կերպով դարսված են ու կախվին մարդկային տեղեկությունները, ուսումնասիրությունները, փորձերը, դիտողությունները, մտածումները, եզրակացությունները, ներքին աշխարհի վերլուծումները, մարդկային հոգեկան ապրումները: Ընթերցանությունը ամեն բանե առաջ դարոց է, ուսում ու կրթություն: ...Այդ պատճառով ալ ով սովոր է կարդալու, կապրի մշտապես լայն, բազմերանգ ու խիստ ծանոթներու շրջանակի մը մեջ, կապրի լայն աշխարհի մը մեջ, քանի որ մշտապես հաղորդակցության և անձնական մտերմության մեջ է հին ու նոր դարերու և բոլոր ժողովուրդներու ամենեն խոր, մեծ, իմաստուն, տաղանդավոր ու առաքինի դեմքերուն հետ: ...Գրքերը կհարստացնեն մեր ծանոթություններու ու տեղեկություններու գանձարանը. կճանչնանք նոր մարդիկ, նոր տեսակի հոգիներ, նոր գործեր, նոր դատում, նոր զգացական աշխարհ, կնպաստեն մեր ըմբռնումներու խորացմանը, մեր աշխարհայացքի լայնացմանը, իրենց դատում-

ներովը մեզի մտածելու կդրդեն, իրենց առանձնահատկություններովը կհրեն մեր ուշադրությունը նոր որոնումներու» (43, էջ 826-831):

Ավագ դպրոցականների ազգային ինքնագիտակցության զարգացման տե-սանկյունից կարևորվում են գրողների կենսագրությունների ուսումնասիրումը, հայրենի եզերքի պատմության, բնության, աշխարհագրության, մարդկանց կենցաղի, սովոր-րոյթների, զբաղմունքների, արհեստների ու արվեստների իմացությունը, ազգագրական տեղեկությունները, ազգային խորհրդանիշների ճանաչումն ու արժևորումը: Նշված միջոցները նշանակալիորեն ընդլայնում են սովորողների հետաքրքրությունների

ոլորտը, զարգացնում են վերլուծական կարողությունները, քննադատական մտածողու-

թյունը, գրական երկերը համարժեքորեն ընկալելու, գնահատելու, իմաստի մեջ թափանցելու, տվյալ գրական երկի մեջ ներկայացված անակների ոգուն համապատասխան երևույթներն ու իրողություններն առանձնացնելու,

հերոսների գործողությունների հոգեբանական հիմքերը վերլուծելու, հիմնավորելու, պատճառաբանելու, փաստարկելու

կարողությունները: Գրական ստեղծագործությունների միջոցով սովորողները հաղորդակցվում են արվեստի տարբեր տեսակներին՝ թատրոնին, կինոյին, երաժշտությանը, կերպարվեստին, ճարտարապետությանը, անցկացնում են գուգահեռներ, ինքնուրույն դատողություններ և եզրահանգումներ են կատարում գրականության և հասարակական կյանքի փոխհարաբերությունների վերաբերյալ:

Հասարակական երևույթների և մարդկանց փոխհարաբերությունների վերլուծության և քննարկումների ընթացքում ընդլայնվում է սովորողների սոցիալական փորձը. զարգանում է իրականության նկատմամբ սեփական դիրքորոշումը ձևավորելու կարողությունը: Գրական երկերի գեղարվեստական յուրացման ընթացքում ձևավորվում է սովորողների գեղագիտական մտածողությունը. նրանք սովորում են իրադարձությունները դիտարկել պատմական տվյալ դարաշրջանի սոցիալ-մշակութային

համատեքստում, գնահատել և համեմատել անցյալն ու ներկան, տարբեր դարաշրջաններում մարդկանց մտածելակերպը, պատճառաբանել գործողությունները: Ուսումնասիրելով տվյալ դարաշրջանի բարքերը, մարդկանց պատկերացումները, խոհերը, իդեալները, զբաղմունքը՝ հնարավոր է ընկալել տվյալ դարաշրջանի ոգին, էությունը, նյութական և հոգևոր արժեքների բնույթը: Գրական ստեղծագործությունների ուսումնասիրման ժամանակ առանձնահատուկ նշանակություն է ձեռք բերում մարդկային ճակատագրերի վերլուծությունը. գրականությունը պատմություն է մարդկանց, նրանց արմատների, ընտանեկան սովորույթների, մարդ-բնություն փոխհարաբերությունների մասին: Գրականության միջոցով սերնդեսերունդ փոխանցվում են հավերժ անանց արժեքները՝ աշխատասիրությունը, ազնվությունը, արդարությունը, ազգային արժանապատվության, ժողովուրդների բարեկամության զգացումը, գթասրտությունը, աշխատանքի արժևորումը՝ որպես բարօրության և հոգևոր հարստության աղբյուր:

Գրականությունը նպաստում է ավագ դպրոցականների սոցիալական հարմար-մանը՝ նրանց մեջ ձևավորելով սոցիալ-տնտեսական և մշակութային տեղաշարժերում ակտիվ կենսագործունեությունն իրականացնելու հմտություններ:

Պատմամշակութային յուրաքանչյուր ժամանակաշրջան ունի իր բնորոշ առանձնահատկությունները, այնուհանդերձ դա չի խանգարում էթնոսի ամբողջական ընկալմանը: Հայրենիքի զգացողությունը մարդու մեջ ձևավորվում է պատմաաշխարհագրական կենսատարածքի անցյալի և ներկայի վերաբերյալ պատկերացումներից, որոնց ձևավորման համար անսպառ նյութ է տրամադրում գրականությունը: Գրականությունը ձևավորում է հոգևոր միասնության գիտակցում: Գրականության շնորհիվ սովորողները հնարավորություն ունեն ընկալելու, թե ինչպես են ձևավորվում ժողովուրդների հոգևոր-մշակութային ավանդույթները, ազգամիջյան փոխհարաբերությունները, հաղթահարելու բախումներն ու ուղիներ որոնելու երկխոսության համար:

Գրականություն միջոցով կյանքի գեղարվեստական պատկերմամբ արտացոլվում են հասարակական կյանքի արտադրական, տնտեսական, սոցիալական ոլորտները՝ դրանով իսկ դարոցականներին օգնելով խորությամբ ընկալել սոցիալական կառույցներն ու դրանց պատմական զարգացումը:

Մարդը և նրա կենսագործունեությունը անմիջականորեն կախված են տվյալ հասարակության արժեհամակարգից, կարծրատիպերից, բարոյականության նորմերից: Տվյալ էթնիկ հանրության հոգեկերտվածքը, աշխարհընկալումը, իդեալները, հաղորդակցային մշակույթը, որոնք հոգևոր կյանքի և արժեհամակարգի տարրերն են, դարոցականի անձի ազգային ինքնագիտակցության ձևավորման կարևոր միջոց են:

Այսպիսով՝ հայ գրականության ուսուցումը մի կողմից նպաստում է լեզվական գիտելիքների յուրացմանն ու ստեղծագործաբար կիրառմանը, մյուս կողմից բացառիկ նշանակություն ունի անհատի համակողմանի զարգացման, գեղագիտական դաս-տիարակության, հոգևոր ներաշխարհի ձևավորման, համագործակցային և հաղորդակցային կարողությունների ձևավորման գործում:

ՀՀ պետական կրթակարգում սահմանված է հանրակրթական դարոցի շրջանավարտի նկարագիրը. հանրակրթության հետևողական և նպատակասլաց իրակա-

նացման արդյունքում ակնկալվում է, որ շրջանավարտը պետք է «գիտակցի հայ

ժողովրդի ու հայոց պետության դերը համաշխարհային քաղաքակրթության մեջ, ունենա ազգային մտածողություն և ինքնագիտակցություն, լինի ազգային ավանդույթների կրողը, պահպանողն ու փոխանցողը, մտահոգվի ազգային և պետական խնդիրների լուծմամբ, ... իմանա իր իրավունքներն ու պարտականությունները, լինի օրինապահ, ազնիվ, մարդասեր, պատասխանատվությամբ օժտված, նախածեռնող և հասարակական գործունե դիրքորոշում ունեցող քաղաքացի, ճանաչի համաշխարհային քաղաքակրթության նվաճումները, հարգի համամարդկային արժեքները և այլն» (19, էջ 46): Դարոցի

շրջանավարտի այսօրինակ կատարելատիպ ձևավորելուն պետք է նպաստեն միջնակարգ կրթության պետական չափորոշիչով սահմանված ուսումնական բոլոր բնագավառները, սակայն, անտարակույս, այս գործում առաջնային դեր է վերապահված «Հայոց լեզու և գրականություն» ուսումնական բնագավառին, մասնավորապես՝ հայ գրականությանը:

ՀՀ կրթական համակարգում իրականացող բարեփոխումների առաջնային նախաձեռնություններից մեկն անցումն էր 12-ամյա կրթական համակարգին: Ավագ դպրոցն այն օղակն է, որը սովորողներին պատրաստում է ինքնուրույն կյանքի, ձևավորում է մասնագիտական կողմնորոշումներ: Ավագ դպրոցում նախատեսված են ընդհանուր և հոսքային ուսումնական պլաններ, ինչը թույլ է տալիս իրականացնել ուսուցման տարբեր ծրագրեր՝ հումանիտար, բնագիտամաթեմատիկական, տնտեսագիտական և այլն:

Ավագ դպրոցի հումանիտար հոսքի «Հայ գրականություն» առարկայի ծրագրով 10-րդ դասարանում հայ գրականությանը հատկացված է տարեկան 102 ժամ (շաբաթական 3 դասաժամ), 11-րդ դասարանում՝ 136 ժամ (շաբաթական 4 ժամ), 12-րդ դասարանում՝ 170 ժամ (շաբաթական 5 դասաժամ), ընդամենը 85 ժամը հատկացվում է կրկնությանը, քննության նախապատրաստմանը և խորհրդատվությանը (29):

Այնհայտ է, որ հումանիտար հոսքում հայ գրականությանը հատկացված ժամաքանակի սահմաններում հնարավոր է իրագործել հայ գրականության դասավանդման՝ չափորոշիչով սահմանված նպատակները՝ անհատի հոգևոր ու մտավոր զարգացումը, նրանց մեջ բարոյական արժեքների, ազգային ինքնագիտակցության ձևավորումը:

Պատկերը փոքր-ինչ այլ է ընդհանուր և բնագիտամաթեմատիկական հոսքերում, որտեղ հայ գրականությանը համեմատաբար քիչ դասաժամ է հատկացված: Այսպես՝ ընդհանուր հոսքի 10-12-րդ դասարաններում հայ գրականությանը հատկացված է 102-ական դասաժամ, իսկ բնագիտամաթեմատիկական հոսքում, առաջնորդվելով հոսքային առարկաներին առավելագույն դասաժամեր հատկացնելու անհրաժեշտությամբ, 10-12-րդ

դասարաններում հայ գրականությանը հատկացվել է 68-ական դասաժամ (շաբաթական 2 դասաժամ): Բնականաբար, աճող սերնդի հոգեկերտվածքի և ազգային ինքնագիտակցության զարգացման գործում անչափ կարևորելով հայ գրականության դերն ու նշանակությունը, առաջնորդվելով գլոբալացման և համաշխարհային արդի տեղաշարժերի հորձանուտում նոր սերնդի ազգային դիմագիծը, արժեքային համակարգը ձևավորելու խոր մտահոգությամբ՝ մենք շեշտադրում ենք այն մոտեցումը, որ ավագ դպրոցի բնագիտամաթեմատիկական հոսքի դպրոցական կամ նախասիրական բաղադրիչի շրջանակներում, հաշվի առնելով դպրոցի հնարավորությունները, տարածաշրջանային գործոնները և այլն, ուսումնասիրվի «Հայ գրականություն և ազգագրություն» արտասուսումնական դասընթացը: Այն կարող է ընդգրկել հայ բանահյուսության և գրականության այն նմուշները, որոնք ընդգծված ազգային-հայրենասիրական ներուժ ունեն և առավելագույնս կնպաստեն ավագ դպրոցականների էթնիկական պատկերացումների, ազգային-հոգևոր նկարագրի ձևավորմանը, նրանց կողմից պատմական ակունքների գիտակցմանն ու ազգային հոգեկերտվածքի արժևորմանը, պատմական հիշողության վերարթնացմանը:

Հավելենք նաև այն կարևոր հանգամանքը, որ սոցիալական և հոգեբանական հասունացման, քաղաքացիության ձևավորման կարևոր փուլում ավագ դպրոցականները, հիմնականում ծանրաբեռնված լինելով և ամբողջ ազատ ժամանակը նվիրելով 2-3 առարկաների խոացված յուրացմանը՝ ավարտական և միասնական քննությունները հանձնելու, բուհ ընդունվելու համար, ժամանակ և հնարավորություն և

չեն ունենում կարգալ գեղարվեստական գրականություն, հարստացնել իրենց խոսքն ու բառապաշարը, հաղորդակցվել ազգային-մշակութային արժեքներին: Այդ պատճառով ժամանակի հրամայականն է ավագ դպրոցի ոչ հոլմանիտար հոսքերում ուսումնասիրել նմանօրինակ դասընթացներ՝ ավագ դպրոցականների ազգային-հոգևոր դաս-տիրական, ազգային

ինքնագիտակցության զարգացման կարևորագույն գործ-ընթացներն
իրականացնելու համար:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

**ԱՎԱԳ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԱԶԳՍՅԻՆ ԻՆՔՆԱԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ
ՉԱՐԳԱՑՄԱՆՆ ՈՒՂԴԱՅ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԵՎ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ՓՈՐՁԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

**3.1. Ավագ դպրոցի բնագիտամաթեմատիկական հոսքում սովորողների
ազգային ինքնագիտակցության զարգացվածության առկա
մակարդակների վերլուծությանը**

Ավագ դպրոցականների ազգային ինքնագիտակցության զարգացվածության մակարդակները բացահայտելու համար անցկացվել է մանկավարժական փորձարարություն, կիրառվել են տարբեր մեթոդներ:

Մանկավարժական փորձարարությունն իրականացել է Ոսկետափի, Վեդիի, Երևանի Իսահակյանի անվան թիվ 16, Բենիամին ժամկոչյանի անվան թիվ 119 ավագ դպրոցներում:

Ձևավորվել են ստուգողական և փորձարարական խմբեր, որոնցում ընդգրկվել են 200 աշակերտներ՝ 98 աշակերտ ստուգողական խմբում, 102 աշակերտ փորձարարական խմբում: Որոշ հարցումների մասնակցել են նաև ուսուցիչներ, որոնք դասավանդում են թե՛ բնագիտամաթեմատիկական, թե՛ ընդհանուր և հումանիտար հոսքերում: Ստուգողական խմբում մանկավարժական որևէ ներգործություն չի իրականացվել, իսկ փորձարարական խմբում կիրառվել են ավագ դպրոցականների ազգային ինքնագիտակցության զարգացմանն ուղղված միջոցներ, մեթոդներ:

Ավագ դպրոցի բնագիտամաթեմատիկական հոսքում սովորողների ազգային ինքնագիտակցության զարգացվածության մակարդակի բացահայտման համար փորձարարության հաստատող փուլում իրականացվել են գրույց, դիտում, սոցիալ-ցումներ, հարցազրույց, գրավոր աշխատանքների, ուսումնական փաստաթղթերի վերլուծություն և այլն:

Մենք առաջնորդվել ենք ըստ 2.1. ենթազխում մշակված չափանիշների, որոնք բնութագրում են ավագ դպրոցականների ազգային ինքնագիտակցության զարգացվածությունն ըստ հմացական, գնահատողական, վարքային-գործունային բնութագրիչ -

ների, այսինքն՝ ազգային մշակույթի, իր էթնիկ պատկանելության, պատմության վերաբերյալ գիտելիքների, մայրենի լեզվի, իր ժողովրդի պատմության, մշակույթի, բնավորության, հոգեկերտվածքի, ազգային խորհրդանիշների նկատմամբ հուզական-գնահատողական վերաբերմունքի, ունեցած գիտելիքները գործունեության մեջ, վարքային դրսևորումներում արտահայտելու, մտքերը ճիշտ և անաղարտ մայրենիով արտահայտելու, տարբեր իրավիճակներում համապատասխան վարքագիծ, ազգային մտածել-ակերպ դրսևորելու, համամարդկային արժեքները գնահատելու կարողություններ:

Ստուգողական և փորձարարական խմբերում ընդգրկված ավագ դպրոցա-կանների՝ մայրենի լեզվի տիրապետման, գրավոր և բանավոր սահուն, կապակցված խոսք կառուցելու կարողությունները բացահայտելու համար ուսումնասիրվող գրական նյութի իմաստի ընկալման փուլում հանձնարարվել է ազատ շարադրանք: Գնահատման չափանիշներն են մտքերը հարթ, տրամաբանված, փաստարկված կառուցելու կարողությունը, բառապաշարի հարստությունը և բառագտագործման հմտությունը, ոճը (առօրյա-խոսակցական, գիտական, գեղարվեստական, հրապարակախոսական և այլն), պատկերավորման միջոցների՝ դարձույթների և բանադարձումների կիրառման կարողությունը, քերականական գրագիտությունը, տեքստի կառուցմանը ներկայացվող պահանջները (ներածություն, հիմնական մաս, ավարտ), հուզականությունը, քնարականությունը, ճարտասանական տարրերի կիրառումը, չափածո խոսքի կառուցման կարողությունը և այլն: Շարադրանքների արդյունքները, ըստ մշակված չափանիշների, ներկայացված են թիվ 1 աղյուսակում: Նշենք, որ պատասխանների «լիարժեք» սահմանումը համապատասխանում է «բարձր» մակարդակին, «բավարարը»՝ «միջին», «թերին»՝ «ցածր» մակարդակին:

**ԱՎԱԳ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԳՐԱՎՈՐ ԽՈՍՔԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄԸ
ՍՏՈՒԳՈՂԱԿԱՆ ԵՎ ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ԽԱԲԵՐՈՒՄ (ՏՈԿՈՍՆԵՐՈՎ)**

	ՉԱՓԱՆԻՇՆԵՐ	ՊԱՏԱՍԻԱՆՆԵՐ					
		Լ Ի Ա Ր Ժ Ե Ք		Բ Ա Վ Ա Ր Ա Ր		Թ Ե Ր Ի	
		ՍՏՈՒԳ. ԽՈՒՄԲ	ՓՈՐՁ. ԽՈՒՄԲ	ՍՏՈՒԳ. ԽՈՒՄԲ	ՓՈՐՁ. ԽՈՒՄԲ	ՍՏՈՒԳ. ԽՈՒՄԲ	ՓՈՐՁ. ԽՈՒՄԲ
1.	Մտքերի փաստարկված, հիմնավոր, խորությամբ, համոզիչ շարադրանք	16	15	45	47	39	38
2.	Պատկերավորման և արտահայտչության միջոցների գրագետ կիրառում	18	16	47	49	35	35
3.	Ոճական գրագիտություն	18	21	43	44	39	35
4.	Քերականական գրագիտություն	17	19	45	51	38	30
5.	Հուզական-քնարական պատում, հարուստ բառապաշար	15	17	41	49	44	34

Ակնհայտ է, որ ավագ դպրոցականներին ներկայացվող պահանջների շրջանակներում վերոբերյալ արդյունքները բավականաչափ ցածր են. դա բացատրվում է նրանով, որ աշակերտները խուսափում են գեղարվեստական գրքեր ընթերցելուց, նախընտրում են ծրագրի շրջանակներում հանձնարարվող գրականությունը և ավագույն դեպքում յուրացնել սեղմված տարբերակների միջոցով, հայ գրականության սուղ դասաժամերը հնարավորություն են չեն ընձեռում բանավոր և գրավոր խոսք կառուցելու, հաղորդակցման համար, որի արդյունքում մշակված չափանիշների վերաբերյալ գերակշռում է միջին մակարդակը:

Հայրենի բնաշխարհի, հայ ազգի հոգևոր նկարագրի և ազգային ոգու վերաբերյալ աշակերտների գիտելիքների և հուզական-գնահատողական որակների մակարդակը պարզելու համար դպրոցականների շրջանում անցկացվել է սոցիոլոգիական հարցման նպատակն է բացահայտել ազգային հիմնարար արժեքների (ազգ, հայրենիք, լեզու, հավատ, պետականություն, անկախություն, հավաքականություն, ազգային

ոգի և հոգեկերտվածք, ազգասիրություն, համերաշխություն, մշակույթ և այլն) վերաբերյալ պատկերացումները, հակիրճ բնութագրել և հնարավորության դեպքում ավելացնել արժեքներ, որոնք նշված չեն:

Հարցված աշակերտների 14%-ը ստուգողական խմբում և 13%-ը փորձարարական խմբում հաջողությամբ կատարել են առաջադրանքը, տրամաբանված և իմաստային տեսակետից համոզիչ բնութագրել են ազգային հիմնարար արժեքները և հիմնավորել օրինակներով:

Ստուգողական խմբում 42%-ը և փորձարարական խմբում 45% աշակերտներ որոշակի գիտելիքներ ունեն ազգային արժեքների վերաբերյալ, սակայն խորությամբ չեն բնութագրել և օրինակներով չեն հիմնավորել: Ստուգողական խմբում հարցվածների 44%-ը և փորձարարական խմբում 42%-ը կամ պատասխանատվությամբ չեն վերաբերվել հարցմանը, կամ մակերեսային, ոչ լիարժեք դատողություններ են կատարել:

Այսպիսով, ի մի բերելով նկարագրված հարցումների, գրույցների, դիտումների արդյունքները, մենք բնութագրել ենք ավագ դպրոցի բնագիտամաթեմատիկական հոսքի դպրոցականների՝ մայրենի լեզվի և ազգային հիմնարար արժեքների տիրապետման բարձր, միջին և ցածր մակարդակները:

Բարձր մակարդակը բնութագրվում է խոր և կայուն գիտելիքներով, վերլուծելու, փաստարկելու, համադրելու, համակարգելու, եզրակացնելու, ընդհանրացնելու, պատմական երևույթները, իրադարձությունները, գրական ու պատմական կերպարները գեղարվեստորեն մեկնաբանելու կարողության ձևավորվածությամբ, տրամաբանական և ստեղծագործական մտածողությամբ, հարուստ բառապաշարով, տեղեկատվական տարբերադրյուններից, տպագիր և էլեկտրոնային գրականությունից օգտվելու, ստացված նյութերը համակարգելու, հիմնականում էականը գատորոշելու ունակությամբ, գրական երկերի ընթերցանության պահանջմունքով և բարձր մշակույթի տիրապետմամբ, գրավոր և բանավոր գրագետ, սահուն, կապակցված խոսքով, ազգային հիմնարար արժեքների վերաբերյալ ճիշտ պատկերացումներով, անձնային բարձր որակներով:

Միջին մակարդակ ունեցող աշակերտները բավականաչափ գիտելիքներ ունեն ազգային արժեքների վերաբերյալ, սակայն վերլուծելու, համեմատելու, ընդհան-րացնելու կարողությունների, ստեղծագործական և տրամաբանական մտածողությունը

դրսևորվում են ըստ իրավիճակի, ուսուցչի կամ այլոց խթանիչ ներգործությամբ: Բանավոր խոսքի համեմատությամբ գրավոր խոսքը զարգացած է, համենայն դեպս աշակերտները խուսափում են գրավոր խոսքից՝ ուղղագրական, կետադրական և քերականական այլ սխալներ թույլ չտալու համար: Գեղարվեստական գրականության նկատմամբ դրսևորում են հետաքրքրություն, սակայն ընթերցանական դրդապատճառների ոչ բավարար չափով ձևավորվածությունը հիմնավորում են ժամանակի սուղ լինելու և հոսքային առարկաներով ծանրաբեռնվելու պատճառով:

Ցածր մակարդակը բնութագրվում է ոչ խոր, մակերեսային գիտելիքների տիրապետմամբ: Հիմնականում բնորոշ է նյութի սոսկ վերարտադրումը՝ առանց վերլուծության, հիմնավորման, ընդհանրացման, ստեղծագործական մոտեցման: Հաղորդակցման դժվարությունները բացատրվում են ոչ հարուստ բառապաշարով և խոսքի կապակցման միջոցների ոչ բավարար չափով տիրապետմամբ: Ցածր մակարդակ ունեցող աշակերտները կտրականապես խուսափում են գեղարվեստական բնագրերի ընթերցանությունից՝ պատճառաբանելով, որ գեղարվեստական երկերի և հեղինակների վերաբերյալ տվյալները, առանձին դրվագների սեղմ շարադրանքները, նույնիսկ որոշ ստեղծագործությունների էկրանավորումները բավական են գրական ստեղծագործության վերաբերյալ որոշակի կարծիք կազմելու և դպրոցի ավարտական ու բուհի միասնական քննությունները (թեստային տարբերակով) հաջողությամբ հանձնելու համար: Այս մակարդակում գտնվող աշակերտները երբեմն նույնիսկ հրաժարվում են մտքերը գրավոր շարադրելուց, հաճախ նաև բանավոր պատասխաններից, քանի որ, ըստ նրանց, քննությունների թեստային տարբերակով հանձնումը չի պահանջում խոր վերլուծություններ, ստեղծագործական

մտորու մներ, գրական երկի հուզական ընկալում, գրական կերպարների համակողմանի բնութագրում և այլն:

Մանկավարժական փորձարարության հաստատող փուլի ընթացքում վերը նկարագրված հարցման մեթոդների միջոցով ստացված արդյունքները վերլուծելով՝


պարզեցինք ավագ դպրոցականների կողմից մայրենիի տիրապետման և ազգային արժեքների վերաբերյալ գիտելիքների իմացության բարձր, միջին և ցածր մակարդակները: Բարձր մակարդակում են ստուգողական խմբի 16% և փորձարարական

խմբի 17% աշակերտներ, միջին մակարդակում՝ համապատասխանաբար 44% և 48%, ցածր մակարդակում՝ 40% և 35%: Արդյունքներն արտացոլված են թիվ 2 աղյուսակում և համապատասխան գծապատկերում:

ԱՂՅՈՒՍԱԿ 2

ՄԱՅՐԵՆԻԻ ՏԻՐԱՊԵՏՄԱՆ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԱՐ ԱՐԺԵՔՆԵՐԻ ԻՄԱՑՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐԸ ՍՏՈՒԳՈՂԱԿԱՆ ԵՎ ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ԽԱԲԵՐՈՒՄ (ՏՈԿՈՍՆԵՐՈՎ)

ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐ	ՍՏՈՒԳՈՂԱԿԱՆ ԽՈՒՄԲ	ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ԽՈՒՄԲ
Բարձր	16	17
Միջին	44	48
Ցածր	40	35



ԳՃԱՊԱՏԿԵՐ 1. ՄԱՅՐԵՆԻԻ ՏԻՐԱՊԵՏՄԱՆ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԱՐ ԱՐԺԵՔՆԵՐԻ ԻՄԱՑՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐԸ ՍՏՈՒԳՈՂԱԿԱՆ ԵՎ ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ԽԱՔԵՐՈՒՄ

Ակնհայտ է, որ փորձարարության հաստատող փուլում ստուգողական և փորձարարական խմբերում արձանագրվել են գրեթե միանման արդյունքներ, ընդ որում միջին մակարդակը նկատելիորեն գերակշռում է:

Ավագ դպրոցականների ազգային ինքնագիտակցության իմացական բաղադրատարրի զարգացվածության մակարդակների վերաբերյալ առավել լիարժեք պատկերացում կազմելու համար անցկացված սոցիալոգիական մեթոդաբանական հարցազրույցներում է ազգային խորհրդանիշների իմացությունը: Սոցիալոգիական մասնակիցներին առաջարկվել է նախ թվարկել ազգային խորհրդանիշները, ապա դասակարգել և բնութագրել դրանք: Հարցումն անցկացվել է առանց ներածական զրույցի. մեր նպատակն է եղել պարզել ազգային խորհրդանիշների իմացության նախնական վիճակը:

Ստուգողական խմբում ընդգրկված աշակերտների 20% և փորձարարական խմբում 22%-ը առաջադրանքը կատարել են բարեխղճությամբ՝ փորձելով հնարավորինս լիարժեք ներկայացնել հայկական խորհրդանիշների վերաբերյալ իրենց ունեցած ամբողջ տեղեկատվությունը: Նրանց կողմից թվարկվել և բնութագրվել են ազգային-պետական խորհրդանիշները՝ դրոշմ, օրհներգը, զինանշանը: Պատմա-աշխարհագրական և բարոյակերպարային խորհրդանիշներն ավելի մակերեսային են ներկայացված. նշվում են միայն խաչքարերը, Արարատ լեռը, ազգային հերոսները: Ստուգողական խմբում հարցվածների 35%-ը և փորձարարական խմբում 42%-ը ավելի համառոտ տեղեկություններ են ներկայացրել հայկական խորհրդանիշների վերաբերյալ: Ստուգողական խմբում 45%-ը և փորձարարական խմբում 36%-ը բավականաչափ պատկերացում չունեն խորհրդանիշների վերաբերյալ. թվարկվում են միայն ազգային-դիցաբանական հերոսներ՝ առանց դասակարգման և հիմնավորված վերլուծությունների: Ազգային ինքնագիտակցության իմացական

բաղադրատարրի զարգացվածությունն վերաբերյալ առավել հանգամանալից տեղեկատվություն ստանալու համար ստուգողական և փորձարարական խմբերում տրվել է հարցաթերթիկ՝ պարզելու համար հայոց դիցարանի, առասպելների, վիպերգերի, հոգևոր և աշխարհիկ տոների, արհեստների, ավանդույթների, սովորույթների իմացությունը: Ներկայացնենք թիվ 1 հարցաթերթիկին (հավելված 1) տրված պատաս-

խանները, որոնք տկոսային հարաբերությամբ ներկայացված են թիվ 3 աղյուցակում: Նշենք, որ «լիարժեք»-ը համապատասխանում է բարձր, «բավարար»-ը՝ միջին, «թերի»-ն՝ ցածր մակարդակներին:

ԱՂՅՈՒՍԱԿ 3

ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆԱԳԻՏԱԿՑՈՒ ԹՅԱՆ ԻՄՏԱԿԱՆ ԲԱՂԱԴՐՍՏԱՐԻ ԶԱՐԳԱՑՎԱԾՈՒ ԹՅՈՒՆԸ (ՏՈԿՈՍՆԵՐՈՎ)

	ԶԱՓԱՆԻՇՆԵՐ	ՊԱՏԱՆԿԱՆՆԵՐ					
		Լ Ի Ա Ր Ժ Ե Ք		Բ Ա Վ Ա Ր Ա Ր		Թ Ե Ր Ի	
		ՍՏՈՒԳ. ԽՈՒՄԲ	ՓՈՐՁ. ԽՈՒՄԲ	ՍՏՈՒԳ. ԽՈՒՄԲ	ՓՈՐՁ. ԽՈՒՄԲ	ՍՏՈՒԳ. ԽՈՒՄԲ	ՓՈՐՁ. ԽՈՒՄԲ
1.	Հայոց հեթանոսական դիցարանի աստվածների թվարկում և բնութագրում	27	24	45	42	28	34
2.	Առասպելների և վիպերգերի՝ ըստ ժամանակագրական հաջորդակա-նության թվարկում, հերոսների բնութագրում	19	21	38	41	43	38
3.	Հայ ազգային-հոգևոր նկարագիրն արտացոլող տարբեր ժանրերի գրական	16	13	48	49	36	38

	ստեղծագործությունների թվարկում						
4.	Չայ ազգային որևէ ծեսի, ավանդույթի, հոգևոր և աշխարհիկ տոնի նկարագրություն	28	30	41	45	31	25

Չարցման արդյունքների վերլուծությունը բացահայտում է հետևյալ պատկերը. ստուգողական խմբում հարցվածների 27%-ը և փորձարարական խմբում 24%-ը

լիարժեք պատկերացումներ ունեն հայոց հնագույն դիցարանի մասին. թվարկվում են Արամազդ, Անահիտ, Վահագն, Աստղիկ, Նանե, Միհր, Տիր, Ամանոր, Վանատուր, Սպանդարամետաստվածները, նշվում են, թե նրանք բնության ինչ ուժեր են մարմնավորում: Որոշ պատասխաններում նույնիսկ թվարկված են գրական ստեղծագործություններ, որոնցում արտացոլված են հայոց դիցարանի աստվածներին նվիրված սյուժեներ: Այս առաջադրանքի վերաբերյալ բավարար պատասխաններ են ստացվել ստուգողական խմբի 45% և փորձարարական խմբի 42% հարցվածների կողմից: Ստուգողական խմբի 28% և փորձարարական խմբի 34% հարցվածներ թերի պատկերացումներ ունեն հայոց դիցարանի մասին. նրանց կողմից տրվել են մակերեսային, ոչ սպառիչ պատասխաններ:

Երկրորդ առաջադրանքի կատարման արդյունքում ստացված տվյալների հիման վրա կարելի է եզրակացնել, որ ավագ դպրոցականները բավականաչափ պատկերացումներ չունեն առասպելների և վիպերգերի մասին: Ստուգողական խմբի 19% և փորձարարական խմբի 21% հարցվածներն են ըստ հաջորդականության թվարկում առավել տարածված ու հայտնի առասպելներն ու վիպերգերը՝ «Չայկ և Բել», «Չայկյան Արամ», «Արա Գեղեցիկ և Շամիրամ», «Տորք Անգեղ», «Տիգրան և Աժդահակ», «Սանատրուկ», «Երվանդ և Արտաշես», «Արտաշես և Սաթենիկ», «Արտաշես և Արտավազդ» և այլն: Ստուգողական խմբում 38% և փորձարարական խմբում 41% հարցվածներ թվարկում են սոսկ ամենահայտնի առասպելներն

ու վիպերգերը, համապատասխանաբար 43% և 38% հարցվածները կամ չեն կատարել առաջադրանքը, կամ թվարկել են 1-2 նմուշ:

Հարցվածներն առավելապես դժվարացել են երրորդ առաջադրանքի ընթացքում: Ստուգողական խմբում հարցվածների 16% և փորձարարական խմբում 13%-ը նշում են հայ ազգային-հոգևոր նկարագիրը, ազգային ոգին, մտածելակերպն ու բնավորությունն արտացոլող բանահյուսական ժանրերը՝ էպոս, պատմական-վիպական երգեր, հեքիաթներ, ավանդազրույցներ, քնարական ստեղծագործություններ և այլն: Համապատասխանաբար 48% և 49% հարցվածները բավականաչափ պատկերացումներ չունեն գրական ժանրերի վերաբերյալ, իսկ ստուգողական խմբերում 36% և փորձարարական խմբերում 38% հարցվածները հստակ չեն պատկերացնում, թե բանահյուսական որ ժանրերն են առավելագույնս արտացոլում հայ ազգային էությունն ու հոգեկերտվածքը:


Ստուգողական խմբում հարցված աշակերտների 28%-ը և փորձարարական խմբում ընդգրկվածների 30%-ը որոշակի պատկերացումներ ունեն ազգային ծեսերի, ավանդույթների, հոգևոր և ազգային տոների մասին. առկա են բովանդակային, լիարժեք նկարագրություններ ընտանեկան ծեսերի, սովորույթների մասին, որոնք խորհրդանշում են ազգային դիմագիծը: Հոգևոր տոներից աշակերտները մեծ ոգևորությամբ են նշում Սուրբ ծնունդը, Տյառնընդառաջը, Սուրբ Չատիկը. արվել են հուզիչ և գունագեղ նկարագրություններ: Ստուգողական և փորձարարական խմբերում համապատասխանաբար 41% և 45% հարցվածներն ունեն միջին մակարդակի պատկերացումներ և գիտելիքներ. թվարկում են, սակայն չեն բնութագրում ազգային տոներն ու ավանդույթները: Ստուգողական խմբում 31% և փորձարարական խմբում 25% հարցվածները բավականաչափ գիտելիքներ չունեն պահանջվող առաջադրանքը կատարելու համար:

Այսպիսով, վերլուծելով ստացված տվյալները, ամփոփելով արված հարցումը՝ որոշվել են մանկավարժական փորձարարության հաստատող փուլում ավագ դպրոցականների ազգային ինքնագիտակցության իմացական բաղադրատարրի զարգացվածության մակարդակները ստուգողական և փորձարարական խմբերում:

ԱՂՅՈՒՍԱԿ 4

ԱՎԱԳ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆԱԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ԻՄԱՑԱԿԱՆ ԲԱՂԱԴՐԱՏԱՐԻ ԶԱՐԳԱՑՎԱԾՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐԸ ՓՈՐՁԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՂ ՓՈՒԼՈՒՄ (ՏՈԿՈՍՆԵՐՈՎ)

ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐ	ՍՏՈՒԳՈՂ. ԽՈՒՄԲ	ՓՈՐՁԱՐԱՐ. ԽՈՒՄԲ
Բարձր	22	22
Միջին	41	44
Ցածր	37	34



ԳՃԱՊԱՏԿԵՐ 2. ԱՎԱԳ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆԱԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ԻՄԱՑԱԿԱՆ ԲԱՂԱԴՐԱՏԱՐԻ ԶԱՐԳԱՑՎԱԾՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐԸ ՓՈՐՁԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՂ ՓՈՒԼՈՒՄ

Ավագ դպրոցականների ազգային ինքնագիտակցության գնահատողական բաղադրատարրի փառորոշման համար անցկացվեց սոցիալոգոմ` պարզելու համար նրանց գնահատողական վերաբերմունքը ազգային մշակույթի` մայրենի լեզվի, բանահյուսության, երգարվեստի, պարարվեստի, արհեստների, նյութական և հոգևոր այլ արժեքների նկատմամբ: Թիվ 2 հարցաթերթիկին (հավելված 2) տրված պատասխանների վերլուծությանը ստացված տվյալներն արտացոլված են թիվ 5 աղյուսակում:

ԱՂՅՈՒՍԱԿ 5

**ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆԱԳԻՏԱԿՑՈՒ ԹՅԱՆ ԳՆԱՐԱՏՈՂԱԿԱՆ ԲԱՂԱԴՐԱՏԱՐԻ
 ԶԱՐԳԱՑՎԱԾՈՒ ԹՅՈՒՆԸ ՓՈՐՁԱՐԱՐՈՒ ԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՂ
 ՓՈՒԼՈՒՄ (ՏՈԿՈՍՆԵՐՈՎ)**

ՉԱՓԱՆԻՇՆԵՐ		ՊՆՏԱՍԻԱՆ	ԱՏՈՒԳ. ԽՈՒՄԲ	ՓՈՐՁ. ԽՈՒՄԲ
1.	Ծանոթ էք արդյոք ժողովրդական բանահյուսու-թյանը	Այո	15	17
		Ոչ	53	49
		Լիովին		
		Ոչ	32	34

ԱՂՅՈՒՍԱԿ 5-Ի ՇԱՐՈՒՆԱԿՈՒ ԹՅՈՒՆԸ

2.	Ունկնդրո՞ւմ եք ժողովրդական երգեր, ազգային մեղեդիներ	Այո	21	22
		Ոչ միշտ	51	48
		Ոչ	28	30
3.	Ունկնդրո՞ւմ եք արդյոք ազգային-հոգևոր երաժշտություն	Այո	12	14
		Որոշ չափով	33	30
		Ոչ	55	56
4.	Հետաքրքրվո՞ւմ եք արդյոք ազգային պարավեստով	Այո	34	38
		Ոչ Լիովին	41	40
		Ոչ	25	22
5.	Ծանոթ էք արդյոք ժողովրդական արհեստներին	Այո	17	16
		Ոչ Լիովին	53	49
		Ոչ	30	35
6.	Հետաքրքրվո՞ւմ եք հայ էթնոսի ծագումնաբանու-թյամբ, պատմական ակունքներով	Այո	31	28
		Որոշ չափով	40	42
		Ոչ	29	30

Հարցաթերթիկի պատասխանների վերլուծությանը բացահայտում է հետևյալ իրողությունը. ստուգողական խմբում ժողովրդական բանահյուսության նմուշներին ընդհանուր առմամբ ծանոթ է 15%-ը, ծանոթ է 32%-ը, որոշ չափով ազգային բանավեստին տիրապետում է 53%-ը, փորձարարական խմբում այդ տվյալները համապատասխանաբար կազմում են 17%, 34% և 49%: Ժողովրդական երգեր և ազգային մեղեդիներ ունկնդրում են ստուգողական խմբում 21%-ը, փորձարարական խմբում՝ 22%-ը, առհասարակ չեն ունկնդրում համապատասխանաբար 28%-ը և 30%-ը: Ոչ միշտ, ըստ իրավիճակի, ազգային մեղեդիներ են ունկնդրում ստուգողական խմբում 51%-ը և փորձարարական խմբում 48%-ը:

Ազգային-հոգևոր երաժշտությունը հոգեհարազատ է ստուգողական խմբում հարցվածների 12%-ին և փորձարարական խմբում 14%-ին: Համապատասխանաբար 55%-ը և 56%-ը հակված չեն ունկնդրելու ազգային-հոգևոր երգերը՝ շարականները, տաղերը: Ստուգողական խմբերում 33%-ը և փորձարարական խմբերում 30%-ը ոչ միշտ են ունկնդրում ազգային-հոգևոր երաժշտություն: Արդյունքները բավականաչափ դրական են ազգային պարավեստի առումով. ստուգողական խմբում հարցվածների 34%-ը և փորձարարական խմբում 38%-ը սիրում և գնահատում են ազգային պարը, տարազները՝ այն համարելով ժողովրդական ոգու արտահայտություն՝ մարմնավորված ռիթմերում և խորհրդանշական շարժումներում: Համապատասխանաբար 25%-ը և 22%-ը անտարբեր են ազգային պարավեստի նկատմամբ:


Ժողովրդական արհեստներին՝ գորգագործությանը, մետաղամշակմանը, կավագործությանը, ասեղնագործությանը և այլն, ծանոթ են ստուգողական խմբում հարցվածների 17%-ը և փորձարարական խմբում 16%-ը, լիովին ծանոթ չեն 53%-ը և 49%-ը, ժողովրդական արհեստների վերաբերյալ պատկերացում չունեն կամ չեն հետաքրքրվում ստուգողական խմբում 30%-ը, փորձարարական խմբում՝ 35%-ը:

Հայ ժողովրդի էթնիկական ակունքներով, ծագումնաբանությամբ, էթնոգեն-նեոտիկ գործընթացներով և դրանց նվիրված գրականությամբ խորապես հետաքրքրվում են ստուգողական խմբում հարցվածների 31%-ը, փորձարարական խմբում՝ 28%-ը: Որոշ չափով հետաքրքրվում են համապատասխանաբար 40%-ը և 42%ը, չեն հետաքրքրվում ստուգողական խմբում 29%-ը, փորձարարական խմբում՝ 30%-ը:

Տվյալների մշակման արդյունքում ստացվեցին բնագիտամաթեմատիկական հոսքի ավագ դպրոցականների ազգային ինքնագիտակցության գնահատողական բաղադրատարրի զարգացվածության բարձր, միջին և ցածր մակարդակները:

ԱՎԱԳ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԱՉԳԱՅԻՆ ԻՆՔՆԱԳԻՏԱԿՑՈՒ ԹՅԱՆ ԳՆԱՅԱՏՈՂԱԿԱՆ ԲԱՂԱԴՐԱՏԱՐԻ ԶԱՐԳԱՑՎԱԾՈՒ ԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐԸ ՓՈՐՁԱՐԱՐՈՒ ԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՂ ՓՈՒԼՈՒՄ (ՏՈԿՈՍՆԵՐՈՎ)

ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐ	ՍՏՈՒԳՈՂԱԿԱՆ ԽՈՒՄԲ	ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ԽՈՒՄԲ
Բարձր	22	23
Միջին	45	43
Ցածր	33	34



ԳՃԱՊՏԿԵՐ 3. ԱՎԱԳ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԱՉԳԱՅԻՆ ԻՆՔՆԱԳԻՏԱԿՑՈՒ ԹՅԱՆ ԳՆԱՅԱՏՈՂԱԿԱՆ ԲԱՂԱԴՐԱՏԱՐԻ ԶԱՐԳԱՑՎԱԾՈՒ ԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐԸ ՓՈՐՁԱՐԱՐՈՒ ԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՂ ՓՈՒԼՈՒՄ

Ազգային ինքնագիտակցության գնահատողական բաղադրատարրի զարգաց-վածության միջին և ցածր մակարդակների գերակշռությունը մեզ թույլ է տալիս եզրակացնել, որ ավագ դպրոցականների մեծամասնությունն անտարբեր է հայ ազգային մշակույթի՝ բանահյուսության, ժողովրդական և գուսանական երգերի, ազգային պարավեստի, ժողովրդական արհեստների նկատմամբ: Հատկապես մտահոգիչ է այն փաստը, որ դպրոցականներին չեն հետաքրքրում իրենց ազգային ակունքների, ծագման և էթնոգենեզի վերաբերյալ գիտելիքները: Չրոլյցների, բանավեճերի ընթացքում դպրոցականներն իրենց վերաբերմունքը հիմնավորում

են գլոբալացման արդի գործընթացներով: Ըստ նրանց՝ հազարամյակի մարտահրավեր-ները պահանջում են օտար լեզուների, համաշխարհային մշակույթի և պատմության իմացությունն՝ միջմշակութային երկխոսության պատրաստ լինելու համար: Ազգայինը, այսպիսով, մղվում է հետին պլան:

Ազգային ինքնագիտակցության վարքային-գործունային բաղադրատարրի զարգացվածության մակարդակների ախտորոշման համար օգտագործվել են էմպիրիկ հետազոտության տարբեր մեթոդներ՝ դիտում, զրույց, սոցիալոգրամներ, մանկավար-

ժական փաստաթղթերի ուսումնասիրում:

Վարքային-գործունային բաղադրատարրերի զարգացվածության չափանիշի կարևոր բնութագրիչներից են մայրենի լեզվի հմուտ տիրապետումը, հաղորդակցման մշակույթը, ազգային հոգեկերտվածքին բնորոշ հատկանիշների դրսևորումը տարբեր իրավիճակներում, էկոլոգիական մշակույթը, բնության նկատմամբ վերաբերմունքը, ազգային ինքնագիտակցության դրսևորումը տարբեր ազգերի ներկայացուցիչների հետ ունեցած հարաբերություններում, ազգային բնավորության արտահայտվածությունն արարքներում ու գործողություններում և այլն: Դպրոցականների հետ ամենօրյա շփումների, զրույցների ընթացքում պարզ դարձավ, որ ընդհանուր առմամբ նրանց խոսքն աղքատիկ է, զերծ պատկերավորման միջոցներից, օտարաբանություններով հագեցած: Սովորողների մեծամասնությունը միտումնավոր խուսափում է գրական, քերականորեն ճիշտ հայերենով արտահայտվելուց՝ մտավախություն ունենալով ծաղրի առարկա դառնալ հասակակիցների շրջանում: Սոցիալական կայքերով և բջջային հեռախոսներով հաղորդակցման սեղմ, հակիրճ, համառոտված, այսպես կոչված «ինտերնետային չաթերի» բառապաշարը թափանցում է ոչ միայն առօրյա, այլև գրական խոսք, որում գրեթե բացակայում է մայրենիի շքեղ բառազանձը. օտար շեշտադրումներով և բառօգտագործման սխալներով լեցուն խոսքը դարձել է երիտասարդության մեծամասնության հաղորդակցման

միջոցը: Մեր հետազոտության շրջանակներում հարցվածների 65%-ը նշում է, որ իրենց խոսքի, մտածելակերպի և գեղարվեստական ճաշակի վրա մեծ ազդեցություն ունեն տարբեր հեռուստալիքներով ցուցադրվող հեռուստասերիալները, որոնք լեցուն են քրեական միջավայրին բնորոշ ժարգոնային բառապաշարով, արարքներով ու հոգեբանությամբ: Աճող սերնդի դիմագծի վրա նշանակալիորեն ազդում են նաև օտար ազգերին բնորոշ արժեքները, նաև կենցաղային տարրերը, հագուստը, սովորույթները, նույնիսկ օտար տոները, ծեսերը, որոնք հեռու են մեր ազգային պատկերացումներից: Երիտասարդության խնդիրները, հոգսերը, մտորումները չեն դառնում զանգվածային լրատվամիջոցների քննարկման առարկա: Ազգային-մշակութային բովանդակություն ունեցող հաղորդումներն իրենց տեղը զիջում են թեթև, ժամանցային, անբովանդակ հաղորդումներին: Չնայած նրան, որ գիտափորձի ընթացքում սովորողների զգալի մեծամասնությունը (92%) կարևորում է ազգային-հայրենասիրական բովանդակություն ունեցող միջոցառումների, իմացական մրցույթների կարևորությունը, այնուհանդերձ ոչ բոլորն են ցանկանում մասնակցել դրանց:

Վարքային-գործունային բաղադրատարրի զարգացվածության ակտորոշման համար հանձնարարվեց թիվ 3 հարցաթերթիկը (հավելված 3), որին տրված պատասխանների վերլուծությունն արտացոլված է թիվ 7 աղյուսակում:

ԱՂՅՈՒՍԱԿ 7

ԱՎԱԳ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԱԶԳՍՅԻՆ ԻՆՔՆԱԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԱՐՔՍՅԻՆ-ԳՈՐԾՈՒՆԱՅԻՆ ԲԱՂԱԴՐՍԱՐԻ ԶԱՐԳԱՑՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՐՁԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՂ ՓՈՒԼՈՒՄ (ՏՈԿՈՍՆԵՐՈՎ)

	ՉՍՓԱՆԻՇՆԵՐ	ՊՍՏԱՄԻԱՆ	ՍՏՈՒԳՈՂԱԿԱՆ ԽՈՒՄԲ	ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ԽՈՒՄԲ
1.	Ընթերցում էք արդյոք գեղարվեստական գրականություն	Միշտ	25	28
		Ոչ միշտ	41	43
		Ոչ	34	29
2.	Ազգամիջյան հարաբերություններում կարևոր է արդյոք ազգային	Այո	23	21
		Դժվարանում եմ պատասխանել	47	45

	ինքնագիտակցության զարգացվածությունը	Ոչ	30	34
3.	Ազգային ինքնագիտակցության զարգացվածությունը նպաստում է արդյոք համամարդկային արժեքների տիրապետմանը	Այո	28	27
		Դժվարանուն մեմ պատասխանել	41	39
		Ոչ	31	34
4.	Համաշխարհայինացման արդի գործընթացներում ազգային ինքնագիտակցության զարգացվածությունը կարևոր է արդյոք միջմշակութային երկխոսության իրականացման համար	Այո	22	24
		Դժվարանուն մեմ պատասխանել	46	43
		Ոչ	32	33

Հարցված աշակերտների բացարձակ մեծամասնությունը նշում է, որ տանն ունի

սեփական գրադարան՝ հայ և համաշխարհային գրականությունը, սակայն միայն 25%-ն

Է մշտապես զբաղվում ընթերցանությամբ, կարդում գեղարվեստական և գիտահանրամատչելի գրականություն: Հարցվածների մեծ մասը դժվարանուն է որևէ տեսակետ արտահայտել, սակայն զրույցների ընթացքում արտահայտում է այն կարծիքը, որ բավական է միայն ծանոթանալ գեղարվեստական երկի բովանդակությանն ու կերպարներին. ստեղծագործության գեղարվեստական արժեքը, գաղափարական կողմը, բնապատկերների գեղագիտական արժեքը, կերպարների հոգեբանական խորությունը ընկալելը, նրանց կարծիքով, պարտադիր չէ:

Ոչ բոլոր աշակերտների արարքներում և գործողություններում են արտահայտվում ազգային բնավորության ընդգծված հատկանիշները. գրական որոշ ստեղծագործությունների վերլուծության, կերպարների բնութագրման, տարբեր թեմաներին նվիրված բանավեճերի ընթացքում շատ աշակերտներ, օրինակ, արտահայտում են այն կարծիքը, որ ազգային տարբեր երևույթների նկատմամբ հուզական հակադրումները,


բարդույթները, տարբեր մշակույթների, կրոնների, լեզուների էթնոհոգեբանական տարբերությունների դիտարկումը, անցյալի նկատմամբ վերաբերմունքը, ներէթ-նիկական և միջէթնիկական տարբեր դրսևորումները, որոշ կարծրատիպեր ներ-կայումս՝ համաշխարհայնացման գործընթացներում, պարտադիր չէ, որ արտահայտվեն: Աշխարհաքաղաքական արդի տեղաշարժերում ոչ բոլորն են կարևորում այն, որ համամարդկային մտածողությունն ու արժեքները կարող են յուրացվել ազգային ինքնագիտակցության զարգացվածության շնորհիվ: Բանավեճերի ընթացքում այս տեսակետին հակադրվել է այն դիրքորոշումը, որ ազգային հոգեկերտվածքը՝ բյուրեղացած մշակույթում, մարմնավորված մարդկանց վարքում և փոխհարաբերություններում, այն էական հատկանիշն է, որ պետք է հայ ազգի ներկայացուցչին տարբերի այլ ազգերի ներկայացուցիչներից, բայց և նպաստի միջմշակույթային երկխոսության իրականացմանը:

Այսպիսով, վերլուծելով այն տվյալները, որոնք ստացվել են ավագ դպրոցա-կանների ազգային ինքնագիտակցության վարքային-գործունային բաղադրատարրի զարգացվածության մակարդակների ախտորոշման համար, մեզ թույլ էն տալիս բնութագրել բարձր, միջին և ցածր մակարդակները:

ԱՂՅՈՒՍԱԿ 8

ԱՎԱԳ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԱԶԳՍԻՆ ԻՆՔՆԱԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԱՐՔԱՅԻՆ-ԳՈՐԾՈՒՆԱՅԻՆ ԲԱՂԱԴՐԱՏԱՐՐԻ ԶԱՐԳԱՑՎԱԾՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐԸ ՓՈՐՁԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՂ ՓՈՒԼՈՒՄ (ՏՈԿՈՍՆԵՐՈՎ)

ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐ	ՍՏՈՒԳՈՂԱԿԱՆ ԽՈՒՄԲ	ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ԽՈՒՄԲ
Բարձր	24	25
Միջին	44	42
Ցածր	32	33



ԳՃԱՊԱՏԿԵՐ 4. ԱՎԱԳ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԱՉԳԱՅԻՆ ԻՆՔՆԱԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՐՔԱՅԻՆ-ԳՈՐԾՈՒՆԱՅԻՆ ԲԱՂԱԴՐՍԱՐԻ ՉԱՐԳԱՅՎԱԾՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐԸ ՓՈՐՁԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՂ ՓՈՒԼՈՒՄ

Աղյուսակի տվյալները հավաստում են մանկավարժական փորձարարության հաստատող փուլում ավագ դպրոցականների ազգային ինքնագիտակցության վարքային-գործունային բաղադրատարրի միջին և ցածր մակարդակների գերակշռումը -

թյուրը: Ստուգողական և փորձարարական խմբերում արձանագրված տվյալների միջև էական տարբերություններ չկան, քանի որ երկու խմբերում էլ ընդգրկված են հավասար կարողություններով աշակերտներ:

Ստացված տվյալները վկայում են, որ ավագ դպրոցի բնագիտամաթեմատիկական հոսքում կրթության բովանդակության մեջ պետք է շեշտադրել սովորողների ազգային ինքնագիտակցության զարգացման հետ կապված հիմնահարցը: Անհրաժեշտ է դպրոցականների մեջ հետաքրքրությունն ձևավորել ազգային մշակույթի, պատմության, հոգևոր արժեքների նկատմամբ:

Մեր խորին համոզմամբ այդ խնդիրը կարելի է լուծել՝ ավագ դպրոցի բնագիտամաթեմատիկական հոսքի դպրոցական կամ նախապիրական բաղադրիչ-չուն ներդրելով «Հայ գրականություն և

ազգագրություն» դասընթացը, կիրառելի համապատասխան մեթոդներ, միջոցներ:

3.2. Ավագ դպրոցականների ազգային ինքնագիտակցության զարգացման մեթոդները և միջոցները

Ավագ դպրոցի բնագիտամաթեմատիկական հոսքում սովորողների ազգային ինքնագիտակցության զարգացման արդյունավետ իրականացման համար կարևոր է նախանշել մանկավարժական այն միջոցները, որոնք ապահովում են այդ գործընթացի արդյունավետությունը՝

- ուսումնական և արտասուսումնական գործունեության ընթացքում ինտերակտիվ հաղորդակցման միջավայրի ապահովումը,
- դպրոցականների մեջ ազգային-մշակութային արժեքների ձևավորման համար դասավանդող ուսուցիչների մասնագիտական բարձր կոմպետենցիաները,
- ազգային պատմության, մշակույթի, ծագումնաբանության, ազգային արժեհամակարգի և հոգեկերտվածքի նկատմամբ դպրոցականների մեջ հետաքրքրության արթնացումը,
- սովորողների անհատական առանձնահատկությունների և ուսումնասիրման գործառնությունների հաշվառումը,
- ուսումնական բոլոր դասընթացների համապատասխան ներուժի հաշվառումը,
- դասղեկի ժամերի նպատակային օգտագործումը,
- համագործակցային ուսումնառության նկատմամբ դրական վերաբերմունքի ձևավորումը, կրթական պահանջմունքների ակտիվացումը, հումանիտար առարկաների ուսումնասիրման պահանջմունքների խթանումը և այլն:

Ավագ դպրոցականների մեջ ուսումնասիրվող նյութի նկատմամբ գնահատողական վերաբերմունք ձևավորելու համար անհրաժեշտ է նրանց մեջ ձևավորել որոշ կարողություններ՝ անցած նյութի հետևոր նյութի գույնգործումը, համադրումն ու ընդհանրացումը, ընկալման և մտապատկերման միջոցով նոր

գիտել իքներին ձեռքբերումը, միջառարկայական կապերի գիտակցումը, բնութագրման, հիմնավորման, կշռադատման միջոցով մտահանգումներ անելը, ուսումնական նյութի համա-կարգված, պատճառահետևանքային կապերի գիտակցմամբ ընկալումը, վերացարկման, փաստարկման, արժևորման, կանխատեսման միջոցով ուսումնասիրվող նյութի մեջ գլխավորի, էականի վերհանումը, հիմնախնդրի առաջադրումն ու տարբեր տեսանկյուններից դիտարկումը:

Ավագ դպրոցականների ազգային ինքնագիտակցության զարգացման կարևոր պայման է կրթության բովանդակության մեջ ազգային բաղադրատարրի ներմուծումը: Սա նշանակում է, որ ուսումնասիրվող դասընթացների թեմաներում պետք է հնարավորինս ընդգծել ազգային-հայրենասիրական բովանդակությունը: Բնականաբար, այս առումով հիմնական դեր է վերապահված հումանիտար առարկաներին, մասնավորապես՝ հայ գրականությանը: Գրական ստեղծագործություններն արտացոլում են ժողովրդի պատմությունը, կյանքը, մշակութային փոխարարություններն այլ ազգերի հետ: Դիցաբանական կերպարները, պատմական դեմքերը և իրադարձությունները, բանահյուսական ժառանգությունը սովորողներին լիարժեք տեղեկատվություն են հաղորդում ազգային և համաշխարհային մշակույթի, պատմության, տարբեր ազգերի սովորույթների, ավանդույթների, խորհրդանիշների, ոգու և մտածելակերպի մասին:

Գրականության ծրագրային բովանդակության նախագծման ժամանակ հաշվի են առնվում հետևյալ պահանջներն ու չափանիշները՝

- ծրագրով առաջարկվող նյութերը պետք է բխեն կյանքից, սովորողների հետաքրքրություններից, արտացոլեն մարդկանց ճակատագրերը, ապրումները, պայքարը հանուն բարու և վսեմ գաղափարների, ցույց տան պատմական անցյալի և ներկայի միջև ժամանակային կապը, սերունդների հոգևոր ժառանգորդությունը, նպաստեն մարդու հոգևոր էության ճանաչմանը, ազգային մտածողության ձևավորմանը. գրական-գեղարվեստական երկը պետք է

դաստիարակչական և ճանաչողական նշանակություն ունենա, օգնի գիտակցել գրողի և նրա ստեղծագործության հասարակական նշանակությունը,

- ուսումնական գործընթացը պետք է իրականանա իմացական, բարոյական և գեղագիտական ապրումների դրսևորման, կարծիքների ու դիրքորոշումների բախման մթնոլորտում,

- անհրաժեշտ է աշակերտներին ակտիվորեն ներգրավել գրական նյութերի ընտրում-թյան գործընթացում, ստեղծել այլ ընտրանքային ծրագրեր, գրական նյութերն ընտրել իս հաշվի առնել աշակերտների նախասիրությունները, գրական ճաշակը, գեղագիտական ընկալումները,

- որոշ ստեղծագործություններ պետք է նախատեսվեն ինքնուրույն ուսումնասիրության համար, որոնք զարգացնում են տեղեկատվական տարբեր աղբյուրներից օգտվելու, ստացված նյութերը համակարգելու և մատուցելու, գրավոր և բանավոր խոսք կառուցելու կարողությունները,

- բնագիտամաթեմատիկական հոսքի հայ գրականության ծրագիրը սովորողներին պետք է հնարավորություն տա բացահայտելու հայ գրականության և հոսքային առարկաների միջև առնչությունները, ուսուցանվող թեմաները կապել մարդու կենսա-

գործունեության համար կարևոր ոլորտների հետ, հարստացնել սովորողների սոցիա-

լական փորձն ու կենսական պատկերացումները:

Հայ գրականության ուսուցման ընթացքում ավագ դպրոցականների ազգային ինքնագիտակցության զարգացման ուղղությամբ կարևոր է կրթադաստիարակչա-

կան համապատասխան նպատակների առաջադրումը: Հստակ և մանկավարժորեն առաջադրված նպատակներն արտացոլում են կրթության ազգային-բովանդակային կողմը, մանկավարժներին օգնում են ընտրել ուսուցման և դաստիարակության համապատասխան տեխնոլոգիաներ:

Դպրոցականների ազգային ինքնագիտակցության զարգացման ուղղությամբ մեր կողմից նախանշվել են նպատակների երեք հիմնական խմբեր, որոնք ուղղված են ազգային

ինքնագիտակցության իմացական, գնահատողական և վարքային-գործունային բաղադրատարրերի զարգացմանը:

Առաջին խումբ նպատակներն ուղղված են ազգային ինքնագիտակցության իմացական բաղադրատարրերի զարգացմանը՝

- դպրոցականների մեջ «ազգ», «Էթնոս» հասկացությունների և ազգային ինքնագիտակցության վերաբերյալ պատկերացումների ձևավորում, ազգային խորհրդանիշների, կարծրատիպերի, հոգեկերտվածքի, մտածելակերպի, բնավորության, հոգե-բանության վերաբերյալ տեսական գիտելիքների հարստացում,
- մայրենի լեզվի, հայրենիքի պատմության, բնության, աշխարհագրության իմացություն,
- ազգային կենսակերպի, ավանդույթների, սովորույթների, աշխարհիկ և հոգևոր տոների, կրոնական հավատալիքների, Էթիկետի (մարդկանց միջև որոշակի հարաբերություններ պահպանելու համար օգտագործվող արարողություններ) վերաբերյալ պատկերացումների ձևավորում,
- ազգային հատկանիշների յուրահատկությունների ընկալում:

Երկրորդ խումբ նպատակներն ուղղված են ազգային ինքնագիտակցության գնահատողական բաղադրատարրի ձևավորմանը՝

- դպրոցականների մեջ հայրենի եզերքի, պատմության, մշակութային արժեքների նկատմամբ հետաքրքրության, հարգանքի և գնահատողական վերաբերմունքի ձևավորում,
- համաշխարհային մշակույթի գանձարանում ազգային մշակույթի տեղի արժևորման կարողությունների ձևավորում,
- ազգային արժանապատվության, ինքնագիտակցության, իր ժողովրդի նկատմամբ պարտքի և պատասխանատվության, քաղաքացիական գիտակցության ձևավորում, իր ժողովրդի պատմության և մշակույթի նկատմամբ արժեքային վերաբերմունքի դաստիարակում:

Երրորդ խումբը կազմում են այն նպատակները, որոնք ուղղված են դպրոցականների մեջ ազգային ինքնագիտակցության վարքային-գործունային բաղադրատարրի ձևավորման հետ՝

- ազգային մտածելակերպին, հոգեկերտվածքին, բարոյավարքային նորմերին, Էթնո-սոցիալական և Էթնոմշակութային պահանջներին

համապատասխան վարք և գործունեություն, ազգային մշակույթի ընկալում, յուրացում, արժևորում, միջմշակութային երկխոսության պատրաստակամություն,

- իրեն որպես տվյալ էթնիկ հանրության ներկայացուցչի ընկալում, համապատասխան գործառնությունների իրականացում, ազգային իրողություններին բարոյահոգեբանական հարմարում,
- ազգային ավանդույթներին հարազատություն, ազգային բնավորության և այլ հատկանիշներին յուրացում,
- ազգապահպան գործունեության իրականացում մշակութային տարբեր միջավայրերում, մայրենի տիրապետում, ազգային-հայրենասիրական գաղափարների հաս-տատունություն:

Նշված նպատակները, բնականաբար, իրականանում են աշակերտների դասարանային և արտադասարանային գործունեության ընթացքում: Դիտարկելով ավագ դպրոցի բնագիտամաթեմատիկական հոսքի «Հայ գրականություն» առարկայի ծրագիրը՝ մենք համոզվեցինք, որ ծրագրի սուղ ժամաքանակի պայմաններում հնարավոր է լիարժեքորեն օգտագործել հայ գրականության և ժողովրդական բանա-

հյուսությունները՝ դպրոցականների ազգային ինքնագիտակցության արդյունավետ զարգացման համար: Տեսական և փորձարարական հետազոտության ընթացքում հանգեցինք այն եզրակացության, որ խորանհրաժեշտություն կա ուսումնասիրել «Հայ գրականություն և ազգագրություն» արտասուսումնական դասընթացը, որի ընտրության

համար պետք է առաջնորդվել հետևյալ դրույթներով՝

- ուսումնասիրվող նյութի կրթական, զարգացնող և դաստիարակչական ներուժի օգտագործումը,
- նյութի համարժեքությունը տվյալ առարկայի դասավանդման հայեցակարգին, գիտական համակարգված գիտելիքներին,
- ընտրված նյութի բովանդակության մեջ ազգային բաղադրատարրի արտահայտվածությունը,
- հայ գրականության զարգացման փուլերի, նշանավոր գրողների կյանքի և ստեղծագործության, հայ գրականության

համաշխարհային արժեքի, ազգային հոգեկերտվածքի ձևավորման մեջ նրա բացառիկ դերի և նշանակության գիտակցման ապահովումը,

- նյութի համապատասխանությունը պատանիների տարիքային հետաքրքրություն-թյուններին, նրանց մեջ ինքնուրույն որոնողական-հետազոտական գործունեության դրդապատճառների ձևավորումը,

- գրական նյութի ուսումնասիրման համատեքստում համաշխարհային գրականության լավագույն ստեղծագործությունների, գրողների կյանքի և գործունեության, գրականության տեսություն հիմնական հասկացությունների, գրականության և հասարակական կյանքի փոխհարաբերության, արվեստի այլ տեսակների հետ ունեցած կապի վերաբերյալ տեղեկատվության ընդգրկումը,

- դպրոցականների մեջ ուսումնաճանաչողական դրդապատճառների ձևավորումը գրական ստեղծագործությունների գաղափարական-գեղարվեստական հարստության և երկերի ընձեռած գեղագիտական խոր արժեքի օգտագործմամբ:

Առաջարկվող թեմատիկայի ուսուցումը ներառում է հետևյալ խնդիրները՝

- աչակերտներին խորությամբ ծանոթացնել հայ ժողովրդի էթնիկական ակունք-

ներին,

- ուսումնասիրվող նյութերի միջոցով ճանաչել տալ ազգային արժեհամակարգը, հոգեկերտվածքը, հոգևոր նկարագիրը, մշակույթը, ձևավորել սերունդական

հայրենիքի, ազգային-պետական խորհրդանիշների նկատմամբ,

- դաստիարակել ազգային հպարտության, արժանապատվության, հայրենիքին նվիրվածության զգացում,

- մշակել գրական ստեղծագործությունները վերլուծելու, գաղափարական և գեղարվեստական արժանիքները գնահատելու, ինքնուրույն դատողություններ և եզրահանգումներ կատարելու կարողություններ:

Թեմատիկան առաջադրելիս ուսումնական նյութի բովանդակության մեջ առանձնացվել են թեմատիկ խմբեր, որոնք ընդգրկում են դպրոցականի անձի վրա գրական երկի դաստիարակչական ներգործության տարբեր ոլորտներ: Դրանք այն

միջոցներն են, որոնք նպատակաուղղված են սովորողների ազգային ինքնագիտակցության ամբողջական զարգացմանը, և պայմանականորեն դասակարգել ենք տարածքային, ժամանակային, պատմական, ռազմական, տնտեսական, քաղաքական, մշակութային, հոգևոր-բարոյական և այլ խմբերի:

Տարածքային խումբը երկրագիտական ուղղվածությամբ ունի այն կողմնորոշված է հայրենի բնաշխարհի ճանաչմանը, պատմական հայրենիքի նկատմամբ հայրենասիրական զգացումների ձևավորմանը: Այդ նյութերում ներկայացվում են Հայկական լեռնաշխարհը, պատմաաշխարհագրական առանձնահատկությունները, ազգային ծեսերը, ավանդույթները, սովորույթները, կենցաղը, կրոնական պատկերացումները, գործունեության և զբաղմունքի ձևերը, արհեստները, բնավորությունը, խառնվածքը, տվյալ տարածքի հետ կապված դիցաբանական պատկերացումները, ավանդազրույցները, տեղանունների ստուգաբանությունը:

Ուսումնական նյութերի թեմատիկ խումբը, որը մենք բնութագրում ենք որպես ժամանակային, ընդգրկում է պատմական որոշակի ժամանակահատվածում ժողովրդի կյանքը, պատմական տվյալ դարաշրջանի բնութագիրը, սերունդների միջև հոգևոր կապը: Հատկապես պատմական երկերն են պատկերացում տալիս ժողովրդի անցյալի

հերոսական էջերի, բարքերի, սովորույթների, կենցաղի, մի խոսքով՝ նյութական և հոգևոր կյանքի մասին: Պատմական երկերի միջոցով սովորողները յուրացնում են պատմության դասերը. իր ժողովրդի պատմական անցյալի իմացությունն անհրաժեշտ է ներկան իմաստավորելու և ապագան կանխորոշելու համար:

Ռազմահայրենասիրական թեմատիկ խումբը նպատակաուղղված է սովորողների մեջ հայրենասիրության, արժանապատվության, հպարտության զգացումների ձևավորմանը: Հայոց արքաների, զորավարների, աշխարհազորայիների հայրենասիրության, քաջագործության և անձնագոհության վերաբերյալ բազմաթիվ օրինակներ են արտացոլված առասպելներում, վիպերգերում, էպոսում, ավանդազրույցներում, պատմական երկերում, պոեմներում, բանաստեղծություններում: Ազգասիրության,

մարտու նակության, հայրենասիրության և ազգային նկարագրին բնորոշ այսօրիական հատկանիշների շնորհիվ է հայ ազգը դիմագրավել պատմության ծանրագույն փորձություններին:

Գիտամշակութային թեմատիկ խումբը նպատակաուղղված է ազգի պատմության և մշակույթի ճանաչողությանը, հայ և համաշխարհային մշակութային արժեքների արժևորմանը: Այս խմբի շրջանակներում ներառված գրական ստեղծագործությունները աչակերտներին տեղեկատվություն են հաղորդում գիտության և մշակույթի նշանավոր գործիչների՝ գրողների, նկարիչների, երգահանների, ճարտարապետների, գիտնականների մասին, ծանոթացնում պատմության և մշակույթի հուշարձաններին:

Ավագ դպրոցականների ազգային ինքնագիտակցության զարգացմանն են ուղղված նաև ժողովուրդների բարեկամությանը, միջմշակութային երկխոսությանը, տարբեր ազգերի մշակութային փոխհարաբերություններին նվիրված ստեղծագործությունները: Իր պատմական ճակատագրի, աշխարհագրական դիրքի բերումով գտնվելով արևելքի և արևմուտքի խաչմերուկում՝ հայ ժողովուրդը մշակութային բազմաբնույթ կապեր է ձևավորել տարբեր ժողովուրդների հետ՝ ունենալով առևտրատնտեսական, լեզվամշակութային փոխառնչություններ: Ուսումնական թեմատիկան առաջադրելիս չպետք է անտեսել ևս մեկ կարևոր հանգամանք. մեծ սփյուռք

ունեցող հայության համար էական է պատմական ճակատագրի բերումով երկփեղկված երկու հատվածների հոգևոր միաձուլումը: Այդ գործում առաջնային նշանակությունն պետք է ունենա սփյուռքահայ գրականության այն նմուշների ուսուցումը, որոնք նվիրված են կարոտի, ձուլման, պատմական հիշողության վերարթնացման, օտար ափերում «հայու բեկորների» մեջ ազգային ոգու պահպանման, ազգային ինքնագիտակցության զարգացման թեմաներին:

Չոգևոր-բարոյական ներուժ ունեցող թեմաները սովորողներին հաղորդակցում են բանահյուսությանը, պատմիչների երկերին:

Դասի թեմային, նպատակին և խնդիրներին համապատասխան՝ ընտրվել են ուսուցման տարբեր ձևեր և մեթոդներ: Ուսումնական գործունեության կազմակերպման ընթացքում հաշվի են առնվում ավագ դպրոցի նպատակները և ուսումնական գործունեության առանձնահատկությունները: Ավագ դպրոցում ուսումնական գործունեության ընթացքում պետք է հատուկ ուշադրություն դարձնել սովորողների կողմից գիտելիքների յուրացման գործում ինքնուրույնությանը, ստեղծագործական մոտեցմանը, հետազոտական կարողությունների դրսևորմանը, հաղորդակցական և համագործակցային որակների զարգացմանը: Ավագ դպրոցում կարևորվում են ոչ միայն գիտելիքները, այլ և ինքնուրույն աշխատանքի հմտությունները, աշխարհ-ընկալման և մտահորիզոնի ընդլայնումը, տրամաբանական գործընթացների՝ համեմատելու, համադրելու, վերլուծելու, վերացարկելու, եզրահանգելու, ամփոփելու, ընդհանրացնելու կարողությունների, սոցիալական փորձի զարգացումը: Քանի որ ավագ դպրոցը կապող օղակ է դպրոց-բուհ շղթայում, ուստի կրթական այս աստիճանում պետք է կիրառվեն ուսումնական գործունեության այնպիսի ձևեր և մեթոդներ, որոնք զարգացնում են որոնողական-հետազոտական գործունեություն կատարելու ունակությունները՝ աշակերտներին նախապատրաստելով բուհական ուսուցման ձևերին ու տեսակներին:

Ուսուցման ձևը աշակերտի և ուսուցչի հարաբերությունների, փոխգործակցության, իմացական և դաստիարակչական հաղորդակցման նպատակաուղղված, հստակ կազմակերպված, բովանդակային առումով հագեցած և մեթոդապես զինված

համակարգ է: Ավագ դպրոցականների ազգային ինքնագիտակցության զարգացման՝ մեր կողմից առաջադրված նպատակներն իրականանում են դասի, գործնական և դերային խաղերի, թիմային և անհատական հետազոտական աշխատանքի, խմբային

զույգերով գործունեության, բանավեճի, էքսկուրսիաների ընթացքում:

Անհատական գործունեությունը ուսումնական աշխատանքի այն ձևն է, որն իրականանում է դասարանում և արտադասարանային գործունեության ընթացքում: Այս գործընթացում կարևորվում են գեղարվեստական երկերի ընթերցանությունը, վերլուծական-բնութագրական խոսքի զարգացումը, դատողական, նկարագրական, պատմողական տարրերով ստեղծագործական բնույթի ազատ և թեմատիկ շարադրանքներ իրականացնելու հմտությունները, տեղեկատվական տարբեր աղբյուրներից լրացուցիչ նյութերի որոնման, համակարգման, մշակման, բառարան-ներից և հանրագիտարաններից օգտվելու կարողությունների ձևավորումը, ճանաչողական ակտիվության զարգացումը: Ավագ դպրոցականը պետք է կարողանա ընթերցած գեղարվեստական նյութը սահուն վերարտադրել, հիմնավորել, բնութագրել կերպարները, դեպքերն ու իրադարձությունները, բանավիճել, քննարկել, հիմնավորել իր տեսակետը, ձևակերպել հարցեր, դրսևորել քննադատական մտածողություն, ստեղծագործական համարձակություն, երևակայություն, կարողանա այդ բոլորն իրականացնել գրագետ, քերականորեն ճիշտ մայրենիով: Խոսքում պետք է կիրառվեն պատկերավորման և արտահայտչունության միջոցներ, դարձվածքներ, թևավոր խոսքեր, ասույթներ. պետք է խստորեն պահպանվեն գործառական և իրադրական ոճերին բնորոշ բառապաշարը, կապակցման և լեզվական-քերականական միջոցները:

Մեր հետազոտությունները ցույց են տալիս, որ ավագ դպրոցական տարիքում, երբ ձևավորվում են կենսական դիրքորոշումները, ուսումնադաստիարակչական ներգործությունն առավել արդյունավետ է իրականանում խմբային գործունեության ընթացքում: Խմբային աշխատանքում են ձևավորվում «ես»-ը, ինքնագնահատման և փոխադարձ գնահատման կարողությունները, համոզմունքները, այլոց կարծիքը հարցնելու ունակությունը, բանավիճելու մշակույթը: Խմբային աշխատանքի բարձր մակարդակ է համագործակցային ուսումնառությունը, որի շնորհիվ աչակերտների մեջ

ձևավորվում է թիմային աշխատանքի մշակույթ: Համագործակցային ուսումնառության տեսության զարգացման և գործնական

կիրառու թյուրևեղի մշակման գործում մեծ ներդրում ունեցող հետազոտողները՝ Դեյվիդ և Ռոջեր Ջոնսոնները, Պասի Սահլբերգը և այլք, համագործակցային ուսումնասիրության տեխնոլոգիաների կիրառման

արդիականությունը հատկապես հիմնավորում են ներկայումս՝ ժողովրդավարության զարգացման, տեխնոլոգիական հեղաշրջումների, գլոբալացման, աշխատուժին ներկայացվող նոր պահանջների հարափոփոխ աշխարհում:

Համագործակցային ուսումնասիրության կարևոր արդյունքն անձի զարգացումն ու անհատականության ձևավորումն է, քանի որ անձի անհատականությունը, ներանձնային ու միջանձնային հմտությունները ձևավորվում են մարդկանց հետ շփման արդյունքում: Դրական և աջակցող փոխհարաբերությունները խթանում են ոչ միայն ակադեմիական նվաճումները, այլև՝ հոգեբանական և ֆիզիկական առողջությունը:

Համագործակցային ուսումնասիրության տարրերը, ըստ Ջոնսոնների, հինգն են՝ դրական փոխկախվածություն, դեմադրեմ համագործակցություն, անհատական հաշվետվություն և պատասխանատվություն, սոցիալական և համագործակցային հմտություններ, խմբային գործընթաց. Պասի Սահլբերգը հավելում է նաև փոխներգործուն (ինտերակտիվ) առաջադրանքը (20, էջ 15-29): Մեր հետազոտության թեմայի հետ կապված՝ կիրառելի են գործունեության հետևյալ ձևերը՝ տեքստային, բառային, հետազոտական և ստեղծագործական համատեղ աշխատանքը, կապակցված խոսքի կառուցման աշխատանքները, բանավեճերը, քննարկումները, հետազոտական նախագծերի շնորհանդեսները, գեղարվեստական երկերի բեմականացումը, մտամրցույթները (վիկտորինա) և այլն:

Ներկայումս անձնակենտրոն կրթության մանկավարժական տեխնոլոգիաների հիմքում ընկած են յուրաքանչյուր աշակերտի ակտիվ, գիտակցված, ստեղծագործական գործունեության մեջ ներգրավման մոտեցումները, որոնք հիմնված են «սուբյեկտ-սուբյեկտ» հարաբերությունների վրա, ենթադրում են երկխոսություն և հաղորդակցում: Այդ գործընթացում բավականաչափ արդյունավետ է օգտագործել գույգերով

գործունեության ու սումնական հնարավորությունները:
Չույգերով գործունեության անհրաժեշտ պայմաններն են ազատ հաղորդակցումն ու շփումը, փոխուսուցումը, փոխադարձ գնահատումը, հետազոտական աշխատանքը, Լրացուցիչ նյութերի համատեղ որոնումը, ստեղծագործական նախագծերի իրականացումը:

Դերային և գործնական խաղերը ու սումնական գործունեության կազմակերպման յուրահատուկ ձև են, որոնց ընթացքում ձևավորվում է համագործակցության, ազատ և անկաշկանդ շփման, փոխադարձ հարգանքի մթնոլորտ, դրսևորվում են ստեղծագործական կարողություններն ու երևակայությունը: Գործնական և դերային խաղերի ընթացքում վերարտադրվում են գրական երկերում պատկերված կենսական իրավիճակները. աշակերտներն անձնապես մասնակից են դառնում այն դեպքերին և իրադարձություններին, որոնք ամփոփում են տվյալ ժամանակաշրջանի ոգին: Գործունեության մեջ ձևավորվում է անձը՝ իր հայացքներով, համոզմունքներով, արժեքային պատկերացումներով: Խաղի ընթացքում աշակերտները հնարավորություն ունեն բնական միջավայրում ընկալելու և իմաստավորելու գրական հերոսների ապրումները, գործողությունների դրդապատճառները. խաղն անձի սոցիալականացման, սոցիումում ինտեգրման անփոխարինելի միջոց է, որում դրսևորվում են ինքնագնահատման, փոխադարձ գնահատման, իրավիճակների վերլուծման, որակական բնութագրման կարողությունները, քննադատական մտածողությունը, ինքնակառավարման որակները, ստեղծագործական ունակությունները, ձևավորվում են մասնագիտական կողմնորոշումները:

Ուսումնական գործընթացում «սուբյեկտ-սուբյեկտ» հարաբերությունների զարգացման արդյունավետության պայման են համագործակցային և ինտերակտիվ մեթոդների կիրառումը. դրանց ընտրությունը թելադրվում է ուսումնական թեմայի ընձեռած հնարավորություններով, առաջադրվող նպատակներով և կանխատեսվող արդյունքներով: Ակնհայտ է, որ ավագ

դպրոցականների ազգային ինքնագիտակցության ձևավորման արդյունավետությանը պայմանավորված է կրթական արդյունավետ միջավայրով, համապատասխան դրդապատճառների ձևավորմամբ, աշակերտ-ուսուցիչ փոխգործակցությամբ, տեղեկատվական և հեռահաղորդակցական տեխնոլոգիաների կիրառմամբ:

Այսպիսով՝ մեր տեսական և փորձարարական հետազոտության արդյունքների վերլուծության հիման վրա հանգեցինք այն եզրակացության, որ հանրակրթական ավագ դպրոցի բնագիտամաթեմատիկական հոսքի դպրոցականների ազգային ինքնագիտակցության զարգացման արդյունավետ իրականացման համար անհրա-

ժեշտ միջոց է հենքային ուսումնական պլանի դպրոցական կամ նախաիրական բաղադրիչի շրջանակներում ներդնել ազգային ինքնագիտակցության զարգացմանն ուղղված հատուկ դասընթաց: Կարևոր է նաև նպատակային կիրառել այլ դասընթացների հնարավորությունները, միջառարկայական կապերի ստեղծումն ու թեմաների ինտեգրումը, համապատասխան մեթոդների ու ձևերի կիրառումը, ինչպես նաև դասղեկի ժամերը՝ համապատասխան թեմատիկայով: Կարևոր միջոց են նաև ինտերակտիվ հաղորդակցական միջավայրը՝ համագործակցային աշխատանքի համար լայն պայմանների ապահովմամբ, դպրոցականների որոնողական-հետազոտական կարողությունների զարգացումը՝ գրական սկզբնաղբյուրներով աշխատելու ընթացքում ազգային ինքնագիտակցությունը զարգացնելու համար, օլիմպիադաները, մտամրցույթները (վիկտորինա), իմացական խաղերը, էքսկուրսիաները, թանգարաններ, մշակութային օջախներ և պատմաճարտարապետական վայրեր այցելությունները:

Դպրոցականների ազգային ինքնագիտակցության զարգացման գործընթացում անչափ կարևոր է դասավանդող ուսուցիչների մասնագիտական կոմ-պետենցիաների ձևավորվածությունը, ուսումնական գործընթացում էթնոմանկավարժության գաղափարների կարևորումը, ազգային ավանդույթների, ծեսերի, տոների դաստիարակչական կողմի հաշվառումը: Կարևոր միջոց ենք համարում նաև ուսումնական բոլոր առարկաների

դասավանդման գործընթացում անաղարտ մայրենիով հաղորդակցվելը, համաշխարհային մշակութային արժեքների ճանաչումն ու գնահատումը տարաբնույթ միջոցառումների ընթացքում, զանգվածային և րատվա-միջոցների տրամադրած տեղեկատվության նկատմամբ քննադատական վերաբերմունքի ձևավորումը:

3.3. Ավագ դպրոցականների ազգային ինքնագիտակցության զարգացմանն ուղղված փորձարարական աշխատանքների վերլուծությունը

Մանկավարժական փորձարարության հաստատող փուլում էմպիրիկ մեթոդների՝ դիտումների, գրույցների, սոցիալոգիայի արդյունքների վերլուծությունը բացահայտեց ստուգողական և փորձարարական խմբերում ընդգրկված աշակերտների ազգային ինքնագիտակցության զարգացվածության մակարդակներն ըստ որոշակի չափանիշների: Չարցումները վերաբերել են մայրենի և գլխի տիրապետմանը, բանավոր և գրավոր կապակցված խոսք կառուցելու կարողություններին, բառապաշարի հարստությանը, ազգային հիմնարար արժեքների իմացությանը, ազգային խորհրդա-նիշների, մշակութային արժեքների, ժողովրդական ավանդույթների, սովորույթների, հոգևոր և աշխարհիկ տոների, հայ ժողովրդի էթնիկական ակունքների, ծագումնաբանության իմացությանը: Արդյունքում արձանագրվել են ստուգողական և փորձարարական խմբերում ընդգրկվածների ազգային ինքնագիտակցության զարգացվածության բարձր, միջին և ցածր մակարդակները՝ ըստ

իմացական, գնահատողական և վարքային-գործունային բաղադրատարրերի, ընդ որում գերակշռել են ազգային ինքնագիտակցության զարգացվածության միջին և ցածր մակարդակները:

Մեր վերլուծության ներքին բացահայտեցին, որ դպրոցականների մեծամասնությունը բավականաչափ ծանոթ է հայ ժողովրդական բանահյուսությանը, ազգային-մշակութային արժեքներին, համաշխարհային տեղաշարժերի արդի ժամանակաշրջանում առանձնահատուկ չի կարևորում մայրենի լեզվի, ազգային հիմնարար արժեքների տիրապետման, ազգային ինքնագիտակցության զարգացման անհրաժեշտությունը: Աշակերտները խուսափում են գեղարվեստական երկերի ընթերցանությունից՝ նախընտրելով սեղմված բնագրերը, որոնք լիարժեքորեն չեն արտահայտում գրական ստեղծագործության լեզվաճանաչման հարստությունը, գաղափարական հագեցվածությունը, կերպարների հոգեբանական հիմնավորվածությունը:

Մեր տեսական հետազոտությունն ու մանկավարժական փորձարարության արդյունքների վերլուծությունը հիմք են տալիս եզրակացնելու, որ ավագ դպրոցի բնագիտամաթեմատիկական հոսքի աշակերտների ազգային ինքնագիտակցությունը զարգանում է իմացական, գնահատողական և վարքային-գործունային բաղադրատարրերի համամասնական զարգացման ուղիով: Իմացական որակները դեռևս բավարար չեն. դպրոցականները պետք է կարողանան օգտվել տեղեկատվական տարբեր աղբյուրներից, կենսական տարբեր իրավիճակներում ունենան հատուկ դիրքորոշում, փաստարկ են իրենց տեսակետը, կարողանան վերլուծել, համարել, հիմնավորել, եզրակացնել, ընդհանրացնել, ունենան տրամաբանական և ստեղծագործական մտածողություն: Ավագ դպրոցականները պետք է ունենան բանավիճելու մշակույթ, հաղորդակցման և համագործակցային կարողություններ, հանդուրժողականություն, պատրաստ լինեն միջմշակութային հաղորդակցման:

Ձևավորող փորձարարության ընթացքում հետազոտության առաջադիր նպատակներն իրականացնելու համար օգտագործել ենք

ոչ միայն հայ գրականության դասաժամերի հնարավորությունները, այլև՝ նախասիրական և լրացուցիչ պարապմունքների, արտադասարանային միջոցառումների, դասղեկի ժամերի, կրկնության, քննության և նախապատրաստմանը և խորհրդատվությանը տրվող ժամաքանակի ընձեռած հնարավորությունները:

Փորձարարության ձևավորող փուլում փորձարարական խմբերում ներդրվել է «Հայ գրականություն և ազգագրություն» արտասուումնական դասընթացը: Նպատակ ուղղված մանկավարժական գործունեությունն իրականացվել է զրույցների, բանավեճերի, քննարկումների, դասախոսությունների, դերային և գործնական խաղերի, թիմային ու անհատական հետազոտական նախագծերի, ուսումնական և արտասուումնական գործունեության այլ ձևերի ընթացքում: Մշակվել են առաջադրանքներ, մոդելավորվել են մանկավարժական իրավիճակներ, ինքնուրույն աշխատանքների, ուսումնահետազոտական նախագծերի թեմաներ:

Դասընթացի յուրաքանչյուր թեմային նախապատրաստվելիս անցկացվել են անհատական և խմբային խորհրդատվություններ, տրվել է համապատասխան տեղեկատվական և բարոյահոգեբանական աջակցություն: Աշակերտները ներգրավվել են ստեղծագործական գործունեության մեջ. մենք աշխատել ենք հնարավորինս ստեղծել զարգացնող միջավայր, հաղորդակցային և համագործակցային մթնոլորտ: Ելույթների, զեկուցումների, ներկայացված տեղեկատվության վերաբերյալ ձևավորվել են գնահատման և ինքնագնահատման թերթիկներ: Մենք ձգտել ենք, որ աշակերտները մշտապես գտնվեն փոխըմբռնման և փոխաջակցության միջավայրում, կարողանան անկաշ-կանդ մթնոլորտում արտահայտել իրենց դիրքորոշումը, համարձակ դատողություններ անեն, իրականացնեն հասկանալի լինելու իրենց պահանջմունքը, ունենան երկխոսության պատրաստակամություն, ազատություն, ինքնատիպություն, ինքնատիրապետում, պատասխանատվություն:

Մեր խորին համոզմամբ՝ «Հայ գրականություն և ազգագրություն» արտասուումնական դասընթացը հնարավորինս կհամալրի դպրոցականների ընդհանուր իմացական և

ճանաչողական որակները, պատկերացումները, քանի որ ընտրվել են այնպիսի թեմաներ և գրական ստեղծագործություններ, որոնք ունեն ընդգծված ազգային-հայրենասիրական շեշտադրումներ և ազգային ինքնագիտակցության զարգացման տեսակետից՝ մեծ ներուժ: Քանի որ առաջարկվող թեմաների գործնականում յուրացման ընթացքում չենք ունեցել հատուկ այդ նպատակով հրատարակված դասագիրք, ուղեցույց կամ ուսումնական ձեռնարկ, ուստի աշխատել ենք հնարավորինս օգտագործել գեղարվեստական բնագրեր, լրացուցիչ նյութեր, քրեստոմատիաներ, հանրագիտարաններ, տեղեկատու գրականություն՝ տպագիր և էլեկտրոնային տարբերակով: Օգտագործել ենք նաև այլ հոսքերի հայ գրականության դասագրքերը (6,7,24,40): Աշխատանքը հնարավորինս գործնական ուղղվածություն ունի, լայնորեն օգտագործվել են ինտեգրվող առարկաների՝ պատմության, հայոց եկեղեցու պատմության, հասարակագիտության, աշխարհագրության, կերպարվեստի, երաժշտության հնարավորությունները:

Թիվ 4 հավելվածում ներկայացված է «Հայ գրականություն և ազգագրություն» արտասուումնական դասընթացի ծրագիրը, նշված են նաև ուսուցման նպատակը և ուսումնական գործունեության հիմնական ուղղությունները:

Փորձարարական խմբերում ընդգրկված աշակերտների հետ տարվող աշխատանքներում մեր հիմնական նպատակն է եղել խթանել ընթերցանության և խոսքային գործունեության դրդապատճառները, ստեղծել այնպիսի իրավիճակներ, որոնցում նրանք կկարողանան ազատորեն արտահայտել իրենց տեսակետը, բնութագրել, նկարագրել, գնահատել, վերլուծել, հիմնավորել, փաստարկել և այլն:

Պարապմունքների ընթացքում կիրառվել են ուսումնական գործունեության կազմակերպման բազմազան ձևեր՝ դասախոսություն, սեմինար, գործնական խաղ, բանավեճ և այլն: Հիմնական շեշտը դրվել է ինքնուրույն հետազոտական աշխատանքների իրականացման վրա: Գրական ստեղծագործությունների ուսումնասիրումը հիմնականում իրականացել է աշակերտների ազատ ընտրությամբ, մենք աշխատել ենք աշակերտների մեջ

հետաքրքրությունն ձևավորել գրողի, նրա ապրած ժամանակաշրջանի մասին, տրամադրել ուշագրավ նյութեր, ասույթներ, հուշեր, տեղեկատվական տարբեր աղբյուրներ:

Հարկ ենք համարում ներկայացնել մեր կողմից իրականացված պարապմունք-ների օրինակներ:

«Հայ ժողովրդական բանահյուսությունն» թեման անցնելիս աշակերտները պետք է հնարավորինս պատկերացումներ ունենան բանահյուսական ժանրերի՝ առաս-պելների, վիպերգերի, դիցաբանական գրույցների, ավանդազրույցների, հեքիաթների, առակների, առած-ասացվածքների, քնարական ստեղծագործությունների մասին: Թեմայի շրջանակներում դիտարկենք քնարական ստեղծագործություններին նվիրված դաս: Դասի նպատակն է աշակերտներին ծանոթացնել հայ ժողովրդական քնարական ստեղծագործություններին, նրանց մեջ համապատասխան վերաբերմունք ձևավորել դրանց նկատմամբ, զարգացնել ժողովրդական այդ ստեղծագործություններում ազգային հատկանիշները տեսնելու և մեկնաբանելու կարողություններ:

Աշակերտներին նախապես հանձնարարվում է գրականություն՝ բանահյուսական քրեստոմատիաներ, ձեռնարկներ, վերլուծական գրականություն, ապա ձևավորվում են համագործակցային խմբեր, կատարվում է աշխատանքի բաժանում: Յուրաքանչյուր խմբի հանձնարարվում է որոշակի առաջադրանք՝ ուսումնասիրել և ներկայացնել քնարական ստեղծագործություններ ըստ թեմատիկ խմբերի՝ աշխատանքային, պանդխտության, սիրային երգեր, գուսանական և ժողովրդական տաղեր,

կենցաղային-ծիսական երգեր՝ հարսանեկան և բնության երգեր, պարերգեր, օրորոցի երգեր և մանկական խաղերգեր, վիճակի երգեր, կատակերգեր և այլն: Առաջադրանքի առանձնահատկությունն այն է, որ բանահյուսական նշված ստեղծագործություններում առավելագույնս խոսցված են ժողովրդի հոգեբանությունը, հավատալիքները, դիցաբանական պատկերացումները, սոցիալական արդարության մոտիվները, կենցաղը, բարքերը, ազգային-քաղաքական տեղաշարժերը, սոցիալ-տնտեսական հարաբերություններն ու

ըմբռնումները, հոլգականությունը, բնության զարմանահրաշքազմա-զանությունը և այլն (25):

Այն, որ աշակերտները հետաքրքրությամբ ու պատասխանատվությամբ են վերաբերվել հանձնարարությանը, վկայում է կատարված աշխատանքների բազմազան մատուցումը: Աշակերտներն ինքնուրույն որոնեցին, մշակեցին անհրաժեշտ տեղեկատվությունը, ընտրեցին նյութի մատուցման գրավիչ ձևեր՝ օգտագործելով համակարգչային գրաֆիկայի հնարավորությունները: Կիրառվեցին նաև ինտերակտիվ մեթոդներ, որոնք հիմնված են երկխոսության, հաղորդակցման վրա: Կիրառված մեթոդիկան նպաստում է դպրոցականների ազգային ինքնագիտակցության ձևավորման բոլոր բաղադրատարրերի զարգացմանը՝

- ազգային հատկանիշների, բնավորության, մտածելակերպի, հոգեկերտվածքի վերաբերյալ գիտելիքների տիրապետմանը,
- տպագիր և էլեկտրոնային աղբյուրներից տեղեկատվության ինքնուրույն որոնմանը, մշակմանը, համակարգմանը,
- ուսուցվող նյութի նկատմամբ դրական դրդապատճառների ձևավորմանը,
- ինքնուրույնության, ստեղծագործական ակտիվության զարգացմանը,
- ազգային-մշակութային արժեքների նկատմամբ հոլգական վերաբերմունքի և գեղագիտական վարքի ձևավորմանը:

Չի կարելի պատկերացնել հոգևոր դաստիարակություն և առանց ազգային ակունքներից բխող մաքուր, զուլալ մեղեդիների: «Ազգային նվագարանների դերը հայ ժողովրդի երաժշտական մշակույթի ասպարեզում» թեման ուսումնասիրելու ընթացքում աշակերտները ծանոթացան ազգային նվագարանների (փողային, լարային, հարվածային) տեսակներին, ունկնդրեցին ազգային մեղեդիներ, հայկական ռիթմիկ պարեղանակներ՝ ավանդական գուռնա-դիոլով:

«Հայ ժողովրդական և հոգևոր երգեր» թեման անցնելիս աշակերտները հնարավորություն ունեցան ծանոթանալ ժողովրդական երգարվեստին, իրենց դուր եկած երգերի տեքստերն

անգիր սովորեցին և կատարեցին դասարանով: Հայ ժողովրդի կյանքում բոլոր հանդիսությունները, ընտանեկան տոնակատարությունները, արարողությունները՝ թե՛ ուրախ, թե՛ տխուր, ուղեկցվել են երգ-երաժշտություններով, ուստի այս թեման անցնելիս պետք է մանրամասն անդրադառնալ հայ ժողովրդական երգերի տեսակներին՝ աշխատանքային երգեր, գուսանական, սիրո, օրորոցային և մանկական խաղերգեր, խաղիկներ, վիճակի և պանդխտության երգեր:

Հոգևոր երգերի տեսակներն ուսումնասիրելիս կարելի է այցելել Էջմիածնի Մայր տաճար՝ ներկա գտնվելու պատարագի արարողությանը: 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին Մակար Եկմալյանն ու Կոմիտասը ուղենշեցին հայ ազգային երգի հետագա ընթացքը՝ հենվելով հոգևոր և ժողովրդական երգարվեստի հազարամյա ավանդույթների վրա: Նրանք մշակեցին հայ հոգևոր երաժշտությունը: Եկմալյանի ու Կոմիտասի հանճարով համաշխարհային ճանաչման հասնող հայոց պատարագը, որը դարեր շարունակ հանդիսացել է հայկական ազգային օպերան, և որի գեղարվեստական արժեքն անհամեմատ բարձր է նրա կրոնական նշանակությունից: Հին և միջնադարյան հայկական երաժշտությունը հայ մշակույթի ամենահարուստ բնագավառներից է: Շատ կողմերով այն բացառիկ է նաև համաշխարհային մշակույթի պատմության մեջ: Ուստի չպետք է վարանել աշակերտներին ծանոթացնելու հոգևոր երաժշտության գանձերին՝ սեր և հետաքրքրություն առաջացնելով դեպի հոգևոր երգն ու երաժշտությունը: Մեր հոգևոր երգերը՝ շարականները, հորինվել են երգելու համար: Ազգային հոգեկերտվածքի ձևավորման գործում կարևոր է ազգային - հոգևոր շարականների գեղեցիկ նմուշների ուսուցումը հղկված, մաքուր հայերենով: Այս թեմաներն անցնելիս ուշագրավ են Վազգեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոսի «Մեր պատարագը» գրքից հատվածների ընթերցումները:

«Հայ ժողովրդի բնավորության, գեղագիտական մտածողության ամենավառ արտահայտչամիջոցները. ազգային պարարվեստ և ազգային հագուստ (տարագ)» թեմայով դասերին հարկ է մի փոքր երկար

նախապատրաստվել : Հնարավորության սահմաններում համագործակցել պարուսույցի հետ, ով նախօրոք աշակերտներին կսովորեցնի մի քանի ազգային պարեր, կխոսի ազգագրական պարավետի, հայկական տարազների ստեղծման, զարդանախշման ծիսագործական նշանակության, զարդանախշերի ձևերի և գունային համակարգի մասին: Բացի այդ, աշակերտները կարող են դիտել հայ ազգային պարերը՝ պարային տարբեր համույթների կատարմամբ:

Ազգային ինքնագիտակցության զարգացման հզոր միջոց է նկարչությունը: Հայ նկարիչների կտավներում խոսացած է ամբողջ Հայաստանը՝ իր լեռներով, թանձր արևով, բերրի արտերով, բարդիներով ու հավերժական Մասիսներով, հայոց ժայռեղեն բնության կոլորիտով: Հարկավոր է դարձնել հայոցականներին հաղորդակից դարձնել այս ամենին՝ հայ հանճարեղ նկարիչների գործերն ուսումնասիրելով: Այդ նպատակով ուսուցիչն իր ձեռքի տակ պետք է ունենա բազմաթիվ նկար-ներով, անվանի նկարիչների կենսագրական տեղեկություններով հագեցած ալբոմ: Աշակերտները կծանոթանան այդ ալբոմի պարունակությանը և իրենք ևս կփորձեն այդպիսի ալբոմներ պատրաստել: Նմանատիպ դասերից հետո, երբ աշակերտները պատկերացում կկազմեն և որոշակի գիտելիքներ կունենան հայ նկարիչների և նրանց գործերի մասին, ցանկալի է այցելել նաև Ազգային պատկերասրահ:

Ազգային ինքնագիտակցության զարգացման առանձնահատուկ միջոց են ազգային արհեստները՝ փայտափորագրությունը, մետաղամշակումը, արծաթագործությունն ու ոսկերչությունը, գորգագործությունն ու ասեղնագործությունը: Առանձին ժամեր կարելի է նվիրել այս թեմաների ոչ միայն ուսումնասիրմանը, այլև գործնական կիրառմանը՝ զուգահեռաբար կազմակերպելով ցուցահանդեսներ, որտեղ կներկայացվեն աշակերտների լավագույն աշխատանքները:

Ազգային ինքնագիտակցության զարգացման գործում կարևոր միջոց են հայկական ավանդական ծեսերը, տոներն ու ավանդույթները: Դաստիարակչական մեծ արժեք են ներկայացնում հայ ազգային

ծեսերն ու ավանդույթները, որոնցից շատերի կրոնական նշանակությունն այլևս չի ըմբռնվում, և դրանք դարձել են գուտ կենցաղային-ծիսական արարողություններ՝ Տրնդեզ(Տյառնընդառաջ), Բարեկենդան, Սուրբ Սարգսի տոն, Ծաղկազարդ, Ջրօրհնեք, Չատիկ, Համբարձում, Վարդավառ: Սրանցից յուրաքանչյուրը մեծ խորհուրդ ունի և աշակերտների մեջ ձևավորում է գեղագիտական ճաշակ, ազգային ոգուն հաղորդակցվելու բարձր մշակույթ: Հաշվի առնելով տոների դաստիարակիչ և համախմբիչ նշանակությունը՝ կարելի է «Ազգային տոներ» խորագրով միամսյակ կազմակերպել՝ հրավիրելով ուսուցիչների, ծնողների, բարձր դասարանների աշակերտների: Ամեն շաբաթ ներկայացնելով որևէ ազգային տոն՝ աշակերտները կփորձեն վերականգնել հազարամյակների խորքից եկող հայ ազգային տոները՝ պահպանելով դրանց ավանդական խորհուրդը: Տոների ժամանակ պատրաստվող համադամ կերակուրներով աշակերտները կհյուրասիրեն ներկաներին՝ դրանով շեշտելով հայ ասպնջական օջախում հյուրին միշտ սրտաբաց ընդունելու և պատվելու սովորությունը:

Ավագ դպրոցականների ազգային ինքնագիտակցության զարգացմանը նպաստող թեմաների մեջ առանձնահատուկ կարևորել ենք նաև սփյուռքահայ գրականության հիմնադիր և ականավոր ներկայացուցիչ Ծահան Ծահնուրի ստեղծագործության ուսումնասիրումը: Առարկայական ծրագրով թեմային հատկացված է ընդամենը 3 ժամ, սակայն նրանում արծարծված ազգային խնդիրները բավականաչափ խոր վերլուծություն են պահանջում, ուստի մենք նպատակահարմար գտանք գրողի ստեղծագործությանն անդրադառնալ նաև մեր առաջարկած թեմատիկայում՝ հաշվի առնելով թեմայի արդիականությունը, ազգապահպան հնչեղությունը, դաստիարակչական ուղղվածությունը: Ձուլման ու նահանջի թեման հայությունը հուզող խնդիր է նաև այսօր, քանի որ աշխարհաքաղաքական տեղաշարժերում այժմ էլ ամենուր նկատելի է նահանջը ազգային արժեքներից և արմատներից:

Պարապմունքից առաջ անցկացվում է համառոտ դասախոսություն եղեռնի,

հայոց երկփեղկված ճակատագրի, սփյուռքի հայու թյան գոյատևման, ազգային արժեքների և գոյապահպանման մասին, ապա կազմակերպվում է անհատական և թիմային հետազոտական աշխատանք: Աշակերտները, ըստ նախասիրության, ընտրում են աշխատանքը՝ գեկուցում ցեղասպանության թեմայով, գեղարվեստական ձևավորում՝ ազգային խորհրդանիշների, նկարների, պատմական հուշարձանների մանրակերտների օգտագործմամբ, երաժշտական ձևավորում և այլն: Շահան Շահնուրի «Նահանջը առանց երգի» վեպում ազգապահպան գաղափարները հյուսված են սիրային պատմությանը, որը ավելի գրավիչ է դարձնում ստեղծագործությունը: Չնայած ստեղծագործությունն արևմտահայերեն է և լեզվաբերականական տեսակետից բավականաչափ բարդ, այնուհանդերձ բոլոր աշակերտները ընթերցեցին ստեղծագործությունը՝ սյուժեն խորությամբ ընկալելու և կերպարները բնութագրելու համար:

Պարապմունքի ընթացքում մեզ համար կարևոր էին յուրաքանչյուր աշակերտի անհատական վերապրումը, մեր ժամանակների բարքերի, սովորույթների, կենցաղի, ազգային նկարագրի, բարոյական ըմբռնումների վերլուծությունները, կենսական տարբեր իրավիճակներում անձնական դիրքորոշման, համոզմունքների ձևավորումը, քննադատական և ստեղծագործական մտածողության զարգացումը, համագործակցային, հաղորդակցական, հանդուրժողականության և անձնային այլ որակների ձևավորումը:

Կիրառված միջոցների և մեթոդների արդյունքում որակական փոփոխություններ արձանագրվեցին դպրոցականների ազգային ինքնագիտակցության իմացական, գնահատողական և վարքային-գործունային բաղադրատարրերի զարգացվածության մեջ: Աշակերտների մեծամասնությունը ազգային-մշակութային արժեքների, ազգային խորհրդանիշների, ակունքների նկատմամբ դրսևորել է հետաքրքրություն: Փորձարարական խմբերում ընդգրկված աշակերտները կարողանում են վերլուծել, ընդհանրացնել, համեմատել, գնահատողական դատողություններ անել: Ակնհայտ է, որ կիրառված մանկավարժական միջոցները՝ գրույցները, բանավեճերը, «Հայ գրականություն և

ազգագրութիւն» արտաուսումնական դասընթացը նպաստեցին ավագ դպրոցի բնագիտամաթեմատիկական հոսքում սովորողների ազգային ինքնագիտակցութեան զարգացմանը. Էապես փոխվեց նաև աշակերտների վերաբերմունքը


ընթացանութեան նկատմամբ:

Մանկավարժական փորձարարութեան վերջին փուլում, արձանագրելու համար իրականացված մանկավարժական միջոցների արդյունավետութիւնը, կրկին կիրառվեցին հաստատող փուլում անցկացված սոցիալոգիական մեթոդները: Մեր նպատակն էր հավաստիանալ, որ կիրառված միջոցների արդյունքում փորձարարական խմբերում կարձանագրվի դրական աճ: Թիվ 1 հարցաթերթի կատասխանների վերլուծութեան արդյունքում արձանագրվեցին ավագ դպրոցականների ազգային ինքնագիտակցութեան իմացական բաղադրատարրի զարգացվածութեան մակարդակները, որոնցում ակնհայտ է արդյունքների դրական աճը փորձարարական խմբերում: Թիվ 9 աղյուսակում և թիվ 5 գծապատկերում արտացոլված են փորձարարական և ստուգողական խմբերի արդյունքները փորձարարութեան սկզբում և վերջում՝ տվյալների համեմատական տարբերութեամբ:

ԱՂՅՈՒՍԱԿ 9

ԱՎԱԳ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆԱԳԻՏԱԿՑՈՒ ԹՅԱՆ ԻՄՏՅԱԿԱՆ ԲԱՂԱԴՐԱՏԱՐԻ ԶԱՐԳԱՑՎԱԾՈՒ ԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐԸ ՓՈՐՁԱՐԱՐՈՒ ԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՄ ԵՎ ՎԵՐՋՈՒՄ (ՏՈԿՈՍՆԵՐՈՎ)

ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐ	ՍՏՈՒԳ. ԽՈՒՄԲ			ՓՈՐՁ. ԽՈՒՄԲ		
	Սկիզբ	Վերջ	Տարբ.	Սկիզբ	Վերջ	Տարբ.
Բարձր	22	38	+16	22	68	+46
Միջին	41	35	-6	44	30	-14
Ցածր	37	27	-10	34	2	-32




ԳՃԱՊՏԱԿԵՐ 5. ԱՎԱԳ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԱՉԳԱՅԻՆ ԻՆՔՆԱԳԻՏԱԿՑՈՒ ԹՅԱՆ ԻՄԱՑԱԿԱՆ ԲԱՂԱԴՐԱՏԱՐԻ ԶԱՐԳԱՑՎԱԾՈՒ ԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐԸ ՓՈՐՁԱՐԱՐՈՒ ԹՅԱՆ ՍԿՉՔՈՒՄ ԵՎ ՎԵՐՋՈՒՄ

Ավագ դպրոցականների ազգային ինքնագիտակցության գնահատողական բաղադրատարրի զարգացվածության մակարդակների դրական աճը արձանագրելու համար փորձարարության վերջում կրկին հանձնարարվեց թիվ 2 հարցաթերթիկը: Ստուգողական և փորձարարական խմբերում արդյունքների համեմատական պատկերն արտացոլված է թիվ 10 աղյուսակում և թիվ 6 գծապատկերում:

ԱՂՅՈՒՍԱԿ 10

ԱՎԱԳ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԱՉԳԱՅԻՆ ԻՆՔՆԱԳԻՏԱԿՑՈՒ ԹՅԱՆ ԳՆԱՅԱՏՈՂԱԿԱՆ ԲԱՂԱԴՐԱՏԱՐԻ ԶԱՐԳԱՑՎԱԾՈՒ ԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐԸ ՓՈՐՁԱՐԱՐՈՒ ԹՅԱՆ ՍԿՉՔՈՒՄ ԵՎ ՎԵՐՋՈՒՄ (ՏՈԿՈՍՆԵՐՈՎ)

ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐ	ՄՏՈՒԳ. ԽՈՒՄԲ			ՓՈՐՁ. ԽՈՒՄԲ		
	Սկիզբ	Վերջ	Տարբ.	Սկիզբ	Վերջ	Տարբ.
	բ	շ	.	բ	շ	.
Բարձր	22	31	+9	23	61	+38
Միջին	45	42	-3	43	32	-11
Ցածր	33	27	-6	34	6	-28




ԳՃԱՊԱՏԿԵՐ 6. ԱՎԱԳ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆԱԳԻՏԱԿՑՈՒ ԹՅԱՆ ԳՆԱՅԱՏՈՂԱԿԱՆ ԲԱՂԱԴՐԱՏԱՐԻ ԶԱՐԳԱՑՎԱԾՈՒ ԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐԸ ՓՈՐՁԱՐԱՐՈՒ ԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՄ ԵՎ ՎԵՐՋՈՒՄ

Ավագ դարձողականների ազգային ինքնագիտակցության վարքային-գործունային բաղադրատարրի զարգացվածության մակարդակների փոփոխությունը բացահայտելու համար մանկավարժական փորձարարության վերջում տրվել է թիվ 3 հարցաթերթիկը, որի արդյունքները, վերլուծելով և համադրելով նախորդ հարցման ընթացքում ստացված տվյալների հետ, արտացոլված են թիվ 11 աղյուսակում և թիվ 7 գծապատկերում:

ԱՂՅՈՒՍԱԿ 11

ԱՎԱԳ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆԱԳԻՏԱԿՑՈՒ ԹՅԱՆ ՎԱՐՔԱՅԻՆ-ԳՈՐԾՈՒՆԱՅԻՆ ԲԱՂԱԴՐԱՏԱՐԻ ԶԱՐԳԱՑՎԱԾՈՒ ԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐԸ ՓՈՐՁԱՐԱՐՈՒ ԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՄ ԵՎ ՎԵՐՋՈՒՄ (ՏՈԿՈՍՆԵՐՈՎ)

ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐ	ՍՏՈՒԳ. ԽՈՒՄԲ			ՓՈՐՁ. ԽՈՒՄԲ		
	Սկիզբ	Վերջ	Տարբ.	Սկիզբ	Վերջ	Տարբ.
Բարձր	24	41	+17	25	62	+37
Միջին	44	35	-9	42	31	-11
Ցածր	32	24	-8	33	7	-26



ԳՃԱՊԱՏԿԵՐ 7. ԱՎԱԳ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆԱԳԻՏԱԿՑՈՒ ԹՅԱՆ ՎԱՐՔԱՅԻՆ-ԳՈՐԾՈՒՆԱՅԻՆ ԲԱՂԱԴՐԱՏԱՐԻ ԶԱՐԳԱՑՎԱԾՈՒ ԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐԸ ՓՈՐՁԱՐԱՐՈՒ ԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՄ ԵՎ ՎԵՐՋՈՒՄ

Այս ախտով՝ ստացված տվյալների հիման վրա կարելի է եզրակացնել, որ փորձարարական խմբում գերակշռում են ազգային ինքնագիտակցության բոլոր բաղադրատարրերի ուղղությամբ բարձր և միջին մակարդակները, զգալիորեն նվազել է ցածր մակարդակ ունեցող աշակերտների թիվը: Ստուգողական խմբում փորձարարության վերջում ստացված արդյունքների տարբերությունը նախկինում ստացված արդյունքների համեմատությամբ նշանակալի է. դա բացատրվում է նրանով, որ նշված խմբում մանկավարժական միջոցներ չեն կիրառվել:

Բացի թվային տվյալներից, որոնք բավականաչափ խոսում են, մեր տեսական և փորձարարական հետազոտության եզրափակիչ փուլում որակական տեղաշարժեր նկատվեցին նաև աշակերտների անձնային որակների և ուսումնական կարողությունների մեջ: Չրոլյցների, բանավեճերի, հանդիպումների, տարբեր միջոցառումների, դասարանային և արտադասարանային շփումների ընթացքում ավագ դպրոցականների մեջ նկատելիորեն արտահայտված էին հաղորդակցային կարողությունները, բանավեճելու ազատությունը, խոսքի մշակույթը, տեսակետ արտահայտելու, հիմնավորելու, դիմացիսին լսելու ունակությունները: Ազգի պատմության, ծագումնաբանության, մշակութային արժեքների, համամարդկային պատմության մեջ հայ ժողովրդի տեղի և

դերի վերաբերյալ դատողություններում առկա են խոր մտքեր, վերլուծություններ, որոնք վկայում են տրամաբանական մտածողության ձևավորվածության մասին: Նկատելիորեն բարելավվել են աշակերտների հետազոտական կարողությունները:

Քանի որ մեր կողմից առաջարկված թեմաները յուրացնելու համար չէինք կարող հանձնարարել կոնկրետ դասագիրք կամ ուսումնական ձեռնարկ, ուստի մենք կարևորել ենք աշակերտների հետազոտական կարողությունների զարգացումը: Հաշվի է առնվել նաև հետևյալ կարևոր հանգամանքը. ավագ դպրոցականները վաղվա ուսանողներն են, որոնց մեջ պետք է աստիճանաբար ձևավորվեն հետազոտական կարողություններ: Մեր նպատակն է եղել, որ աշակերտները կարողանան ինքնուրույն որոնել, մշակել, համակարգել տեղեկատվությունը, այդ տեղեկատվության հիման վրա ձևակերպել ասելիքը, կարողանան լսարանի առջև ելույթ ունենալ, պատրաստ լինեն խմբային քննարկման, երկխոսության, բանավեճի: Կարևոր է, որ աշակերտները դրսևորեն ինքնուրույն մտածողություն, կառուցողական մոտեցում ունենան տարաբնույթ հարցերի ու դրանց լուծման համար առկա տեսակետների նկատմամբ, առաջադրեն վարկածներ, իրականացնեն ստեղծագործական նախագծեր, դրսևորեն երևակայություն և ստեղծագործական ազատություն, բացահայտեն իրենց ներուժն ու կարողանան մասնագիտական ճիշտ ընտրություն կատարել:

Հետազոտության ընդհանուր արդյունքները ցույց են տալիս, որ ավագ դպրոցականների ազգային ինքնագիտակցության զարգացման գործընթացի արդյունավետությունն ապահովվում է մանկավարժական բոլոր միջոցների համալիր կիրառմամբ և ուսումնառաստիարակչական ամբողջական համակարգի բոլոր բաղադրատարրերի փոխկապված, ներդաշնակ գործունեությամբ:

ԵՉՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Անձի ազգային ինքնագիտակցության զարգացումը ոչ միայն ազգային, այլև համամարդկային հիմնախնդիր է և արդյունավետորեն է լուծվում մանկավարժական համակարգված, նպատակաուղղված գործընթացում:
2. Կրթության բովանդակության մեջ ազգային բաղադրատարրի շեշտադրումը նշանակում է դպրոցականների մեջ ձևավորել իր ժողովրդի պատմության և մշակույթի նկատմամբ հարգանք, միջմշակութային երկխոսության մշակույթ, ազգային ինքնագիտակցություն և արժեհամակարգ՝ համաշխարհայնացման արդի գործընթացներում ազգային դիմագիծը պահպանելու և համամարդկային արժեքները գնահատելու համար:
3. Ավագ դպրոցականների ազգային ինքնագիտակցության զարգացման բովանդակությունը ներառում է իմացական, գնահատողական, վարքային-գործունային բաղադրատարրերը՝ ազգային նկարագրի, ոգու և հոգեկերտվածքի իմացության հիման վրա գնահատողական վերաբերմունքի և համարժեք վարքագծի դրսևորմամբ:
4. Ավագ դպրոցի բնագիտամաթեմատիկական հոսքի ուսումնական դաս-ընթացների՝ առարկայական չափորոշիչներով և ծրագրերով սահմանված բովանդակության վերլուծությունը բացահայտեց հիմնախնդրի լուծման ուղղությամբ առկա բովանդակային հնարավորությունները հատկապես հումանիտար առարկաներում: Սովորողների ազգային ինքնագիտակցության զարգացումն արդյունավետ իրականացնելու համար պետք է խորապես հաշվի առնել և շեշտադրել այդ հնարավորությունները՝ սուղ ժամաքանակի պայմաններում սովորողներին տրամադրելով լրացուցիչ տեղեկատվություն և զարգացնելով ինքնուրույն աշխատանքի

հմտությունները:

5. Ավագ դպրոցի բնագիտամաթեմատիկական հոսքի «Հայ գրականություն» դասընթացին հատկացված ժամաքանակը հնարավորություն է չի տալիս լիարժեքորեն լուծել դպրոցականների ազգային ինքնագիտակցության զարգացման

հիմնախնդիրը: Այդ խնդրի արդյունավետ լուծման համար նպատակահարմար է նշված հոսքի հենքային ուսումնական պլանի դպրոցական կամ նախասիրական բաղադրիչում ներդնել դասընթացներ՝ բանահյուսական նմուշների, ազգային-հայրենասիրական շեշտված բովանդակությամբ գրական ստեղծագործությունների, ազգագրական նյութերի ընդգրկմամբ:

6. Ավագ

դպրոցականների ազգային ինքնագիտակցության զարգացման միջոցներ են ուսումնական դասընթացների հնարավորությունների և դասղեկի ժամերի նպատակային կիրառումը, հենքային ուսումնական պլանի դպրոցական կամ նախասիրական բաղադրիչում ներառված դասընթացները, էքսկուրսիաները, այցելությունները մշակութային օջախներ, պատմա-արտարապետական հուշարձաններ ունեցող վայրեր, տարաբնույթ դաստիարակչական միջոցառումները, բանավեճերը, իմացական խաղերը, հանդիպումները մշակույթի գործիչների, գրողների, հերոս գիևվորների և ռազմական գործիչների հետ:

Մեր հետազոտությունը չի

հավակնում սպառնիչ լուծում տալ ավագ դպրոցականների ազգային ինքնագիտակցության զարգացման հետ կապված բոլոր հիմնախնդիրներին: Հետազոտության հետագա ուղղությունները կարող են իրականանալ կրտսեր և միջին դպրոցականների ազգային ինքնագիտակցության զարգացման, տարբերակված ուսուցման բոլոր հոսքերում առարկայական չափորոշիչների մշակման գործընթացում ազգային բաղադրատարրի խորապես հաշվառման, ինչպես նաև ուսուցիչների վերապատրաստման ծրագրերի մշակման ոլորտներում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Աբովյան Խ., Երկեր,- Եր.: Սովետական գրող, 1984, - 719 էջ:
2. Աղայան Էդ., Արդի հայերենի բացատրական բառարան, Ա-2, - Եր.:Յայաստան, 1976, -929 էջ:
3. «Անգլերեն» հանրակրթական ավագ դպրոցի չափորոշիչներ և ծրագրեր, -Եր.: «Ձանգակ-97» հր. տպարան, 2009, - 219 էջ:
4. «Աշխարհագրություն» հանրակրթական ավագ դպրոցի չափորոշիչներ և ծրագրեր, -Եր.: «Տիգրան Մեծ» հր. տպարան, 2009, - 71 էջ:
5. Ասատրյան Լ.Թ., Յակոբյան Գ.Յ., Մանկավարժական հետազոտությունների մեթոդաբանություն: Ուս. Ձեռնարկ.-Եր.: Արտագերս, 2011, -179 էջ:
6. Բախչինյան Յ., Սարինյան Ս., Յայ գրականություն: Յանրակրթական դպրոցի 10-րդ դասարանի դասագիրք.- Եր.: Արևիկ, 2009,- 240 էջ:
7. Գասպարյան Դ., Յայ գրականություն: 10-12-րդ դասարանների ուսուցչի ձեռնարկ: -Եր.: Արևիկ, 2009,- 104 էջ:
8. Գուլակյան Յ., Ազգայնականություն. ինչո՞ւ է դա անհրաժեշտ (հրապարակախոսություն): -Եր.: Էդիթ Պրինտ, 2008, -170 էջ:
9. Գուրևիչ Պ.Մ., Մշակութաբանություն. դասագիրք բուհերի համար (ռուս. թարգմ.՝ Վ. Աբրահամյան), -Եր.: Ձանգակ-97, 2002, -327 էջ:
- 10.Գևորգյան Յ.Ա., Փիլիսոփայություն, պատմություն, մշակույթ,- Եր. ՅՅ ԳԱԱ «Գիտություն» հր., 2005, -528 էջ:

11. Գևորգյան Յ. Ա. Հասարակական երևույթների մշակութային - խորհրդանշային տեսանկյունը //«Մարդ և հասարակություն» գիտամեթոդական ամսագիր, 2007,- հմ. 2, -էջ 3-22:
12. Գևորգյան Յ.Ա., Ազգ, ազգային պետություն, ազգային մշակույթ, -եր.: Նոյյան Տապան, 1997, -72 էջ:
13. Ընդհանուր հոգեբանություն (պրոֆ. Ա.Վ. Պետրովսկու խմբագրությամբ), -եր.: Լույս, 1974, - 543 էջ:
14. Թորգոմյան Լ.Վ., Մանկավարժական արժեքանության հիմունքներ: -եր.: Ան-Ձոն, 2011,- 160 էջ:
15. Լեո, Երկերի ժողովածու, հ.1, -եր.: Հայաստան, 1966, -567 էջ:
16. Խորենացի Մովսես, Հայոց պատմություն, -եր.: Երևանի համալսարանի հրատարակչություն, 1981, -588 էջ:
17. Խուրշուդյան Լ.Ա. Հայոց ազգային գաղափարախոսություն: -եր.: Չանգակ-97, 1999, -282 էջ:
18. «Կենսաբանություն» առարկայի ավագ դպրոցի ծրագրեր և չափորոշիչ - ներ, -եր.: «Տիգրան Մեծ» 2009, - 101 էջ:
19. «Կրթության մասին» ՀՀ օրենքը. հանրակրթական դպրոցի տնօրենի ուղեցույց (պրակ 1), Կրթակարգ, -եր.: ԿԱԻ, 2004, - 298 էջ:
20. Համագործակցային ուսուցում: Ձեռնարկ (Ա.Հովհաննիսյան և այլք), -եր.: Անտարես, 2006, -124 էջ:
21. Հայ մշակույթի նշանավոր գործիչներ (5-18-րդ դարեր), -եր.: Երևանի համալսարանի հր., 1976, - 576 էջ:
22. Հայ մանկավարժներ (կազմեց և խմբագրեց պրոֆ. Ա. Ծավարչյան), Գիրք Ա, -եր.: Հայ պետական հրատ., 1958, - 619 էջ:
23. Հայ մանկավարժներ (կազմեց և խմբ. պրոֆ. Ա. Ծավարչյան), Գիրք Բ, -եր.: Հայ -պետական հրատ., 1961, - 780 էջ:
24. Հայ գրականություն 11: Ավագ դպրոցի ընդհանուր և բնագիտական հոսքերի 11-րդ դաս. դասագիրք/ Վ.Կիրակոսյան, Չ.Ավետիսյան: Խմբ.՝ Վ. Սաֆարյան, -եր.: Մանմար, 2010, - 208 էջ:
25. Հայ բանահյուսության քրեստոմատիա (կազմեց և խմբագրեց՝ Գր. Գրիգորյան), -եր.: Երևանի համալսարանի հր., 1974, -531 էջ:
26. Հայ կականություն - Արիականություն (գերմ. թարգմ. Ա. Տոնոյանի), -եր.: Հեղ. հր., 2001, -152 էջ:

27. Յայկական Սովետական Հանրապետության, հ.1, -Եր., 1974, -720 էջ:
28. Յայկական Սովետական Հանրապետության, հ.6, -Եր., 1980,-719 էջ:
29. «Յայոց լեզու և գրականություն» հանրակրթական ավագ դպրոցի առարկայական չափորոշիչներ և ծրագրեր, -Եր.: «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ, 2009, -107 էջ:
30. «Յայոց եկեղեցու պատմություն»: 10-11-րդ դասարաններ: Մեթոդական ձեռնարկ ուսուցիչների համար /Վ. Ղանդիլյան և ուրիշներ. - Եր.: «Տիգրան Մեծ», 2013. - 160 էջ:
31. «Հանրահաշիվ և մաթեմատիկական անալիզի տարրեր» և «Երկրաչափություն» առարկաների ավագ դպրոցի ծրագրեր և չափորոշիչներ, - Եր.: «Տիգրան Մեծ», 2009. - 143 էջ:
32. «Հասարակագիտություն» հանրակրթական ավագ դպրոցի չափորոշիչներ և ծրագրեր, - Եր.: «Տիգրան Մեծ» հր., 2009, - 62 էջ:
33. Հարությունյան Ս.Բ., Յայ հին վիպաշխարհը, -Եր.: Արևիկ, 1987, - 180 էջ:
34. Հովակիմյան Գ.Պ., Ազգային ավանդույթների և սովորույթների հոգեբանություն, Երևան- 2005, - 218 էջ:
35. Նալչաջյան Ա.Ա., Էթնիկական հոգեբանություն: Բուհական դասագիրք: -Եր.: Զանգակ-97, 2001,- 544 էջ:
36. Նալչաջյան Ա.Ա., Հոգեբանության հիմունքներ, - Եր.: Հոգեբան, 1997, XVIII, - 648 էջ:
37. Նալչաջյան Ա.Ա., Մկրտչյան Ս., Էթնիկական մանկավարժություն: Բուհական դասագիրք: - Եր.: Զանգակ-97, 2003, -312 էջ:
38. Նալչաջյան Ա.Ա., Էթնիկական մանկավարժություն: Բուհական դասագիրք: Պրակ 2: -Եր.: Զանգակ-97, 2002, -48 էջ:
39. Նահապետյան Ռ.Ա., Յայ ազգագրության պատմություն, մաս 1, -Եր.: ՅեղիՆա-կային հր., 2010, -152 էջ:
40. Ներսիսյան Վ., Մնացականյան Լ., Յայ գրականություն: Ավագ դպրոցի ընդ-հանուր և բնագիտամաթեմատիկական հոսքերի 10-րդ դաս. դասագիրք: -Եր.: Մակմիլան-Արմենիա, 2009, -208 էջ:
41. Նժդեհ Գ., Հատընտիր, -Եր.: Յայաստան, 2001,- 405 էջ:
42. Նժդեհ Գ., Հավատամք, -Եր.: Յանուն հայրենիքի, 2011, -88 էջ:
43. Ծանթ Լ., Երկեր, -Եր.: Սովետական գրող, 1989, -864 էջ:

44. «Պատմութիւն» («Յայտն պատմութիւն» և «Յամաշխարհայիւ պատմութիւն») հանրակրթական ավագ դպրոցի չափորոշիչներ և ծրագրեր, - Եր.: «Տիգրան Մեծ» հր., 2009, - 199 էջ:
45. Վարդուհան Ս.Տ., Մանկավարժութիւն պատմութիւն: Հնագույն շրջանից մինչև վերածնունդ: Ուս. ձեռնարկ, - Եր.: Հեղ. հր., 2008, - 164 էջ:
46. Ուշինսկի Կ.Դ., Մանկավարժական ընտիր երկեր, 2 հատորով, հ. 1, - Եր.: Հայ-պետուսմանկիրատ, 1959, -813 էջ:
47. Փիլիսոփայական բառարան (Ս.Ս. Ռոզենտալի խմբագրութեամբ), - Եր.: Հայաստան, 1975, -467 էջ:
48. Аверкин В.Н. Теоретические проблемы регионализации образования/ В.Н. Аверкин, А. М. Цирульников. - Новгород: НРЦРО, 1998. - 64 с.
49. Айварова Н. Г. Воспитание позитивного отношения к себе как к личности средствами народной педагогики /Н.Г. Айварова// Этнопедагогизация целостного учебно-воспитательного процесса: материалы Всерос. науч.-практ. конф. - Йошкар-Ола: Марийский институт образования, 2003. - 107- 109 с.
50. Ананьев Б.Г. Человек как предмет познания/Б.Г.Ананьев.-М.: Наука,2000. -351 с.
51. Андреев А.Л. Типы исторического самосознания /А.Л. Андреев//Воспитание исторического и национального самосознания: Сборник статей, - Красноярск: КрасГУ, 2001, - 11 - 12 с.
52. Арутюнян Ю.В. Социально-культурное развитие и национальное самосознание / Ю.В. Арутюнян // Социологические исследования. 1990.-№7.- 42-49 с.
53. Арутюнян Ю.В. Этносоциология: пройденное и новые горизонты / Ю.В. Арутюнян, Л.М. Дробижева // Социологические исследования. 2000. - № 4.-11 - 21 с.
54. Афанасьев И.Н. Этнический характер и детерминирующие условия среды: монография / И. Н. Афанасьев, В. А. Алексеев. - Чебоксары: Чебоксарский филиал МГОПУ им. М.А. Шолохова, 2003. - 214 с.
55. Ахмерова А. В. Особенности этнического самосознания подростков / А. В. Ахмерова // Этногенез и цивилизационные перспективы в образовании России: материалы международной науч.-практ. конф. - Новосибирск: Изд-во НГПУ, 2004. - 506 - 508 с.
56. Ахмерова А.В. Этническое самосознание как элемент структуры самосознания личности/А.В. Ахмерова//Этногенез и цивилизационные перспективы в образовании России: материалы международной науч.-практ. конф. - Новосибирск: Изд-во НГПУ, 2004.- 91-93 с.

57. Бабаков В.Т. Национальное сознание и национальная культура (методические проблемы) / В.Т. Бабаков, В. М. Семенов. - М.: ИФРАН, 1996. - 70 с.
58. Безбородова Н.Я. Освоение национальной культуры как фактор психологической защиты личности / Н.Я. Безбородова // Непрерывное педагогическое образование: состояние, тенденции, перспективы развития : сб. статей в 2 ч. Ч. 2. - Липецк ; М.: Изд. центр ЛГПУ, 2000. - 31-33 с .
59. Бердяев Н. А. Русская идея. Судьба России / Н.А. Бердяев. - М.: СВАРОГИК, 1997. - 541с.
60. Бромлей Ю.В. Очерки теории этноса / Ю.В. Бромлей. - М.: Наука, 1983. 411с.
61. Бромлей Ю.В. Этнос и этнография / Ю.В. Бромлей. - М.: Наука, 1973. - 333 с.
62. Буторина Т.С. Воспитание патриотизма средствами образования / Т.С. Буторина, Н. П. Овчинникова. - СПб.: КАРО, 2004. - 224 с.
63. Волков Г.Н. Этнопедагогика: Учеб. пособие. –М.: Изд. ц.-р “Академия”, 1999, - 168 с.
64. Вундт В. Проблемы психологии народов // Тексты по истории социологии 19-20 веков, Хрестоматия. -М.: Наука, 1994. -75-90с.
65. Выготский Л.С. Лекции по психологии/Л.С. Выготский. - М.: Союз, 2006. - 144 с.
66. Вяткин Б.А. Этническое самосознание как фактор развития индиви-дуальности / Б. А. Вяткин, В.Ю. Хотинец // Психологический журнал.1996.- №5. - Т.17. - 69 - 75 с.
67. Гаджимурадова З.М. Этническое самосознание личности: структура, содержание, генезис / З.М. Гаджимурадова. - М.: Прометей, 2006. - 227с.
68. Гаранин Л.А. Национальный и региональный компоненты Государственного образовательного стандарта / Л.А. Гаранин, И.П. Смирнов. - М.: Ореол,1997. - 140 с.
69. Геллер Г.А.К вопросу о соотношении национального и интернационального компонентов в современном воспитании / Г.А. Геллер// Национальное и общечеловеческое в культуре и образовании: межвузовский сб. науч. трудов / под ред. А.В. Репринцева. - Курск: Курский гос. пед. университет, 2000. - 75 -80 с.
70. Геродот. История // Историки античности. Т. 1. Древняя Греция. -М.: Правда, 1989. - 31 - 202 с .
71. Гершунский Б.С. Философия образования для XXI века: уч. пособие для самообразования/ Б.С. Гершунский. - Изд. 2-е, перераб. и доп.– М.: Педагогическое общество России, 2002. – 512 с.
72. Гожева О.К. Образование и этническое в культурном диалоге и диалоге культур. Научная монография. СПб., 2008. - 158 с.
73. Гумилев Л.Н. От Руси до России: очерки этнической истории / Л.Н. Гумилев. - М.: Айрис-пресс, 2007. - 320 с.
74. Дробижева Л.М. Этничность в современном обществе. Этнополитика и социальные практики в Российской Федерации / Л.М. Дробижева// Мир России. 2001.- Т.10.- № 2.-167-180 с.
75. Ефимова Д.В. Национальное самосознание и межэтническая толерантность: Монография / Д.В. Ефимова, Ю.А. Макаров. -Пенза: ПГПУ им. В.Г. Белинского, 2004. - 311 с.

76. Зимняя И.А. Личностно-деятельностный подход как основа организации образовательного процесса /И.А. Зимняя// Стратегия воспитания в образовательной системе России: подходы и проблемы/ под ред. И.А. Зимней. - Изд. 2-е, доп. и перераб. - М.: Издательский сервис, 2004. - 162-167 с.
77. Иванов А.В. Особенности этнического самосознания подростков / А.В. Иванов // Этногенез и цивилизационные перспективы в образовании России: материалы Международной науч.-практ. конф.-Новосибирск:Изд-во НГПУ,2004.-390- 393 с.
78. Иванова А.А. Психология этнической идентичности личности / А.А. Иванова. - Краснодар: КГУ, 2001. - 140 с.
79. Ильина И.В. Национально-региональный компонент в образовании/И.В. Ильина//Национальное и общечеловеческое в культуре и образовании: межвузовский сб. науч. трудов / под ред. А.В. Репринцева. - Курск: Курский гос. пед. университет, 2000. - 115 -116 с.
80. Кобылянский В.А. Национальная идея и воспитание патриотизма / В.А. Кобылянский// Народное образование. 1998. -№ 5. - 52 - 58 с.
81. Краткий психологический словарь/ под общей ред. А.В. Петровского и М.Г. Ярошевского / - Ростов- на- Дону: Феникс, 1998.- 512 с.
82. Леви – Строс К. Печальные тропики, - М.: Наука, 1984. - 220 с.
83. Лихачев Б.Т. Методологические основы педагогики / Б. Т. Лихачев. - Самара : Изд-во СИУ, 1998. - 200 с.
84. Мухина В.С. Возрастная психология: феноменология развития, детство, отрочество / В.С. Мухина. - М.: Академия, 2003. - 456 с.
85. Национальное и общечеловеческое в культуре и образовании: Межвуз. сб. науч. трудов / Под ред. А.В. Репринцева - Курск: Изд-во Курского гос. пед. ун-та, 2000. - 336 с.
86. Новичков В.Б. Концепция создания регионального учебного курса / В.Б. Новичков // Педагогика.- 2000.- № 4. - 8 - 14 с.
87. Образование и взаимодействие культур. Сборник научных трудов. Вып. 2 / Отв. ред. Н.А. Матвеева, В.И. Матис. - Барнаул: БГПУ, 2001. -197 с.
88. Олейникова О.Д. Социокультурная среда как фактор формирования личности / О.Д. Олейникова // Этногенез и цивилизационные перспективы в образовании России: материалы Международной науч. - практ. конф. - Новосибирск; Изд-во НГПУ, 2004. - 93 - 98 с.
89. Панькин А.Б. Формирование этнокультурной личности: учеб, пособие для студ. высш. учеб, заведений / А.Б. Панькин. - М.: Большая медведица; Элиста: Калмыцкий государственный университет, 2004. - 272 с.
90. Панькин А.Б. Этнокультурный парадокс современного образования: Монография. – Волгоград: Перемена, 2001. – 446 с.
91. Пиаже Ж., Моральное суждение у ребенка. М.: Академический Проект, 2006. – 480 с.
92. Пиаже Ж., Генетическая эпистемология .- СПб: Питер, 2004. - 160с.
93. Полянский В.С. Историческая память в этническом самосознании народов // СОЦИС. 1999.- № 3, - 17 с.

94. Реальность этноса. Национально-региональный компонент в образовании: содержание, структура, функции: Мат.лы 2-го междунар. науч.– практ. конференции. СПб: РГПУ им. А. И. Герцена, 2001. – 281 с.
95. Ребане Я.К. Информация и социальная память. К проблеме социальной детерминации познания // Вопросы философии. 1982. - № 8. – 46 с.
96. Ретенгер С.А. Формирование этнического самосознания молодого поколения/ Этногенез и цивилизационные перспективы в образовании России: Материалы международной науч.- практ. конф. – Новосибирск: Изд-во НГПУ, 2004. –637-639 с.
97. Рубинштейн С.Л. Основы общей психологии. – СПб.: Питер, 2000. – 712 с.
98. Селевко Г.К. Современные образовательные технологии: Учебное пособие.– М.: Народное образование, 1998. – 256 с.
99. Селиванова Н.Л. О современных подходах к воспитанию. // Стратегия воспитания в образовательной системе России: подходы и проблемы. – М.: “Издательский сервис”, 2004. - 127-130 с.
100. Смирнов С.Н. Технологии в образовании // Высшее образование в России. 1999. – №1. – 109-112 с.
101. Современная этнопсихология. Хрестоматия / Под общ. ред., А.Е. Тараса, – Мн.: Харвест, 2003. - 368 с.
102. Солдатова Г.У. Межэтническое общение: когнитивная структура этнического самосознания // Познание и общение. – М., 1988. - 111-125 с.
103. Сорока – Росинский В. Н. Педагогические сочинения/ Сост. Губко А.Т.–М.: Педагогика, 1991. - 239 с.
104. Стефаненко Т.Г. Методы этнопсихологического исследования.–М.: МГУ, 1993. - 80 с.
105. Сулова Э.К. Теоретические основы воспитания у детей этики межнационального общения // Вестник ЧГПУ им. И. Я. Яковлева. 2000.- № 5,- 13-23 с.
106. Тоидис В.П. Этносоциальное самосознание как феномен культуры.– Карачаевск. 1999. - 244 с.
107. Тюнников Ю.С. Национальное самосознание: сущность и принципы формирования.– Казань, 1994. - 90 с.
108. Ферцер В.Ю. Воспитание национального самосознания //Этногенез и цивилизационные перспективы в обр. России: Материалы Международной науч. практ. конф. –Новосибирск: Изд-во НТПУ, 2004. - 622 с.
109. Харисов Ф.Ф. Национальная культура и образование,-М.: Педагогика. 2000.- 272 с.
110. Хотинец В.Ю. Формирование этнического самосознания студентов в процессе обучения в вузе // Вопросы психологии. 1998. - № 3, - 31- 43 с.
111. Швейцер Альберт, Культура и мировоззрение //Школа духовности, 2002. - № 4, - 39-43 с.
112. Эриксон Э. Идентичность: юность и кризис. – М.: Флинта, 2006. - 342с.
113. Этнический ренессанс парадокс XX века // Диалог. – 1990. -№15, -38-45 с.
114. Эфендиев Ф.С. Этнокультура и национальное самосознание–Нальчик: Эль-Фа, 1999. - 303 с.

115. Юм. Д. Трактат о человеческой природе. – Мн.: ООО “Попурри”. 1998. - 720 с.
/filosof.historic.ru/books/item/FOO/SOO/z0000185/
116. Юнг К.Г. Архетип и символ. - М.: Ренессанс, 1991. - 304 с.
117. Ярошук Н.З. Этническое и национальное. Философия и будущее цивилизации. Т.3. Тезисы докладов и выступлений IV Российского философского конгресса,-М., 2005. - 672 с.
118. readr.ru/shar/-monteske-izbrannie-proizvedeniya-o-duhe-zakonov.html
119. ru.wikipedia.org/wiki/Дюркгейм-Эмиль
120. libelli.ru/works/herderig.htm
121. www.psylib.org.ua/books/kanti02/index.htm
122. www.vehi.net/nlossky/istoriya/index.html

Հ Ա Վ Ե Լ Վ Ա Յ 1

Հ Ա Ր Ց Ա Թ Ե Ր Թ Ի Կ 1

1. Թվարկե՛ք հայոց հեթանոսական դիցարանի աստվածներին՝ նշելով, թե յուրաքանչյուրն ինչ է մարմնավորում:
2. Թվարկե՛ք առասպելները և վիպերգերը՝ ըստ ժամանակագրական հաջորդականության, բնութագրե՛ք հերոսներին:
3. Նշեցե՛ք հայ ազգային-հոգևոր նկարագիրն արտացոլող տարբեր ժանրերի գրական ստեղծագործություններ:
4. Նկարագրե՛ք հայ ազգային որևէ ծես, ավանդույթ, հոգևոր կամ աշխարհիկ տոն:

Հ Ա Ր Ց Ա Թ Ե Ր Թ Ի Կ 2

1. Ճանոթ էք արդյոք ժողովրդական բանահյուսությանը՝

ա/այո

բ/ոչ լիովին

գ/ոչ

2. Ունկնդրում էք ժողովրդական երգեր, ազգային մեղեդիներ՝

ա/այո

բ/ոչ միշտ

գ/ոչ

3. Ունկնդրում էք արդյոք ազգային-հոգևոր երաժշտություն՝

ա/այո

բ/որոշ չափով

գ/ոչ

4. Հետաքրքրվում էք արդյոք ազգային պարավեստով՝

ա/այո

բ/ոչ լիովին

գ/ոչ

5. Ճանոթ էք արդյոք ժողովրդական արհեստներին՝

ա/այո

բ/ոչ լիովին

գ/ոչ

6. Հետաքրքրվում էք հայ էթնոսի ծագումնաբանությամբ, պատմական ակունքներով՝

ա/այ n
բ/որոշ չ ակոսվ
գ/ոչ

Հ Ա Վ Ե Լ Վ Ա Ն 3

Հ Ա Ր Ց Ա Թ Ե Ր Թ Ի Կ 3

1. Ընթերցող՝ մ եք արդյոք գեղարվեստական գրականությանը՝

ա/այ n
բ/ոչ միշտ
գ/ոչ

2. Ազգամիջյան հարաբերությաններում կարևոր է արդյոք ազգային ինքնագիտակցության զարգացվածությանը՝

ա/այ n
բ/դժվարանում եմ պատասխանել
գ/ոչ

3. Ազգային ինքնագիտակցության զարգացվածությունը նպաստում է արդյոք համամարդկային արժեքների տիրապետմանը՝

ա/այ n
բ/դժվարանում եմ պատասխանել
գ/ոչ

4. Համաշխարհայնացման արդի գործընթացներում ազգային ինքնագիտակցության զարգացվածությունը կարևոր է արդյոք միջմշակութային երկխոսության իրականացման համար՝

ա/այ n
բ/դժվարանում եմ պատասխանել
գ/ոչ

